ԼՈՒՍԱՅԻՆ

1978

Դ

ԱՀ 146



ԼԵ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Վաղարշ

1978



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ԿԱԶՄԱՎՈՐՄԱՆ 80-ԱՄՅԱԿԻ ԱՌԹԻՎ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿԵԱՆԻՆ, ԲԱՐԵՁԱՆ ԱՌԱՁՆՈՐԴԻՆ ԱՐԵՒԵԼԵԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ, ՀԱՐԱՁԱՏ ՈՐԴԻՈՑ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՑ ՍՐԲՈՑ ԷՋՄԻԱԾՆԻ, ՈՂՋՈ՛ՅՆ ՀԱՅՐԱԿԱՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

ՆԻՒ ԵՈՐՔ

Աստուծոյ ողորմութեամբ, երբ Դուք և համայն ամերիկահայ մեր ժողովուրդը կը պատրաստուիք տօնախմբել ութսունամեակը տիրախնամ թեմիդ կազմութեան, Մեր մտածումը կը սահի, կ'երթայ անցեալ տարիներու ընդմէջէն և Մեր գիտակցութեան մէջ կը պայծառանայ նուիրական յիշատակը «հայրենեաց վշտի նուագող» Հայրապետին, Ամենայն Հայոց Հայրիկին, որ իր 8 յունուար 1894 թուակիր սրբատառ կոնդակով օրհնեց համայն հայութիւնը Միացեալ Նահանգաց և հոչակեց հիմնադրումը և կազմակերպումը Ամերիկայի հայոց թեմին, Մայր Աթոռ սուրբ Էջմիածնի հոգևոր իշխանութեան ներքոյ:

Մեծ Հայրապետի օրհնութիւնը շնորհ և լոյս բաշխեց նորաստեղծ թեմի եկեղեցիներուն ու ժողովուրդին: Սուրբ Էջմիածնի օրհնութեան ներքոյ, տարիներու հոլովոյթով անոնք հետզհետէ զօրացան, աճեցան ու ծաղկեցան և մեր օրերուն դարձան ամենաբազմամարդ ու ամենահզօր կրօնական կազմակերպութիւնը մեր առաքելական Մայր եկեղեցւոյ, հայ ափիւռքի տարածքի վրայ:

Մենք, ձեր Հայրապետը, անհունօրէն միսիթարուած ենք ամերիկահայ թեմի մէջ գործող շէն ու պայծառ եկեղեցիներով, կրթական, մշակութային-բարեսիրական հաստատութիւններով, եկեղեցասէր երիտասարդաց ու տիկնանց կազմակերպութիւններով, որոնք Ձեր առաջնորդութեան ներքոյ և հոգևոր հովիւներու ժրաջան գործակցութեամբ, նուիրուած են իրենց սուրբ առաքելութեան, գերագոյն նպատակ ունենալով անաղարտ ու կենդանի պահել իրենց պապենական լոյս հաւատքը, հոգևոր ժառանգութիւնը, մեր մայրենի լեզուն և հայ հոգիի անմար կրակը:

Դուք, ամերիկահայ հոգևոր սպասաւորներ և հաւատացեալ զաւակներ Մեր, հաւատարիմ մնացէք սուրբ Գրիգոր Լուսաւորչի աստուածառաք տեսիլքին, հաւատարիմ մնացէք Խրիմեան Հայրիկի ուխտին, հաւատարիմ մնացէք հայոց ներկայ վերածնունդին, միշտ լաւատեսութեամբ դէպի մեր Մայր եկեղեցւոյ ու ազգի պայծառ ապագան:

Եւ ի՞նչ երջանիկ զուգադիպութեամբ, դուք նոյն այս օրերուն հպարտութեամբ կը յիշատակէք նաև տասնամեայ յոբելեանը՝ համայն ամերիկահայութեան քրիստոնէական հաւատքի խորհրդանիշը հանդիսացող՝ Նիւ Եորքի սուրբ Վարդան Մայր տաճարին, զոր Մեր իսկ ձեռքով օծելու բախտաւորութիւնը ունեցանք Մենք, տասը տարիներ առաջ: Սուրբ Վարդան տաճարը, Միացեալ Նահանգաց աստուածասէր հողին վրայ բարձրացող փառայեղ վկայութիւնն է հայկական քրիստոնէական լոյս հաւատքին և հայ դասական ճարտարապետութեան, որով, այո՛, արդարօրէն կրնանք հպարտ ըլլալ: Մեր ամենաջերմ պատգամն է որ սուրբ պահէք անունը ձեր հայ քրիստոնեայի, անունը Հայաստանեայց առաքելական մեր Մայր եկեղեցւոյ և լոյսը՝ Աստուծոյ շունչով շաղախուած հայ մշակոյթին:

Թող Աստուած հարցն մերոց, իր սուրբ Հոգիով զօրացնէ Ձեզ, ձեր հոգևոր դասը և համայն Մեր հաւատացեալ զաւակները յԱմերիկա և լուսաւորէ ձեր բոլորիդ առաքելութեան ճանապարհը, ի փառս մեր Տիրոջ և Փրկչի Յիսուսի Քրիստոսի և Անոր երկրպագու հայ բարեպաշտ ժողովուրդի:

«Արդ, հսկեցէք, հաստատուն կացէք ի հաւատս, ժրացարուք, զօրացարուք: Ամենայն ինչ ձեր սիրով եկեղեցի» (Ա Կորնթ. ԺԶ 14). ամէն:

ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ԵՒ ԿԱԹՈՂԻԿՈՍ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Տուաւ կոնդակս ի 31 մարտի
1978 փրկչական ամի,
և ի տումարիս հայոց ՌՆԻԷ
ի մայրավանս սրբոյ Էջմիածնի
ՀԱՄՐ. 902

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՌԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՏԱՐԵԿԱՆ ԹԵՄԱԿԱՆ ՊԱՏԳԱՄԱՎՈՐԱԿԱՆ ԺՈՂՈՎԻՆ

ԳԵՐԱԾՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԱՌԱՋՆՈՐԴ ԱՌԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Սիրելի Սրբազան,

Ուրախ սրտով Մեր հայրական սիրո ողջույնը և հայրապետական օրհնությունը կհղենք Ձերդ Սրբազնության և թեմական պատգամավորական ժողովիդ աստվածասեր անդամներուն, որոնք այս օրերուն Ձեր շուրջ հավաքված են քննարկելու անցնող տարեշրջանի թեմիդ գործունեությունը և կազմելու հառաջիկա տարեշրջանի աշխատանքի ծրագիրները։

Ահա երջանիկ առիթ մը, երբ տիրախնամ թեմիդ եկեղեցական համայնքներեն եկած ներկայացուցիչներ, սիրտ սրտի տված, եղբայրական զգացումներով համակված և մանավանդ մեր սուրբ եկեղեցվո գերագույն շահերու գիտակցությամբ, անգամ մը ևս պիտի վերանորոգեն իրենց ուխտը՝ անձնվիրաբար ու համերաշխորեն աշխատելու, միշտ ավելի անաղարտ ու պայծառ պահելու համար հայոց քրիստոնեական լույս հավատքը և հոգևոր ու մշակութային արժեքները հայ ոգեկանության, այնպես ինչպես ավանդեցին մեզի բոլորիս մեր լուսաբնակ նախնիք։

Մեր օրերում, երբ գրեթե ամեն տեղ, կրոնական ու բարոյական արժեքները տագնապալի շրջան մը կանցնեն, մենք՝ հայ քրիստոնյաներս, ի խնդիր մեր հոգևոր ու մշակութային գոյատևման, պետք է ամուր կանգնած մնանք դարերու փորձով նվիրագործված մեր եկեղեցական ազգային ավանդությանց վեմին վրա, առանց տարվելու նորելուկ մակերեսային երևույթներե, որոնք կուգան ու կանցնին ինչպես արմատներ չունեցող ամեն նորություն: Դառնորեն կսխալին բոլոր անոնք որ կկարծեն թե ամեն նորություն հառաջդիմություն է: Մանավանդ կրոնաբարոյական կյանքի մակարդակի վրա, չկա իրական հառաջդիմություն առանց դարերու տքնությամբ նվիրագործված արժեքներու: Ներկան ոգեկանության ավիշ կստանա անցյալեն, և ոգեկան նոր թռիչք՝ ապագայի տեսիլքներեն:

Ոգեկանության զարգացման ճանապարհին, ներկան վավերական ու մնայուն ոչինչ կրնա ստեղծել այսօր առանց անցյալի ժառանգության լույսին: Եվ նույն անցյալի լույսով է նաև որ ներկան կրնա բանալ նոր հորիզոններ դեպի ապագան: Ներկան ստեղծարար միջնորդն է, կիզակետն է անցյալի ու ապագայի միջև:

Եթե այս պահուս Մեզմե պատգամ մը կսպասեք, անավասիկ ձեզի կբերենք Մեր այս խոսքերը, հորդորելով ձեզ բոլորդ որ նույն գիտակցությամբ լուսավորված բանաք դռները գործունեության ձեր նոր տարեշրջանին:

«Այսուհետև եղբարք իմ սիրելիք, հաստատուն եղերուք, անշարժ կացէք, առատել լերուք ի գործս Տեառն յամենայն ժամ. գիտասջիք՝ զի վաստակքն ձեր ոչ են ընդունայն առաջի Տեառն» (Ա Կորնթ. ԺԵ 58):

«Օրհնութիւն և սէր և խաղաղութիւն յարուցեալ Փրկչին մեր Յիսուսի Քրիստոսի եղիցին ընդ ձեզ այժմ և միշտ». ամեն:

ՎԱՉԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 ապրիլ 1978 թ.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԱՄԵՐԻԿԱՅԻ ՀԱՅՈՑ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻ ՀՈԳԵՎՈՐԱԿԱՆԱՑ ՀԱՄԱԳՈՒՄԱՐԻՆ

ԳԵՐԱՇՆՈՐՀ Տ. ԹՈՐԳՈՄ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՄԱՆՈՒԿՅԱՆԻՆ, ԲԱՐԵՋԱՆ ԱՌԱՋՆՈՐԴ ԱՐԵՎԵԼՅԱՆ ԹԵՄԻՆ ՀԱՅՈՑ ՄԻԱՑՅԱԼ ՆԱՀԱՆԳԱՑ

ՆՅՈՒ ՅՈՐՔ

Սիրելի Սրբազան,

Մեզի համար քաղցրորեն մխիթարական է, ամեն տարի տիրախնամ թեմիդ հոգևորականաց, Մեր հայրական ողջույնը և օրհնությունը հղել, տարեկան իրենց համագումարին առթիվ: Մեզի կթվի թե այսօր ձեր մեջ կըգըտնվինք, ձեր կողքին, բերելու բոլորին Մեր գնահատանքի և քաջալերանքի խոսքը:

Գնահատանքի խոսք, այո, որովհետև քաջ կգիտակցինք թե ուխտապահ ու պարտաճանաչ հոգևոր սպասավորներու համար ծանր է լուծը զոր կկրեն և բազում են դժվարությունները, որոնց կբախին ամեն քայլափոխին: Բայց երանի այն հոգևորականներուն, որ գիտեն հաղթահարել բոլոր այդ դժվարությունները, աներեր հավատքով, անխառն սիրով ու անձնազոհ աշխատանքով:

Նաև Մեր քաջալերանքի խոսքը թեմիդ բարեջան հովիվներուն, որ անոնք անստվեր պահեն իրենց լավատեսության ոգին և հավատան որ սիրով ու նվիրումով կատարված աշխատանքը անպայման պտղառատ կըլ-

լա։ Կձախողին անոնք միայն որ անկեղծորեն չեն հավատար իրենց առաքելության, որոնք անձնատուր կըլլան եսակեդրոն մղումներու, որոնք շուտ կհոգնին և դյուրին նամփան կփնտրեն, որոնք վառ չեն պահեր հույսի լապտերները իրենց հոգիներուն, նմանվելով հիմար կույսերուն։

Բայց վստահ ենք, թե Ձերդ Սրբազնության հոգևոր առաջնորդության ներքև, տիրախնամ թեմիդ հոգևորականները՝ կարգ ու կանոնի և սուրբ առաքելության գիտակցությամբ տոգորված, իրենց կարելին ի գործ կդնեն իրենց խնամքին հանձնված հոգիներուն բաշխելու՝ սուրբ Ավետարանի լույսը, մեր առաքելական եկեղեցվո պատմության ու դպրության ոգին, մեր ազգային մշակույթի հոգևոր արժեքները, մեր վերածնած ազգի և անոր աճող ու ծաղկող մայր հողի սերն ու պաշտամունքը։

Այսպես է, միայն այսպես է որ դուք և մենք բոլորս պիտի կարողանանք բարձր ու վառ պահել հայկական ոգեկանության ջահը, աշխարհի վրա ուր որ ալ գտնվինք։ Այդ ազգային ոգեկանության ջահով է միայն որ անցյալի մեջ տեղ մը գրաված ենք քաղաքակրթության պատմության հորիզոնին վրա և նույն այդ ազգային ոգեկանության ջահով է որ նաև մեր օրերուն և գալիք օրերուն պատվո տեղ մը պիտի կարողանանք պահպանել մարդկության մեջ։

«Զի զոր ինչ սերմանէ մարդ, զնոյն և հնձեսցէ. որ սերմանէ ի մարմնի իւր, ի մարմնոյ անտի հնձեսցէ զապականութիւն. որ սերմանէ ի Հոգին՝ ի Հոգւոյ անտի հնձեսցէ զկեանսն յաւիտենից։ Այլ զբարիս գործեալ մի ձանձրասցուք, զի ի ժամանակի իւրում հնձեսցուք առանց լրանելոյ» (Գաղատ. Զ 8—10)։

Մայր Աթոռ սուրբ Էջմիածնեն և Մեր հայրական սրտեն ձեզի բոլորիդ Մեր ամենաջերմ մաղթանքները և հայրապետական օրհնությունը ի խնդիր ձեր հոգեշեն գործոց հաջողության։

ՎԱԶԳԵՆ Ա
ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

Ս. Էջմիածին,
3 ապրիլ 1978 թ.

ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Գերագույն հոգևոր խորհուրդը 1978 թ. ապրիլի 1-ի իր նիստում քննության առավ և որոշեց առաջիկա հոկտեմբեր ամսի 1—8 օրերին կատարել Մայր Աթոռում հետևյալ հանդիսությունները.

1. Հոկտեմբերի 1-ին, կիրակի օրը, Վեհափառ Հայրապետի գահակալության 23-րդ տարեդարձի առիթով Մայր տաճարում ս. պատարագի մատուցմամբ և ապա երեկոյան ժամը 19-ին. Վեհարանի հանդիսությանց դահլիճում նշել միաժամանակ Ն. Ս. Օծության ծննդյան 70-ամյակը:

2. Հոկտեմբերի 7-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամը 19-ին, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ Վեհարանի հանդիսությանց դահլիճում նշել Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանի հետ՝ պատմական այդ իրադարձության 150-ամյակի առիթով:

3. Հոկտեմբերի 8-ին, կիրակի օրը, Մայր տաճարում ս. պատարագի մատուցմամբ և երեկոյան ժամը 19-ին, նույնպես Վեհարանի հանդիսությանց դահլիճում, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ նշել Կ. Պոլսի երջանկահիշատակ տ. Հովհաննես Կոլոտ պատրիարք Բաղիշեցու ծննդյան 300-ամյակը:

ԳԵՐԱԳՈՒՅՆ ՀՈԳԵՎՈՐ ԽՈՐՀՈՒՐԴ

Ս. Էջմիածին,
20 ապրիլ 1978 թ.



ԱՊՐԻԼՅԱՆ ԵՂԵՌՆԻ 63-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Այսօր «Յիշատակ է բիւրաւոր նահատակացն մերոց, որք կատարեցան յընթացս Համաշխարհային առաջին պատերազմի»:

Ապրիլյան եղեռնի 63-րդ տարելիցն է:

Հայ ժողովրդի դարավոր պատմության ամենատոպ ու ողբերգական թվականն է 1915-ի ապրիլը:

«Անավոր բան մը այնտեղ, կկատարվի
մութին մեջ,
Կապաննեն Ազգ մը այնտեղ որ կյանք
ուներ և շնորհ»:

(Վ. Թեքեյան)

Այս տարի էլ, ապրիլի 24-ին, երկուշաբթի օրը, Մայր Աթոռում, հայրենիքում և սփյուռքի ողջ տարածքի վրա համայն հայությունը նշեց հայ տառապանքի և մեր հավաքական նահատակության 63-րդ տարելիցը և հպարտորեն իր գլուխը խոնարհեց մեր նահատակների անմոռաց հիշատակի առաջ, նահատակներ, որոնք ընկան «վասն Յիսուսի, վասն հայրենեաց», ընկան, որ հայությունն ապրի և դարերի դիմաց վառի իր հավերժության բոցավառ խարույկը.

Անցան 63 տարիներ: Հայության վիշտը, նահատակությունը վերածվեց գոյատևման ուժի, կյանքի, ստեղծագործական կամքի, հաղթանակի, ապրելու և հավերժելու հավատքի:

Ժողովուրդների կյանքում անդարձ կորած բոպեն ետ չես դարձնի ափսոսանքով և հուսահատությամբ: Ողջերը չեն ապրի, եթե «մեռնի երազը նահատակների»:

Մեր այսօրվա հաղթական երթի մեջ կա երազն ու շունչը մեր նահատակների: Մեր այսօրվա պայծառ ու խոստումնալից հայրենիքը՝ Սովետական Հայաստանը, հավիտենական հուշարձանն է մեր նահատակների անմահ հիշատակի:

1978, ապրիլի 24...

Ժամը 11-ն է: Վեհափառ Հայրապետը բարձրանում է Ծիծեռնակաբերդ, Նահատակաց հուշարձանին խաչազարդ ծաղկեպսակ դնում՝ հետևյալ մակագրությամբ. «Օրհնություն մեր նահատակներին Մայր Աթոռ ս. Էջմիածնից»:

Հայոց Հայրապետը, ՀՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ պատրոն Անդրանիկ Հասրաթյանը, Մայր Աթոռի ողջ միաբանությունը, մայրավանքի դեկավար պաշտոնեությունը շուրջանակի բոլորվում են նահատակաց հուշարձանի հավերժական կրակի շուրջ և ծաղիկներ զետեղում:

Աղոթքի և **Ուխտի** սրբազան պահն է: Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասա-

նում նահատակաց հիշատակին, և մեկ բոպե լռությամբ բոլոր գլուխները խոնարհվում են...

Ժամը 12-ն է: Մայր տաճարում, Նահատակաց սուրբ սեղանի վրա, պատարագ է մատուցում տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանը և իր բովանդակալից քարոզով ոգեկոչում հիշատակը նահատակների:

Ս. պատարագին ներկա է Վեհափառ Հայրապետը՝ շրջապատված Մայր Աթոռի միաբանության անդամներով, մայրավանքի ողջ աշխատավորությամբ և հավատացյալների հոծ բազմությամբ:

Հավարտ ս. պատարագի Վեհափառ Հայրապետը, ի գլուխ եկեղեցական թափորի, առաջնորդվում է մայրավանքի հյուսիսային կողմում կառուցված **Ուխտի** և **Աղոթքի** նահատակաց հուշարձան ու նախագահում հոգեհանգստյան արարողությանը:

Հայոց Հայրապետը «Հոգւոց» է արտասանում: Բոլոր ներկաները լռությամբ, երախտապարտ հիշողության լույսով հարգում են Ապրիլյան եղեռնի նահատակաց հիշատակը:

Ժամը 15-ին հոգևոր ճեմարանի ուսանողությունը ծաղիկներով, բազմահազար ժողովրդի հետ բարձրանում է Ծիծեռնակաբերդ: Ժամը 19-ն է: Ողջ Հանրապետության մեջ հայտարարվում է **լռության բոպե:** Հայրենաբնակ բովանդակ հայությունը մեկ սիրտ ու մեկ հոգի, կրկին անգամ հպարտ լռությամբ իր հարգանքն է մատուցում Ապրիլյան նահատակների հիշատակին:

Փա՜ռք և հարգա՜նք քեզ, երեկ նահատակված, բայց այսօր հրաշափառապես ազգային վերածննդյան և ապահովության փրկարար ճանապարհը գտած Հայոց աշխարհ և հայոց ժողովուրդ:

ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՔԱՐԵ ՊԱՏԱՐԱԳ

Ծիծեռնակաբերդ մատյան դու քարե,
Դու մի ակնթարթ հավիտենացած,
Անյունասափոր դու սև մարմարե,
Հայոց Ապրիլի մոխիրով լցված:

Ծիծեռնակաբերդ, դու մի պտղունց հող,
Ծիծեռնակի հին բույն դու կարկատված,
Ինչպե՞ս ես պահում դու գրանիտ քարով
Երկու միլիոնի երկինքը մորթված:

Եվ տքնում ես դու մութ գիշերներում
Երբ երկինք նետված տապանագրերի,
Անունները են որ լույս են փորագրում,
Քար խղճի վրա ժամանակների:

Ծիծեռնակաբերդ, դու թաց կոպերից
Մի կաթիլ արցունք դառնահամ ու տաք,
Դու հյուլեաչափ անավոր կսկիծ,
Դու եղեռնակոծ քարե պատարագ:

Ծիծեռնակաբերդ դու քարե հրդեհ,
Դու Զվարթնոցի պահը փլուզման
Այդ ինչպե՞ս պիտի նժարդ բռնեն
Որ հառաչանքիդ կշռույթն իմանան:

Ծիծեռնակաբերդ դու կոպերն իմ թաց,
Դու ամենամեծ վիշտը հայրենի,
Միացող դու վերք, վերք հավիտյան բաց,
Դու սև ձյուն իջած մեր Մասիսներին:

Ծիծեռնակաբերդ դու մեր օրհասի
Վարուժանյան երգ արյունի պես տաք,
Խենթացող ձայնը մեր Կոմիտասի,
Հավիտենասուգ քարե պատարագ,
Ցավի պատարագ, Հայոց պատարագ
Հավերժության լուրթ կամարների տակ...

Երևան, ապրիլ 24, 1968

ՄԱՀԵՐԳ ՆԱՀԱՏԱԿԱՑ

Խոսք՝ ՎԱՀԱՆ ԹԵՔԵՅԱՆԻ

Երաժշտություն՝ Ն. ԹԱՀՄԻԶՅԱՆԻ

Andante funebre

S. A. T. B.

mf

Ա - ՅՈՅՑ հա - մար որ ին - կաց

div. Ա - ՅՈՅՑ հա - մար որ ին - կաց

" - ՅՈՅՑ

ըզ - մեզ ա - զատ, մեր բյուր սըր-

ըզ - մեզ ա - զատ ու - զե - լով,

ըզ - մեզ ա - զատ ու զե - լով,

ըզ - մեզ ա - զատ ու - զե - լով. մեր

C anima

f

-ատեր քո - վե քով կ՚ըլ - լաց այ - սօր մեկ խո - րաց, Ա-ՅՈՅՑ հոգ-վույց

div. f

մեր բյուր սըրտեր քո - վե քով կ՚ըլ - լաց այ - սօր մեկ խո - րաց, f Ա-ՅՈՅՑ հոգ-վույց.

սըրտեր կ՚ըլ - լաց խո - րաց, Ա - ՅՈՅՑ

բյուր սըրտեր կ՚ըլ - լաց խո - րաց.


Con dolore

drammatico

mp

Եվ մեր ցա-վի սը - կի -

mp

Եվ մեր սը - կի - հեն ա -

mp

ցա - վի ա -

f

- հեն

- ցոնց արյունն ու հո-գին հա - ղոր -

- ցոնց արյունն ու հո - գին հա - ղոր - դու - թյուն վրի - ժա -

- ցոնց ա - ր յունն ու

ff

մենք կընդունեինք սըր - բո - ր ենն։

- դու - թյուն վրի - ժա - գին կըն - դու - նինք սըր - բո - ր ենն։

- գին, մենք կըն - դու - նինք սըր - բո - ր ենն։

հո - գին, հա - դ՞ո - դու - թյուն կըն - դու - նինք սըր - բո - ր ենն։

ff



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Ապրիլի 1-ին, շաբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում Վեհափառ Հայրապետի նախագահությամբ գումարվում է Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը:

*
* *

Ապրիլի 2-ին, կիրակի.—Նոր կիրակի. Կրկնազատիկ.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Ապա ասէ ցԹովմաս. բեր զմատունս քո և արկ այսր, և տես զձեռս իմ... և մի լինիր անհաւատ, այլ՝ հաւատացեալ»: (Հովհ. Ի 27) բնաբանով:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 5-ին, հինգշաբթի.—Այսօր, երեկոյան, Վեհարանում Նորին Սրբության նախագահությամբ տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ: Օրվա բանախոս Կիրակոս սրկ. Հովնանյանը ներկայացրեց 7-րդ դարում Կոմիտաս կաթողիկոսի օրով Դվինի հայրապետանոցում կազմված «Կնիք Հաւատոյ» դավանաբանական ժողովածուն, որը 1914 թվականին հրատարակել է Մայր Աթոռում գիտնական Կարապետ եպիսկոպոս Տեր-Մկրտչյանը:

Հավաքույթին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 9-ին, կիրակի.—Աշխարհամատրան Կանաչ կիրակի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Մասիս վրդ. Գալստյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

*
* *

Ապրիլի 14-ին, ուրբաթ.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Երևանի հայրապետական վիլլայում տեղի ունեցավ Գերագույն հոգևոր խորհրդի հերթական նիստը, որ որոշվեց այս տարի, հոկտեմբերի 1-ին, մեծ շուքով տոնել Վեհափառ Հայրապետի ծննդյան 70 և գահակալության 23-րդ տա-

* * *

ոեդարձը: Այդ առթիվ որոշվեց հաղորդագրություն հրատարակել ինչպես սույն, նույնպես նաև հոկտեմբերի 7-ին, շաբաթ օրը, Արևելյան Հայաստանի միավորումը Ռուսաստանին պատմական իրադարձության 150-ամյակին նվիրված հանդիսությունների առթիվ: Որոշվեց նաև հոկտեմբերի 8-ին նշել Մայր Աթոռում Կ. Պոլսի երջանկահիշատակ տ. Հովհաննես Կոլոտ պատրիարքի ծննդյան 300-ամյակը:

Գերագույն հոգևոր խորհրդի սույն նիստում ս. Հռիփսիմե վանքի վանահայր է նշանակվում տ. Մասիս վրդ. Գալստյանը, ս. Գեղարդ վանքի վանահոր տեղակալ է նշանակվում տ. Եղիշե քհն. Սարգսյանը, իսկ Օշականի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան եկեղեցու վանահայր՝ տ. Թորգոմ վրդ. Մուշեղյանը:

* * *

Ապրիլի 16-ին, կիրակի.—Կարմիր կիրակի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Անանիա վրդ. Արաբաջյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում Կարմիր կիրակիի խորհրդի և հոգևոր նշանակության մասին:

* * *

Ապրիլի 17-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ ժամանեց ՍՍՀՄ գիտությունների ակադեմիային առընթեր ազգագրության ինստիտուտի Լենինգրադյան բաժանմունքի ասիական երկրների բաժնի վարիչ դոկտ. Ալեքսանդր Ռեշետովը:

Նույն օրը Վեհափառ Հայրապետը Վեհարանում ընդունեց հարգելի հյուրին և զրույց ունեցավ նրա հետ սփյուռքահայ եկեղեցական կյանքի մի շարք հարցերի շուրջ, որոնք հետաքրքրում էին նրան:

Հարգարժան հյուրը Մայր Աթոռում գտնվելու օրերին այցելեց Վեհարան, Մայր տաճար, եկեղեցական արվեստի թանգարան, ապա ս. Հռիփսիմե և ս. Գայանե վանքեր:

Ապրիլի 25-ին պատվարժան հյուրը, մասնակցելուց հետո Երևանում գումարված ազգագրագետների գիտաժողովին, լավագույն տպավորություններով, հրաժեշտ առնելով Վեհափառ Հայրապետից, մեկնեց Մայր Աթոռից:

* * *

Ապրիլի 19-ին, չորեքշաբթի.—Ապրիլի 19—23 օրերին որպես հյուր Մայր Աթոռում էր գտնվում Ֆրանսիա-ՍՍՀՄ ընկերակցության Փարիզի նախագահության անդամ և Փարիզի «Դպրոցական և համալսարանական քրիստոնեական համայնք»-ի երեց հայր Ժակ Ֆուրնիեն:

Վեհարանում գերապատիվ հյուրը հանդիպում ունեցավ Հայոց Հայրապետի հետ: Նրանց միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որի ընթացքում նա հետաքրքրվեց Սովետական Միությունում և հատկապես Սովետական Հայաստանում հայ եկեղեցու այսօրվա կյանքի և գործունեության հետ առընչվող մի շարք հարցերով:

Մայր Աթոռում գտնվելու օրերին հայր Ֆուրնիեն այցելեց Վեհարան, Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարան, հոգևոր ճեմարան, ս. Հռիփսիմե, ս. Գայանե, ս. Գեղարդ վանքեր, Երևանի ս. Սարգիս, ս. Հովհաննես և ս. Զորավոր եկեղեցիներ, Ծիծեռնակաբերդի նահատակաց հուշարձան և այլ տեսարժան վայրեր:

Ապրիլի 23-ին, կիրակի օրը, առավոտյան, Մայր տաճարում ս. պատարագին ներկա լինելուց հետո, հարգելի հյուրը հրաժեշտ տվեց Վեհափառ Հայրապետին և լավագույն տպավորություններով մեկնեց Մայր Աթոռից:

* * *

Ապրիլի 20-ին, հինգշաբթի.—Այսօր Վեհարանում տեղի ունեցավ միաբանական հերթական հավաքույթ, որտեղ հայոց լեզվի պահպանության և քրիստոնեական հավատքի այժմեականության մասին խոսեց Վեհափառ Հայրապետը:

* * *

Ապրիլի 23-ին, կիրակի.—Տօն Երևմնի ս. Խաչի.

Այսօր Մայր տաճարում ս. պատարագ է մատուցում տ. Հակոբ քհն. Հակոբյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:

Հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան պաշտոն՝ նորոգ հանգուցյալ, Մայր Աթոռի միաբան, Իրաքի հայոց առաջնորդ տ. Ասողիկ արքեպիս-

ՀԱՅԿ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՖՈՒՆԴԱՄԵՆՏԱԼ ԳՐԱԴԱՐԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

կոպոս Ղազարյանի մահվան բառասունի առթիվ:

Մի քանի օր առաջ ուխտավորաբար Մայր Աթոռ էին ժամանել ֆրանսահայ բժիշկների մի մեծ խումբ (45 հոգի), ինչպես նաև բուլղարահայ ուխտավորների ավելի քան 60 հոգուց բաղկացած խումբը:

Ժամը 11-ին Վեհարանում Վեհափառ Հայրապետն ընդունեց ուխտավորական այս երկու խմբերին, ողջունեց և բարի գալուստ մաղթեց նրանց: Այնուհետև ուխտավորական խումբը ներկա եղավ ս. պատարագին Մայր տաճարում: «Հայր մեր»-ից առաջ Վեհափառ Հայրապետը ողջունեց ներկայությունը Մայր տաճարում ֆրանսահայ և բուլղարահայ ուխտավորների և ապա քարոզեց Երևման ս. Խաչի նշանակության, առաջին դարերի քրիստոնյաների նվիրվածության և հավատքի ջերմեռանդության մասին:

Հավարտ ս. պատարագի ուխտավորները ս. Հաղորդություն ստացան:

*
* *

Ապրիլի 26-ին, չորեքշաբթի.—Այսօր, երեկոյան ժամը 19-ին, Վեհարանում տեղի է ունենում միաբանական հերթական հավաքույթ, որի ընթացքում Վեհափառ Հայրապետը «Բացվել աշխարհի» թեմայով շաբեկան զրույց է ունենում: Զրույցը լսվում է մեծ հետաքրքրությամբ:

*
* *

Ապրիլի 30-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում իր անդրանիկ ս. պատարագն է մատուցում տ. Մանուկ քհն. Մարգարյանը:

Ս. պատարագին ներկա էր Վեհափառ Հայրապետը:



ՀԱՆԳԻՍՏ
ՏԵՐ ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ԱՊԱՏՅԱՆԻ
(1918—1978)

Ապրիլի 24: Երկուշաբթի:

Հեռավոր Ուրուգվայի մայրաքաղաք Մոնտեվիդեոյում, Ապրիլյան հայ նահատակաց հուշարձանին ծաղկեպսակ զետեղելիս, սրտի տագնապի հետևանքով սրտից խըփվեց ու կայծակնահար եղավ Մայր Աթոռի միաբան, Հարավային Ամերիկայի հայոց հայրապետական պատվիրակ և Արգենտինայի հայոց առաջնորդ տ. Բաբգեն արքեպ. Ապատյանը:

Սգի մեջ է Մայր Աթոռ ս. Էջմիածինը: Սգի մեջ են հայ եկեղեցին ու սրբազանին ճանաչող Հարավային Ամերիկայի իր հավատացյալ ժողովուրդը, հարազատներն ու բարեկամները, դասընկերներն ու գործակիցները:

Ոչ ևս է հայ եկեղեցու շնորհալի, հավատավոր, անձնդիր, բոլորից սիրված ու անվերապահորեն հարգված, ազնիվ ու բարի հոգևորականը:

Ծանր է միաժամանակ Մայր Աթոռի կրած կորուստն ու խորը՝ Հայոց Հայրապետի վիշտը, Հայրապետ, որը հայրական ջերմ գուրգուրանքով սիրում, գնահատում էր նրան, որպես հարազատ հոգևոր որդու, իսկ «Որդի հարազատ զնմանութիւն հօրն բերէր»:

Հանգուցյալ սրբազանը, ավազանի անունով՝ Հովսեփ, ծնվել է 1918 թվականի դեկտեմբերին, բնիկ այնթապցի ծնողների զավակ, տարագրության ճանապարհին, ծնընդավայրից հեռու ու աքսորական...

Շատերի նման նա էլ որբ է մեծացել, չի հանդիպել հայրական սեր ու գուրգուրանք և 1920 թվականին այրի մոր և բազում հայրենակիցների հետ հանգրվանել է Հալեպ քաղաքում, ուր և ստացել է իր նախնական կրթությունը, տեղի այնթապցիներին ծանոթ Կրթասիրաց երկսեռ վարժարանում:

1932 թվականին փայլուն հաջողությամբ ավարտել է Կրթասիրացը և նույն տարվա սեպտեմբերին ընդունվել Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարան:

Ուսումնառության տարիներին ուշիմ և խոհական Հովսեփը աչքի է ընկնում իր բացառիկ աշխատասիրությամբ, կարգապահությամբ ու սիրվում բոլոր իր դասախոսներից, որպես ազնիվ, համեստ և ընդունակ ուսանողի:

1936 թվականին բացառիկ հաջողությամբ ավարտում է Ժառանգավորաց վարժարանի դասարանական բաժինը և հետևում լսարանական բարձրագույն եռամյա դասընթացին՝ աշակերտելով տ. Թորգոմ արքեպիսկոպոս Գուշակյան գրագետ պատրիարքին, Տիրան Ներսոյան և Եղիշե Տերտերյան վարդապետներին, Հակոբ Օշական ու Շահան Պերպերյան ուսուցչապետներին և ստանում բազմակողմանի եկեղեցագիտական մասնագիտական, հայագիտական ու իմաստասիրական հիմնական կրթություն:

1936 թվականին Երուսաղեմում սարկավագ է ձեռնադրվում տ. Թորգոմ պատրիարքից՝ 11 այլ ընկերների հետ, և այնուհետև իր կյանքն ու գործունեությունն ընդմիշտ, գիտակից նվիրումով և անմնացորդ, կապում Երուսաղեմի սրբոց Հակոբյանց վանքի միաբանության և հայ եկեղեցու ծառայության ու հոգևոր սպասավորության հետ:

1939 թվականին ավարտելով ընծայարանը՝ կուսակրոն բահանա է ձեռնադրվում տ. Մեսրոպ պատրիարք Նշանյանից և, հակառակ իր շատ երիտասարդ տարիքին, բայց որպես խոհուն ու կազմակերպված հոգևորական, վանքից ներս կոչվում է վանական-վարչական պատասխանատու պաշտոնների:

1939—1942 թվականներին նշանակվում է Երուսաղեմի հայոց պատրիարքական սուրբ Աթոռի ելևմտից տեսուչ, պաշտոն, որը կատարում է ազնվությամբ և հմտությամբ:

1943—1948 թվականներին ստանձնում է Յաֆայի հայոց ս. Նիկողայոս, Ռամլեի հայոց ս. Գևորգ վանքերի վանահայրության տեսչական պաշտոնները, ինչպես նաև Յաֆայի ս. Գլխադրի հայոց վարժարանի կրթական տեսչի պաշտոնը՝ բարձր դասարաններում դասավանդելով քրիստոնեական և գրաբար լեզու:

1948—1959 թվականներին նշանակվում է նաև Երուսաղեմի հայոց պատրիարքության ներկայացուցիչը Իսրայելի կառավարության մոտ:

1958 թվականին առաջին անգամ Բաբգեն վարդապետն ուխտի է գալիս Մայր Աթոռ ս. Էջմիածին՝ մասնակցելու Վեհափառ Հայրապետի գահակալության հանդիսություններին և համբուրելու հայրենի հողը որպես հայրենասեր հոգևորականի:

Հայոց Հայրապետը երկնային ներշնչումով տ. Բաբգեն վարդապետի մեջ տեսնում և գնահատում է ապագա բարձրաստիճան հայ հոգևորականը և նրան մայիսին եպիսկոպոս ձեռնադրելով՝ նշանակում Հարավային Ամերիկայի երեք երկրների՝ Ուրուգվայի, Արգենտինայի և Բրազիլիայի հայրապետական պատվիրակ:

Շուրջ 40 տարի տ. Բաբգեն սրբազանը որպես վարդապետ և եպիսկոպոս, որպես պատրաստված և հավատավոր հոգևորականներից մեկը, եռանդով ու հավատով լի, անաղմուկ ու սրտագին ծառայում է իր եկեղեցուն և ժողովրդին, մանավանդ Հարավային Ամերիկայի ափերի վրա տուն-տեղ եղած հայ ժողովրդի գաղթական զավակներին, ծավալելով հոգևոր, եկեղեցական, կրթական, հայրենասիրական-հասարակական արդյունավետ գործունեություն, սիրվելով ամենքից, իր ժողովրդից, այդ երկրների բոլոր եկեղեցիների հոգևոր պետերից և պետական իշխանություններից:

1964 թվականի հունիս 27 թվակիր Իր կոնդակով Վեհափառ Հայրապետը հայրապետական Իր բարձր գնահատությանն արժանացնելով տ. Բաբգեն սրբազանի երկարամյա հոգեշեն, եկեղեցանվեր, ամբողջ թեմական, վարչական ու կրթական գործունեությունը, նրան շնորհում է արքության պատիվ:

Անցնում են տարիները աշխատանքի հետ, նվիրումով ու լավատեսությամբ թեվավորված: Բայց... ահա հանկարծ ապրիլի 24-ին կատարվում է անսպասելին, մեծ անակնկալը՝ ահավորը... Ստեղծագործական իր ուժերի ծաղկման ու հասունության հանգրվանին թեակոխած՝ կտրվում է նրա խոստումնալից կյանքի թելը՝ 60 տարին դեռ չբոլորած, և ընկնում է նա կայծակնահար՝ իր պարտականությունների կատարման և ծառայության դիրքերի վրա:

Տ. Բաբգեն սրբազանն իր վանական-տեսչական, վարչական-թեմական ծանր պարտականությունների կատարմանը զուգընթաց, որպես մտքի ու հոգու բացառիկ շնորհներով օժտված մեկը, որպես գրքի ու գրչի մարդ, զբաղվում է նաև գիր ու գրականությամբ, մանկավարժական, գրականաթարգմանական աշխատանքներով: Նա երկար տարիներ աշխատակցել է Երուսաղեմի հայոց պատրիարքարանի պաշտոնա-

թերթ «Սիոն» ամսագրին, ձեռնհասորեն խմբագրել է «Հայ կեդրոն» ամսագիրը Բուենոս Այրեսում, ուր ստորագրել է հայաշունչ ու հայատրոփ խմբագրականներ ու հմտալից հոդվածներ, բերել նաև իր սրտագին աշխատակցությունը «Էջմիածին» ամսագրին, կրոնափիլիսոփայական հոգեշունչ ուսումնասիրություններով:

Նրա գրական վաստակն աչքի է ընկնում բովանդակության, արտահայտչականության ինքնատիպ ձևերով, պատկերավորությամբ, մտածման խորքի և ձևի միասնականությամբ և հայոց լեզվի սքանչելի իմացությամբ ու շնորհալի օգտագործմամբ:

Նրա գրական վաստակի մեջ առանձնահատուկ տեղ է գրավում Վեհափառ Հայրապետին և այլ բարեկամներին գրած նրա նամակագրական ժառանգությունը, որն արժանի է մասնավոր ուշադրության: Այդ նամակների մեջ հստակորեն երևում է հավատավոր հոգևորականը, Մայր Աթոռի հարազատ զավակը և անկաշառ, ուղղամիտ, հայրենասեր հոգևորականը:

Հանգուցյալ սրբազանի աճյունը Մոնտեվիդեոյից փոխադրվում է Բուենոս Այրես և հողին հանձնվում ս. Գրիգոր Լուսավորիչ Մայր տաճարի շրջափակում:

Հարավային Ամերիկայի ողջ հայությունը սգում և ողբում է իր արժանավոր հոգևոր առաջնորդի մահը:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ հանգուցյալ տ. Բաբգեն արքեպիսկոպոսի վերջին օծման և թաղման արարողություններին, հանուն Մայր Աթոռի, ներկա են լինում ԱՄՆ-ի արևելյան թեմի առաջնորդ տ. Թորգոմ արքեպ. Մանուկյանը և Մարսելի հայրապետական պատվիրակի փոխանորդ տ. Հակոբ եպս. Վարդանյանը:

Ապրիլի 30-ին Մայր տաճարում, հավարտ ս. պատարագի, Վեհափառ Հայրապետի նախագահությամբ, կատարվում է հոգեհանգստյան մասնավոր կարգ հանգուցյալ սրբազանի մահվան ութսնրեքի կապակցությամբ, ի ներկայության խուռներամ հավատացյալների:

Արարողությունից առաջ Հայոց Հայրապետը վիրավոր սրտով ու խորապես հուզված խոսում է հետևյալ դամբանականը.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀԱՆԳՈՒՅՑԱԼ Տ. ԲԱԲԳԵՆ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՄԱՀՎԱՆ ԱՌԻԹՈՎ

«Յանուն Հօր և Որդւոյ և Հոգւոյն սրբոյ. ամէն».

«Քանզի ամենայն մարմին իբրև զխոտ է և ամենայն փառք մարդոյ իբրև զծաղիկ խոտոյ: Խոտն թառամեցաւ, ծաղիկն թօթափեցաւ. բայց Տեառն մնայ յաւիտեան»:

Սիրելի հավատացյալ ժողովուրդ, այս խոսքերը գրի է առել մեր սուրբ առաքյալներից Պետրոս: Նա ասում է, որ մարդու կյանքը, մարդու մարմինը նմանվում է դաշտերի խոտին, իսկ մարդու փառքը՝ խոտի ծաղիկին, ծաղիկներին: Կգա մի օր, երբ խոտը կթառամի, և ծաղիկը կթոթափվի, սակայն Աստուծո խոսքը կմնա հավիտյան:

Շատ գեղեցիկ, պատկերավոր ձևով արտահայտվում է մարդկային կյանքի մեծագույն ճշմարտություններից մեկը: Խոսքը վերաբերվում է կյանքի և մահվան, որոնց առաջ ենք գտնվում մենք՝ բոլոր հողեղեն մարդիկս կյանքի և մահվան սահմանների վրա, ամեն անգամ, երբ մեր առաջ հառնում է մահվան խորհուրդը: Սուրբ Պետրոս առաքյալ իրավացի կերպով մարդկային կյանքը նմանեցնում է դաշտերի բույսերին, խոտերին, ծառերին:

Այդպես է նաև մարդկային կյանքը, անխընտիր բոլոր մարդկանց կյանքը: Բոլորս նույն ճակատագրի ճանապարհն է, որ ունենք մեր առաջ: Սակայն Պետրոս առաքյալ ավելացնում է, թե հավիտենական է մնում Աստուծո խոսքը: Եվ այդ խոսքով է, որ մենք քրիստոնյաներս մխիթարություն ենք գտնում մահվան առեղծվածի առջև և մահվանից չենք վախենում: Մահը, ինչպես և կյանքը բնական երևույթներ են այս տիեզերքի մեջ: Ամեն ինչ կգա և կանցնի, կփոփոխվի, բայց կմնա հավիտենապես ճշմարիտ Աստուծո խոսքը, և Աստուծո խոստումը սուրբ Ավետարանով, թե մարդիկ պիտի ժառանգեն ուրիշ կյանք մը ևս իրենց երկրային կյանքից հետո: Մենք քրիստոնյաներս հույսը ունենք հոգու անմահության, հույսը հավիտենական կյանքին:

Սիրելի ժողովուրդ, այս մի քանի խորհրդածություններից հետո Մենք հոգեկան պարտականությունը ունենք այսօր աղոթելու մեր եկեղեցու բարձրաստիճան հոգևորականներից մեկի հոգվո խաղաղության համար, որ մի քանի օրեր առաջ վախճանվեց, մահացավ, տակավին երիտասարդ հասակում, ոչ իսկ վաթսուն տարին լրացրած:

Մենք քրիստոնյաներս հաշտվում ենք մահվան գաղափարի հետ, սակայն երբ մեր մտերիմը, մեր հարազատը, մանավանդ տակավին երիտասարդ տարիքի մեջ հեռանում է մեզանից, մեր եկեղեցուց, մեր հավաքականությունից, այնուամենայնիվ մենք մեր մարդկային զգացմունքներով տխրում ենք և ափսոսում, որ նա շուտ հե-

ռացավ կյանքից, շուտ հեռացավ իր աշխատանքից, իր գործունեությունից, մի գործունեություն, մի աշխատանք, որ նվիրված էր մեր ս. եկեղեցու անսասանության ու պայծառության, որ նվիրված էր մեր հավատացյալ ժողովրդի հոգևոր զարթոնքին:

Այսպիսին էր Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանը, որ մահացավ մի քանի օրեր առաջ՝ հանկարծամահ լինելով ճիշտ ապրիլի 24-ի օրը, մեր նահատակաց հիշատակության պահին, Մոնտեվիդեո քաղաքում, Հարավային Ամերիկայում:

Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյան, ծնունդով այնթապցի, Հալեպ քաղաքում էր մեծացել և նախակրթական վարժարանը ավարտելուց հետո ընդունվել էր ս. Երուսաղեմա հայոց վանքում, որտեղ տարիներ շարունակ սովորել էր հայոց պատրիարքության հոգեպարար մթնոլորտի մեջ: Աճել և զարգացել էր իր հոգին և իր մարմինը և իր միտքը լավագույն դաստիարակներ և ուսուցիչներ ունենալով և ապա ձեռնադրվել էր հոգևորական՝ նույն վանքում: Նա իր շրջանի ամենափայլուն աշակերտներից մեկն էր եղել, բնավորությամբ՝ հանդարտ, նկարագրով՝ ազնիվ և առաքինի: Բոլորը նրան գովում էին և օրինակ տալիս իբրև իսկապես արժանի հոգևորական: Երիտասարդ տարիքին նա արդեն պատասխանատու պաշտոններ էր ստանձնել Երուսաղեմի վանքում, ապա Յաֆա քաղաքում երկար տարիներ վանահայր էր եղել և ներկայացուցիչը Երուսաղեմի վանքի, Հրեաստանի մեջ: Իսկ 1959 թվականին, ուրեմն մոտավորապես 20 տարիներ առաջ, նա այստեղ, այս սուրբ տաճարի կամարների ներքո, այս սուրբ Սեղանի առաջ ծունկի եկած ձեռնադրվեց և օծվեց Հայաստանյայց եկեղեցու եպիսկոպոս և անմիջապես գործուղվեց դեպի Հարավային Ամերիկա, Արգենտինա, և ստանձնեց չափազանց պատասխանատու պաշտոն՝ իբրև հայրապետական պատվիրակ և հոգևոր առաջնորդ Հարավային Ամերիկայի բոլոր հայերին, որոնք ապրում են Արգենտինայում, Ուրուգվայում և Բրազիլիայում: Այդ շրջանում ավելի քան հարյուր հազար հայեր են ապրում: Նրանք բազմաթիվ հայկական եկեղեցիներ ունեն, հայկական դպրոցներ, մշակութային և ազգային կազմակերպություններ:

Ահա այդ բոլոր երկրների հայերի հոգևոր առաջնորդության կոչվեց Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյան: Նա իր ամբասիր կյանքով, հոգեշունչ ոգով, օրինակելի վարք ու բարքով, իմաստությամբ և հավատարմությամբ դեպի Մայր Աթոռ ս. Էջմիածին, նվիրումով և սիրով կատարեց իր պարտքը մեր եկեղեցու և մեր ժողովրդի հանդեպ, այդ հեռավոր աշխարհներում:

Հանախ նա այդ քսան տարիների ընթացքում Մայր Աթոռ ս. Էջմիածին եկավ հանդիսավոր առիթներով և իր շնորհալի ներկայությամբ, իր կենդանի խոսքով, իր իմաստուն գործունեությամբ, իր հավատարիմ կեցվածքով միշտ ուրախացրեց մեզ բոլորիս: Մեր եկեղեցու պարծանքներից մեկը հանդիսացավ նա սկզբից մինչև վերջին պահը, երբ իր հոգին կավանդեր՝ սիրված և հարգված բոլորի կողմից:

Նրա հիշատակը չի մոռացվելու ոչ այստեղ, մեր երկրում, ոչ էլ արտասահմանում:

Մեր եկեղեցին սուգի մեջ է, և մենք բոլորս ողբում ենք նրա վաղաժամ մահը և աղոթում ենք առ Աստված, որ բաղցրությամբ ընդունի նրա հոգին, իր հավիտենական լույսի աշխարհի մեջ, և նրա հիշատակը միշտ փառավոր, միշտ պայծառ պահպանվի թե՛ երկնքում, թե՛ այստեղ՝ երկրի վրա, մեր հոգիների, մեր գիտակցության մեջ:

«Յաիտենական յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի». ամեն:

Ա. Հ.



ՔԱՀԱՆԱՅԱԿԱՆ ՁԵՌՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Ս/թ. ապրիլի 15-ին, շաբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, ս. Գայանե վանքի տաճարում քահանայական ձեռնադրության կոչման կարգ է կատարվում վրահայոց թեմի առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանի ձեռամբ:

Հոգևոր ճեմարանը տարբեր տիրաներում ավարտած Մովսես սարկավագ Ղազարյանը, Անաստաս սարկավագ Մովսիսյանը և Միսակ սարկավագ Մարգարյանը քահանա ձեռնադրվեցին ըստ Ձեռնադրության Մաշտոցի:

Հնչում է «Նայեաց ի մեզ» շարականը: Եկեղեցու ավանդատնից դեպի Մայր խորան են առաջանում ձեռնադրող սրբազանը ու նորընծաները:

Խարտավիլակի պաշտոնը կատարում է տ. Մոմիկ վրդ. Սարգսյանը:

Շաբաթ օրը, քահանայական կոչման պահին, նորընծաները հանձն են առնում «ամենայն պատրաստակամութեամբ և առանց ձանձրանալոյ կալ ի պաշտօնն Աստուծոյ, և ոչ խափանել զգործն Աստուծոյ վասն մարմնաւոր գործոյ»:

Ապա տեղի է ունենում Հայաստանյայց եկեղեցու ուղղափառ դավանության հրապարակային խոստովանություն նորընծաների կողմից. «Ունիմք զդաւանութիւն ուղղափառ հաւատոյ... ընդ սուրբ հայրապետսըն...»:

Կիրակի օրը, նախքան ձեռնադրությունը, նորընծաները Մայր տաճարի Իջման ս. սեղանի առջև կարդում են իրենց գրավոր ուխտագրերը և երդվում ցկյանս ծառայելու հայ եկեղեցուն և հայ ժողովրդին:

Ապրիլի 16-ին, կիրակի.—Կարմիր կիրակի. Ժամը 11-ին Էջմիածին քաղաքի հինավուրց տաճարներից մեկում, նույնքան սրբաբույր ս. Գայանե վանքում, տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը մատուցում է ս. պատարագ:

«Զի ողորմած և մարդասէր ես Աստուած» մաղթանքից անմիջապես հետո հընչում է «Այսօր Աստուածութիւնն զուարճանայ» հոգեթով շարականը և սկսվում է Ձեռնադրության կարգը:

Սուրբ Գայանե եկեղեցու կամարների տակ լսվում է «Աստուածային և երկնաւոր շնորհ» շարականը: Նորընծաները եկեղեցու Սեղանի վրա դառնում են դեպի ժողովուրդը՝ վերամբարձ ձեռքերով, ի նշան իրենց՝ աշխարհից հրաժարման: Հուսկ ուրեմն, երբ դառնում են դեպի խորանը, ձեռնադրող սրբազանը ձեռքերը խաչաձև դնում է յուրաքանչյուր նորընծայի գլխին և ասում. «Ես դնեմ զձեռս ի վերա սորա և դուք ամենեքեան աղօթս արարէք, զի արժանի լիցի սա զաստիճան քահանայութեան...»:

Ապա շարունակվում է ս. պատարագը մինչև «Ողջոյն տուք միմեանս» սարկա-

Մի պահ քահանայական ձեռնադրությունից

վագաց քարոզը: Եպիսկոպոսի օրհնությամբ և աղոթքով նորընծաները ստանում են փիլոն և պատարագչի զգեստներ:

Հոգևոր վերացման սրբազան պահին է հասնում ձեռնադրության այս խորհուրդը, երբ քահանայական լրիվ զգեստներ հագած նորընծաների ճակատներն ու ձեռքերը սրբազանը օծում է սրբալույս մեռոնով ու որպես մկրտության ավազանից հանված մանկան՝ նոր անուններ շնորհում նրանց: Մովսես սարկավագ Ղազարյանը պահում է իր ավազանի անունը՝ տեր Մովսես քահանա, Անաստաս սարկավագ Մովսիսյանը վերանվանվում է տեր Աթանաս քահանա, և Միսակ սարկավագ Մարգարյանը՝ տեր Մանուկ քահանա:

Ավարտվում է օծման խորհրդավոր պահը. շնորհաբաշխության առթիվ ձեռնադրող սրբազան հայրը կատարում է իր բարեմաղթությունները նորընծաների ապագա գործունեության հաջողության համար և ցանկանում, որ նրանք լինեն անխոնջ մշակներ հայ եկեղեցու ծառայության մեջ:

Հավարտ ս. պատարագի նորընծա քահանաները ձեռնադրող սրբազանի ուղեկցությամբ ներկայանում են Ամենայն Հայոց Վեհափառ Հայրապետին ու ստանում Նրա հայրական մշտաբաշխ օրհնությունը:

Նորընծա քահանաները իրենց քահանայական քառասունքը կանցկացնեն Մայր Աթոռում, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի հոգևոր վարժության ներքո:

ՏԵՐ ՄՈՎՍԵՍ ՔՀՆ. ՂԱԶԱՐՅԱՆ

Ծնվել է 1926 թվականին Մուսա Լեռան (Սիրիա) Քեպուսիե գյուղում, որտեղ և ստանում է իր նախնական կրթությունը: 1939-ին ծնողների հետ տեղափոխվում է Լիբանան, ուր աշխատում է «Զարթոնք» թերթի խմբագրությունում:

1944-ին ընդունվում է Երուսաղեմի հայոց վանքի Ժառանգավորաց վարժարան ու 1947-ին ավարտում այն: Նույն թվականի ամռանը ներգաղթում է մայր հայրենիք և ընդունվում ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որի ընթացքը ավարտում է 1951-ին: 1950-ին ձեռնադրվում է սարկավագ:

1958-ից մինչև 1978 թվականի սկզբները աշխատել է Երևանի պետական բանկի Շահումյանի շրջանի բաժանմունքում որպես երեկոյան դրամարկղի վարիչ-գանձապահ: Միևնույն ժամանակ Երևանի մի շարք միջնակարգ դպրոցներում դասավանդել է անգլերեն լեզու:

ՏԵՐ ԱԹԱՆԱՍ ՔՀՆ. ՄՈՎՍԻՍՅԱՆ

Ավազանի անունով՝ Անաստաս: Ծնվել է 1937 թվականի դեկտեմբերի 18-ին Ազիզբեկովի շրջանի Բարձրուն գյուղում: Նախնական կրթությունը ստացել է տեղի յոթնամյա դպրոցում, ապա ուսումը շարունակել Արտաշատի շրջանի Բաղրամյան գյուղի դպրոցում:

1955-ին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան, որն ավարտել է 1961-ին ու նույն տարին էլ ձեռնադրվել սարկավագ: 1963 թվականին ընդունվել է Երևանի պետական համալսարանի բանասիրական ֆակուլտետ և ավարտել այն 1968-ին:

1968-ից աշխատել է Երևանի պետական կենտրոնական արխիվում, 1969-ին՝ «Հատուկ դպրոց»-ում՝ որպես դաստիարակ, 1972-ին՝ ուղղիչ աշխատանքային-դաստիարակչական գաղութում՝ մեթոդիստ: Նա միաժամանակ հեռակայել է Երևանի Խաչատուր Աբովյանի անվան մանկավարժական ինստիտուտում որպես ասպիրանտ:

1976-ի նոյեմբերի 10-ից առ այսօր աշխատում է «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում որպես քարտուղար:

ՏԵՐ ՄԱՆՈՒԿ ՔՀՆ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

Ավազանի անունով՝ Միսակ: Ծնվել է Էջմիածին քաղաքում 1955 թվականի փետրվարի 7-ին: Ծնողները ներգաղթել են Պաղեստինից 1947-ին: 1961—1968 թվականներին սովորել է Էջմիածնի Խաչատուր Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում: 1969-ին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան և ավարտել 1976-ին: Սարկավագ է ձեռնադրվել ճեմարանն ավարտելուց հետո, երկու տարի աշխատել է որպես վերակացու հոգևոր ճեմարանում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը շնորհավորում է նորընծա քահանաներին և բարեմաղթում, որ նրանք իրենց հոգևոր և մտավոր պատրաստվածությամբ լինեն «մշակք առանց ամօթոյ» հայ եկեղեցու ծառայության սրբազան դաշտում և իրենց կյանքն ու կարողությունները նվիրաբերեն մեր ժողովրդի հոգևոր սպասին, օրինակ հանդիսանալով իրենց «խոսքով, վարմունքով, սիրով, հավատով և սրբությամբ... հավատացյալներին» (Ա. Տիմ. Դ 11—12):



ԴԻՊԼՈՄԱՅԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Ս/թ. ապրիլի 13-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 11-ին, հոգևոր ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ 1976—77 ուսումնական տարվա հոգևոր ճեմարանի շրջանավարտ հինգ սարկավագների ավարտաճառերի բանավոր պաշտպանությունը՝ նախագահությամբ Վեհափառ Հայրապետի:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, ուսանողությունը, սայրավանքի պաշտոնեությունը և հրավիրյալներ:

Հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քահանա Մարությանի բացման խոսքով սկսվում է հանդիսությունը:

Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ նախապես կազմվել էր քննիչ հանձնաժողով՝ հոգևոր ճեմարանի դասախոսներից կազմված, որը և հանգամանորեն ընթերցել ու գրավոր իր գնահատականը ու դիտողությունն էր կատարել յուրաքանչյուր ավարտաճառի մասին:

Հանդիսության բացումից հետո շրջանավարտ սարկավագները հանդես են գալիս իրենց դիպլոմային աշխատանքների բանավոր պաշտպանությամբ: Քննիչ հանձնաժողովը այս առթիվ ևս արձանագրում է իր գնահատականը:

Սորին սրկ. Մանդալյան. ավարտաճառի նյութն էր «Սարգիս վարդապետ Շնորհալին և նրա՝ ս. Հովհաննես առաքյալի կաթողիկե երեք թղթերի մեկնությունը» (68 էջ մեքենագիր), «Գերազանց».

Բյուզանդ սրկ. Գալայջյան՝ «Պողոս առաքյալի հովվական թղթերը և հոգևոր հովվի պարտականությունները այսօր» (81 մեքենագիր էջ), «Լավ».

Կիրակոս սրկ. Հովնանյան՝ «Մակար Եկեղյան, կյանքը և գործունեությունը», (92 մեքենագիր էջ), «Լավ».

Տ. Թադեոս բհն. Ավագյան՝ «Ներսես Աշտարակեցին և նրա դերը Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի հետ միավորվելու գործում», (82 մեքենագիր էջ), «Լավ».

Դերենիկ սրկ. Սայան՝ «Հայերենի կրոնական և եկեղեցական բառերը» (127 մեքենագիր էջ), «Լավ»:

Այս բոլորից հետո Իր հայրական պատգամն ու օրհնությունն է տալիս Վեհափառ Հայրապետը՝ Մայր Աթոռին և ազգին հոգևոր ծառայության կանչված շրջանավարտ սարկավագներին՝ այս առթիվ, նաև հայտնելով Իր սրտի ուրախությունն ու գոհունակությունը հետևյալ խոսքով.

ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆԻ 1976—1977 ՈՒՍՏԱՐԱՎԱ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ԱՎԱՐՏԱՃԱՌԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԹԻՎ

Այսօր մեզ համար տոնական մի օր է, որովհետև մեր հոգևոր ճեմարանի շրջանավարտ սաներից հինգը իրենց ավարտաճառերի գնահատականը ստացան և արժանացան ճեմարանի վկայականները ստանալու: Ամեն անգամ, երբ Մենք այս

հարկի տակ ենք լինում, չենք կարող չհիշել նաև այս հաստատության անցյալը: Կարծում ենք, թե մեր ներկան լուսավորվում է մեր անցյալով: Երանի թե մենք բոլորս լրիվ կարողանայինք ըմբռնել ու հասանունն ունենք աշխարհում, սակայն, այնուամենայնիվ, այս հոգևոր ճեմարանը իր գոյության նպատակը պահպանել է իր նախկին հոգևոր, մշակութային, և՛ հայրենասիրական իմաստով: Մենք այսօր փոքր



Շրջանավարտ սարկավագները հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի հետ ճեմարանի շենքի առաջ

կանալ այս հաստատության գոյության իմաստը մեր պատմության ընթացքին, մեր ժողովրդի և եկեղեցու չափազանց ողբերգական պատմության ընթացքին:

Մեր ազգը և եկեղեցին այնպիսի վիճակի մեջ են եղել, գոնե վերջին հազար և ավելի տարիների ընթացքում, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինը համարյա ամեն բան է եղել մեր ժողովրդի համար, թե՛ մի տեսակ հոգևոր պետություն, թե՛ հոգևոր դաստիարակության կենտրոն, թե՛ հայագիտության կենտրոն, թե՛ հայրենասիրական շարժումների մղիչ ուժ: Հոգևոր ճեմարանն էլ նույն առաքելությունն է ունեցել դարերի ընթացքում:

Թեև մեր ժողովրդի կյանքի պայմանները, մանավանդ վերջին 60 տարիներից ի վեր, հիմնովին փոխվել են ու բարելավվել, մենք արդեն ազգային պետություն ունենք, կազմակերպված ազգություն ենք, մեր դրոշն ու թվով հոգևորականներ ունենք Հայաստանում և արտասահմանում. թե՛ համրանքով փոքր, թե՛ որակով անբավարար: Հետևաբար մեր առաջ դրվում է շատ սուր կերպով հարցը՝ պատրաստել հայ եկեղեցու և հայ հավատացյալ ժողովրդի համար հոգևորականներ, որոնք լուսավորված միտք ունենան, գոնե գիտական բավարար չափով և ունենան նաև առաքելության զգացում: Մենք պետք է աղոթենք առ Աստված, որպեսզի ներշնչյալ անձինք նվիրի մեր եկեղեցուն, որպեսզի մենք կարողանանք իսկապես պատրաստել արժանավոր հոգևորականներ: Եվ դա շատ դժվար գործ է, բայց այդ դժվար գործը պետք է մենք կարողանանք կենսագործել, որպեսզի մեր եկեղեցին շարունակե իր փառավոր երթը մեր ժողովրդի կյանքում:

Հոգևոր ճեմարանն այսօր էլ, Մեր կարծիքով, բավարար բարձր մակարդակի վրա

է գտնվում, սակայն Մենք երազում ենք ու սպասում ավելին: Բարեբախտաբար մեր կյանքի արտաքին և ներքին պայմանները նպաստավոր են և հետևաբար կմնա մեզ առավել կենտրոնացնել մեր ուժերը, մեր աշխատանքը, մեր ուշադրությունը, որպեսզի և մեր հոգևոր ճեմարանը հետզհետե ավելի զորանա և նրա շրջանավարտները հետագայում մեզ հուսախաբ չանեն: Մեզ համար սա շատ կենսական մի հարց է, կարողանալ պատրաստել շրջանավարտներ, որոնք իսկապես նվիրվեն հոգևոր ասպարեզին՝ կրոնական, մշակութային և հայրենասիրական կոչումի գիտակցությամբ:

Այսօր Մենք գոհունակությամբ արձանագրեցինք արդյունքները մեր հինգ սարկավագների աշխատանքների: Մենք երկու պարագա կուզենք ընդգծել միայն: Նախ որ մեր շրջանավարտները ազատ կերպով և գեղեցիկ կերպով, գրեթե անսխալ կերպով կարողացան արտահայտել իրենց մտքերը մշակված հայերեն լեզվով: Ուրեմն նրանք ապացույցը տվեցին, որ այս 5—6 տարիների ընթացքում յուրացրել են մեր մայրենի լեզուն գրեթե կատարելապես: Հայ լեզվի իմացությունը մեր հոգևոր ճեմարանի առաջնահերթ հարցերից մեկն է, անշուշտ: Սա Մենք մասնավոր գոհունակությամբ ենք ասում և վկայում, նաև Մեր ջերմ գնահատանքը բերում մեր բոլոր դասախոսներին, որոնք մշակեցին հայ լեզուն մեր սաների գիտակցության մեջ: Հուզիչ է հաստատել այսօր, որ մեր հինգ սարկավագներից մեկը, որ մոտ երեք ու կես տարի առաջ ոչ մի բառ հայերեն չէր իմանում՝ Սորին սարկավագը, այսօր գերազանց իր պաշտպանության ընթացքին նաև գերազանց կերպով օգտագործեց հայերեն լեզուն: Սա կրկին անգամ խոսում է այն մասին, որ մեր հոգևոր ճեմարանը կարողանում է մեր սաներին ապագայի մակարդակի հասցնել հայերեն լեզվի իմացության տեսակետից: Հետո երկրորդ հաստատումը, որ Մենք գոհունակությամբ ենք կատարում, այն է, որ մեր հինգ սարկավագներն էլ այսօր ապացույցը տվեցին իրենց բավական կազմակերպված մտքին ու զգացումներին: Նրանք ապացույցը տվեցին որ արդեն հնարավորությունն ունեն հետագային որևէ գիտական աշխատանք կատարելու, որ ձեռք են բերած ոչ միայն լեզվի իմացությունը, այլ նաև կազմակերպված մտքով ու գիտական մեթոդներով հետագային ուսումնասիրություններ կատարելու: Սա էլ Մեր կարծիքով գնահատելի արդյունք է, որովհետև, և այս խոսքը հատկապես ուզում ենք ուղղել մեր շրջանավարտներին, եթե նրանք պիտի կարծեն, թե իրենց ուսման շրջանը արդեն վերջացած է և հետայսու միայն գործնական աշխատանքի պիտի լծվեն հոգևոր ասպարեզում՝ այդ պարագային նրանք սխալված կլինեն: Իրականության մեջ նրանք հոգևոր ճեմարանն ավարտելով, ձեռք բերեցին ոչ թե ինչ-որ ամբողջական իմաստով ուսում գիտության, այլ նրանք ձեռք բերեցին ճեմարավորությունը հետայսու ինքնազարգացման ճանապարհով առաջ ընթանալու և ամբողջացնելու իրենց գիտելիքները և շարունակելու իրենց մտավոր աշխատանքը, որովհետև մտքի աշխատանքը գոնե երիտասարդի մը համար, երբեք պետք չէ դադարի: Ով որ իր մտավոր աշխատանքի ճանապարհին կանգ առնի, չի կարող նոր հեռանկարների ճանապարհով հառաջ ընթանալ, զարգանալ ու կատարելագործվել:

Մենք կխորհինք, թե մեր հինգ սարկավագները այս նախապայմանները ձեռք բերեր են: Որով մաղթում ենք նրանց որպեսզի մնան ուսումնասիրող երիտասարդներ և շարունակեն ընթերցումներով և աշխատասիրություններով իրենց մտավոր գործունեությունը նաև հետայսու, նույնիսկ մինչև խոր ծերություն: Այս մի քանի խոսքերից հետո ուզում ենք շնորհավորել մեր շրջանավարտ սարկավագներին, բերել իրենց Մեր օրհնությունները և ամենաբարի մաղթանքները բաջառողջության՝ մարմնո և հոգվո: Հոգվո առողջություն, դա նշանակում է հետևողական կերպով շարունակել գործել այն ճանապարհով, որ ցույց տվեց նրանց մեր հոգևոր ճեմարանը: Այսինքն մենք ապասում ենք ձեզանից, սիրելի սարկավագներ, որ հետագա տարիների ընթացքում դուք զորանաք, աճեք և դառնաք մեր եկեղեցու գինվորյալ միաբանները, հոգևոր աշխատանքի լծվելով մեր ժողովրդի կյանքում, լինի այդ մայր հայրենիքում թե արտասահմանում: Ձեզ միշտ փայլուն հաջողություններ և օրհնություններ Մեր սրտից. ամեն:

Վենետիկ Հոր խոսքից հետո շրջանավարտները բուռն ծափահարությունների ներքո Վենետիկ Հայրապետից աջահամբույրով ստանում են հոգևոր ճեմարանն ավարտելու վկայականներ և մեկական ժամացույց, որ իրենց կյանքում գնահատել կարողանան ժամանակի արժեքը:

Հանդիսությունն ավարտվում է Տերունական աղոթքով և Վենետիկ Հայրապետի «Պահպանիչ»-ով:

ԱԹԱՆԱՍ ՔԱՀԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ



ՎԱՐԴԱՊԵՏԱԿԱՆ ԱՍՏԻՃԱՆԻ ՏՎՉՈՒԹՅՈՒՆ

Ս/թ. փետրվարի 4-ին, Վեհափառ Հայրապետի բարեհաճ կարգադրությամբ, Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցում Մայր Աթոռի միաբան տ. Պսակ արքեպիսկոպոս Թումայանը վարդապետական աստիճան տվեց Մայր Աթոռի միաբան տ. Ավագ աբեղա Ասատուրյանին:

Տ. Ավագ վրդ. Ասատուրյանը (ավազանի անունով՝ Վազգեն) ծնվել է Բաղդադում 1942 թ.: Իր սկզբնական կրթությունը ստացել է Բաղդադի հայոց Թարգմանչաց և Սվաճյան ազգային վարժարանում: Այնուհետև նա սովորում է Հիսուսյան քոլեջում և Ալ Հիքմա համալսարանում: 1968 թ. մեկնում է Միացյալ Նահանգներ՝ իր ուսումը կատարելագործելու նպատակով, ուր սովորում է ս. Փրոքոփիս քոլեջում: 1970 թ. ավարտում է այն հաջողությամբ և ստանում «Պսակավոր արվեստից» տիտղոսը: Այնուհետև տ. Ավագ վարդապետն ուսանում է Նյու Օռլեան Թուրեյն համալսարանում, որն ավարտում է փիլիսոփայական գիտությունների մագիստրոսի աստիճանով: 1973 թ. հաճախում է Նյու Յորքի ս. Վլադիմիր օրթոդոքս համալսարան, ուր 1976 թ. ստանում է աստվածաբանական գիտությունների մագիստրոսի աստիճան՝ «Ս. Գրիգոր Նարեկացին որպես միստիկ» ավարտաճառի համար:



1975 թ., ձեռամբ ԱՄՆ-ի արևմտյան թեմի հայոց առաջնորդ տ. Թորգոմ արքեպիսկոպոս Մանուկյանի, Նյու Յորքի հայոց ս. Վարդան եկեղեցում ձեռնադրվում է սարկավագ: 1976 թ. սեպտեմբերին ժամանում է ս. Էջմիածին, ուր իբրև ազատ ունկնդիր հետևում է հոգևոր ճեմարանի հայագիտական և եկեղեցագիտական դասընթացներին՝ միևնույն ժամանակ դասավանդելով անգլերեն լեզու:

1977 թ. մայիսի 29-ին, Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի ձեռամբ, ստանում է կուսակրոն քահանայի աստիճան:

Վեհափառ Հայրապետը փետրվարի 5-ին Բաղդադում խոսած իր քարոզում ցանկություն է հայտնում, որ տ. Ավագ վարդապետը հետագայում գործի Բաղդադի հայ համայնքի ծոցում որպես «մշակ առանց ամօթոյ», որպես հարազատ զավակը և քաղաքացին Իրաքի այս օրինյալ հողին և որպես հավատարիմ սպասավորը Հայաստանյայց եկեղեցու և Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է հայր սուրբին և մաղթում եկեղեցանվեր ապագա բեղուն գործունեություն՝ ի մխիթարություն Հայոց Հայրապետի և ի պայծառություն Իրաքի հայ հավատացյալ համայնքի հոգևոր կյանքին:



Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏ ԱՆՏԻՈՔԱՑԻ*
(354—407)

Ս. ՀՈՎՀԱՆ ՈՍԿԵԲԵՐԱՆ ՀԱՅՐԱՊԵՏԻ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ս. Հովհան Ոսկեբերանի մատենագրական վաստակի մեծագույն մասը մեզ հասել է Ե դարի մեր վարդապետների թարգմանությամբ:

«Աստվածաշունչ գրքեն ետքը, և գրեթե անոր հավասար, մեր մատենագրության ոսկեղեն դարու ամենաընտիր և թանկագին ընծայք են սրբոյն Հովհաննու Ոսկեբերան հայրապետի հոգելից և սրտառուչ ճառից և մեկնությանց թարգմանությունք...

Թարգմանիչք մեր երբ ի Բյուզանդիա հասան, անոր հոչակվն և իմաստուն գրվածոց համբավովը լցված գտան քաղաքն, ուստի մեկեն ձեռք զարկին անոնց թարգմանության: Հավանորեն Եզնիկա և իր ընկերակցաց և դասակցաց կպատկանի այս ընտիր աշխատասիրությունն, որոնց մեջ գլխավոր սեպված են իրավամբ **Աւետարանագիրն Մատթէոս, ի թուղթսն Պաւղոսի, Մեկնութիւնն Եսայեայ,** մասն մի **Մեկնութեան Յովհաննու** և ճառք բազումք»[48]:

«Ս. Հովհան Ոսկեբերան՝ ընդհանուր եկեղեցվո պատմության ամենապատկառելի և ամենահամակրելի դեմքերից մեկը, բոլոր եկեղեցական հայրերից ավելի ընդարձակ տեղ է բռնում մեր նախնի գրականության մեջ...: Նրա անթիվ ճառերից շատերը թարգմանվել են հայերեն՝ գրերի գյուտից անմիջապես հետո. պահված կան ամենաընտիր ձեռագրերում (հատկապես Հ. 886=906=998 Պետրոս Գետադարձի 1045 թ.-ին գրել տված նշանավոր երկաթագրի մեջ) և գրված ամեն տեսակ ճառընտիրներում՝ իբրև ամենասովորական նյութ եկեղեցական հրահանգության... Նույնչափ հին ընտիր թարգմանությամբ են, և իբրև ս. Գրքի լավագույն ուսուցիչ ավելի իսկ արժեքավոր քան ճառերը՝ Ոսկեբերանի մեկնությունները, որոնցից շատերն էլ ճառական բնավորություն ունեն»[49]:

Ոսկեբերանի մատենագրական վաստակի մեջ «կա պատարագ մը, սուրբ Գրոց մեկնություններ, քահանայության վրա ճառ մը, և բազմաթիվ քարոզներ, որոնց մեծ մասը թարգմանված են Ե դարու ընտրելագույն գրաբարով, և եկեղեցվո հայրերուն ամենեն մեծարժեք գործերը կներկայացնեն»[50]:

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1977 թվականի № ԺԲ-ից և 1978 թվականի № Ա-ից:

[48] Մատենադարան հայկական թարգմանութեանց նախնեաց..., Վենետիկ, 1889, էջ 581—582:

[49] Կնիք հաւատոյ... հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ L):

[50] **Թորգոմ պատրիարք Գուշակյան,** Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 117:

Ոսկեբերանի հայերենի թարգմանված մատենագրական վաստակի լեզուն և ոճը համարվում են դասական իրենց հատակության, ճշգրտության և գեղեցկության համար, «յորս ճշդութիւն և ճարտար ամփոփութիւն ըստ արուեստի թարգմանութեան՝ սրցին ընդ գեղեցկութեան և յստակութեան հայերէն լեզուի»[51]: Ե դարի առաջին հիսնամյակի մեր նախնյաց առաջին թարգմանությունները (Ոսկեբերանի մեկնություններն ու ճառերը, Եվսեբիոս Կեսարացու «Քրոնիկոն»-ը, ս. Սահակի և ս. Մեսրոպի, Եզնիկի ինքնագիր ստեղծագործությունները և այլն) համարվում են «առանց իրիք երկմտութեան, թէ վասն հայերէն լեզուի ամենայն գեղեցկութեան, յստակութեան և մեծութեան աղբեր... և դիպող ոճ ի հայերէն մատենագրութեան բուն ոսկի դարու, վասն կանոնաւորն ընթացից, վասն ճիշտ բանից, առատ են ազգի-ազգի ասացուածոցն և անուանցն, վասն պարզն զարդուց, և զօրեղ դարձուածողաց, որովք է պատեն ի զօրաւոր ճարտարիսութիւն, ի լուսաւոր փիլիսոփայութիւն և յամենայն իսկ ճշգրտագոյն մտածողութիւն»[52]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց մատենադարանում միայն պահվում են Ոսկեբերանի մատենագրական վաստակի ամբողջական կամ հատվածական բազում թարգմանություններ[53]:

Ոսկեբերանի մատենագրական վաստակի հայերեն առաջին տպագրությունը եղել է՝

Մեկնութիւն սրբոյ Աւետարանին՝ ըստ Յօհաննու. տպագրեալ ի հովանաւորութեան տեառն Աստուածատրոյ սրբազան կաթողիկոսին ամենայն Հայոց. և ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղեմի և Կ. Պոլսոյ՝ Յօհաննիսի արքի եպիսկոպոսին, ընդ հովանեաւ սուրբ Աստուածածնի բազմահաւաք եկեղեցւոյն, ի Կ. Պոլիս քաղաքի, ի տպարանի Գրիգոր դպրի Մարսլուանեցւոյ, 1717 թ. 982 էջ[54]: Սույն վերնագրին հաջորդում է հոգելից և բովանդակաշատ «Նախերգանք և Յորդորմունք վասն մեկնութեան գրոյս առ ընթերցողաց անձինքս»[55]: Հաջորդ՝ 12-րդ էջի վրա Ոսկեբերանի նկարն է Աստվածաշունչ «ի ձեռին ձախոյ» և հայրապետական գավազան «ի ձեռին աջոյ» հայկական ոճի հայրապետական լրիվ զգեստավորմամբ:

Հովհաննու Ավետարանի մեկնությունը սկսվում է 13-րդ էջից և ավարտվում է 977-րդ էջով: Մեկնությունը բաղկանում է 87 ճառերից և «յորդորակ»-ներից, և երկու մասերից: Առաջին մասը 45 ճառ, երկրորդ մասը՝ 42 ճառ: Ամեն մի ճառ համարվում է «աստուածախօս» մի գիրք:

Մեկնությունը սկսվում է Հովհաննու Ավետարանի Ա գլխի առաջին համարից, «Ի սկզբանէ էր Բանն և Բանն էր առ Աստուած», և ավարտվում է ԻԱ գլխի 15 համարով՝ «և իրև ճաշեցին» նախադասությամբ[56]: Մեկնության 957-րդ էջում տպագրվել է «Ցիշատակարան սրբոյն ըստ պատշաճի յանգման ի Կիրակոսէ մեծէ»: Կիրակոս «Հանճարեղ և գիտնական» վարդապետը դիմել է Կ. Պոլսի ժամանակի նշանավոր «աստուածակիր լուսափայլությամբ լցեալ, աստուածաշարժ հայր և ուսուցիչ հանուրց» Հովհաննես Կոլոտ պատրիարքին, որ օգնի տպագրության: Այնուհետև Կիրակոս վարդապետը սրտագին մի կոչով դիմում է հայ եկեղեցու ուղղափառ օտարակներին՝ «մանկանց եկեղեցւոյ», որ սիրեն ու կարդան այս հոգելից մեկնությունը:

Կիրակոս վարդապետը շատ աշխատանք է թափել հայերեն թարգմանության վրա, այն տպագրության պատրաստելու համար, բայց «ո՛չ յերիւրել, ո՛չ յաւելուլ, ո՛չ պակասեցուցեալ»: Վերջում նա համբերատարությամբ խնդրում է ներել «սխալանաց իմոց»: Կիրակոսը նախքան տպագրությունը բաղդատել է Ոսկեբերանի Հովհաննու մեկնությունը ասորերենի և հունարենի հետ, ասորերենը գտնելով «շաղփաղփ այլատարազ», օգտագործել է հունարեն բնագիրը, այն գտնելով «ի մերս հայկազանցս արամեանս ազգ և լեզու... յարմար գոյ յունականն բարբառ ի մերս ըստ թարգմանութեան»:

Կիրակոս վարդապետը Ե դարի առաջին հիսնամյակի մեր թարգմանիչ վարդապետների աշխատանքը շատ բարձր է գնահատել և հիացումով է խոսել նրանց մասին. «Հարք մեր են դաստիարակք մեզ, երախ-

[51] Քաղուածոյք ի թարգմանութեանց նախնեաց. հանդերձ յոյն բնագրաւ, ի Վիէննա, 1849, «Նախադրութիւն»:

[52] Նույն տեղ, «Նախադրութիւն»:

[53] Ցուցակ ձեռագրաց, Ա հատոր, 1965, էջ 1559, հատ. խրատ. քարոզ. մեկնութիւնք. աղօթք. ներբողեանք, վասն անկար պատմուճանի, յաղագս սանմանի կանոնաց, յԱնտիս Աստուածածնին, ի տօնի պասեքին և այլն: Ցուցակ ձեռագրաց, Բ հատոր, 1970, էջ 1395, Աղօթք. դասանութիւն, կանոնք. պատմութիւն Յովհաննու Կարապետի, վարք. վերադարձումն Մարմնոյն, մանրանկար և այլն:

[54] Հայ հնատիպ գրքի մատենագրական ցուցակ, 1512—1800, էջ 77:

[55] Անդ, էջ 2—11:

[56] Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, էջ 248—315:

տաւորք են մեզ և բիւր բարութեանց պատճառք», հետևաբար թելադրում է նա «մանկանց եկեղեցոյ», միշտ երախտագիտությամբ հիշել նրանց սուրբ անունները, շեշտելով, թե նրանք «զորքանս կրեցին հոգս և տքնութիւնս վասն մերոյս օգտի... նոքա յիշելոյ են արժանիք, այլ նաև բիւրոց գովեստից: Հետեւեսցուք ուրեմն հանճարաւոր առաջնորդացն այնոցիկ և զաշխատութեանս գործս նոցին միշտ ընթեռնելով և լսելով ի միտս մեր նկարեսցուք կուռն ջանիւ և մեծաւ փութով»:

Մեկնության 985-րդ էջում տպագրվել է նաև մի այլ «Յիշատակարան ի տպողէ սրբոյ մատենիս», որի մեջ խնդրվում է հիշել նույնպես «զանպիտան և ամենեցուն ծառայ, զբազմամեղ Գրիգոր դպիրս... զծընօղս իմ զՄկրտիչ և զԹուրվանտէն և զհանգուցեալ եղբարսն իմ, նաև զորդեակն իմ զՆերսէս, որ բազում աշխատանս կրեաց ընդ իս ի տպագրութեանս, ի շարելն և զցրելն զգիրսն, այլ եւ զդեռաբոյս զփոքրիկ եղբայր սորին հինգամեայ զԹագորն... ապա զաշխատակիր մշակսն տպագրատանս զԿեսարացի Յակոբ դպիրն, զմրոտարկ Եսային, և զլեհացի Գրիգորն...

Հուսկ յետոյ քան զամենեսին զբազմաշխատ սրբագրօղս սրբոյ մատենիս, զյոգնամեղ Պաղտասար չնչին դպիրս միով եւեթ «Հայր մեր»-ի յիշատակել առ Քրիստոս մի դանդաղիք»:

«Յիշատակարան»-ում Պաղտասար Դպիրը ջերմորեն խնդրում է նաև հիշել «զխոհեմամիտ և զգերապատիւ զՆերսէս եպիսկոպոսն Եփեսոսի, որ ըստ բարեհաճ կամաց իւրոց ետ մեզ օրինակ մի ընտիր, գրեցեալ ի վաղուց հետէ, վասն տպեցման սոյն սրբոյ մեկնութեանս»:

Ներսես եպիսկոպոս Եփեսացու ձեռագիրը ընդօրինակվել է «լաւ և ընտիր օրինակէ», գրիչ Երեմիա վարդապետի ձեռքով: Պաղտասար Դպիրը օգտագործել է նաև Ոսկեբերանի Հովհաննու Ավետարանի տպագրության ժամանակ, Կիլիկիո «Տանն Սսոյ ձեռամբ տէր Ղազար քահանայի» գրված մի այլ ընտիր ձեռագիր:

Սույն մեկնության 987-րդ էջում տպագրվել է Պաղտասար Դպրի «Երգ ներբողական առ սուրբն Յոհան Ոսկեբերան» 84 տողից բաղկացած և «Արգոյ մշակ մըշտավաստակ յարահետ» սկզբնավորությամբ «Զոն»-ը: 989 էջում տպագրվել է նույնպես ս. Կյուրեղ Աղեքսանդրացի հայրապետի «Ի պարապմանց գիրսն՝ ԼԶ գլուխ... խոստովանիմ զՆա Որդի Աստուծոյ և Աստուած համագոյ»: 966—972 էջերում կա «Համառօտ ցանկ ճառից սրբոյ մատենիս»:

Բացի Ոսկեբերանի Հովհաննու մեկնությունից, Գրիգոր Մարզվանեցու և Աստվածատուր Կ. Պոլսեցու տպարաններում, Հովհաննես Կոլոտ պատրիարքի օրով, «Նրա նախաձեռնությամբ և հովանավորությամբ հրատարակվել են շուրջ 80 անուն հայ դավանության և հայ ժողովրդի պատմության վերաբերյալ արժեքավոր գրքեր»՝ «Հայ ժողովրդի մեջ դավանաբանական հողի վրա սեփական ուղղափառության գիտակցությունն ամրապնդելու... ազգային գիտակցություն զարգացնելու համար տպագրության են տրվում և հայկական միաբնակության այնպիսի անխոնջ և եռանդուն պաշտպանի մեծահատոր գրվածքները, ինչպիսին էր Գրիգոր Տաթևացին», և «հայոց գրականության հին հիշատակարանները... հատկապես այն նպատակով որ հայերը կարդան և հասկանան, որ իրենք դավանում են Գրիգոր Լուսավորչի դրած հավատը և կարողանան պատասխան տալ հակառակորդներին»[57]:

Չափազանց հուզիչ և արտագրավ հանգամանքը այն էր, որ նման հանրօգուտ գրքերի հրատարակության համար ստեղծվում է համաժողովրդական գանձանակ և հրատարակչական ընկերակցություն: Հայ եկեղեցու հավատարիմ և հայոց ուղղափառ դավանության պաշտպան «Հայ եկեղեցոյ մանկունք» ի մի են հավաքվում, հասարակաց սնդուկ են հաստատում, նման գրքեր հրատարակելու համար: Սա եզակի և ուսանելի փաստ է մեր եկեղեցու պատմության մեջ: Այս ազնիվ մարդիկ դիմում են բոլոր հայերին, որ օգնեն այդ բարի նպատակի համար: Մասնակցում են նաև աղքատները: Հավաքում են մեծ գումարներ: Հրատարակիչների ընկերակցությունը հայտարարում է, որ հետզհետե պիտի հրատարակվեն հայ եկեղեցու ուղղափառության և հայ ժողովրդի պատմության նվիրված այլ դասական գրքեր, որոնք ժողովրդին պիտի բաժանվեն և տարածվեն «ձրի»[58]:

Ս. Հովհան Ոսկեբերանի հայերենի թարգմանված և 1734-ին Կ. Պոլսում տպագրված երկրորդ կարևոր գործը ժամանակագրական կարգով հետևյալն է.

Յովհաննէս Ոսկեբերան, ներբողեանք ասացեալ այրն Աստուծոյ Ոհան Ոսկէբերան, Ապաշխարութեան վարդապետն, ի վերա սրբոյն Գրիգորի Լուսաւորչին մերոյ:

Ս. Գրիգոր Լուսավորչի ոսկեբերանյան

---

[57] **Լեո**, Հայոց պատմություն, հտր. III, Երևան, 1946, էջ 947:

[58] **Լեո**, նույնը, էջ 947: Տես նաև **Կյուրեղ Աղեքսանդրացի**, Գիրք պարապմանց, Կ. Պոլիս, 1717, «Յիշատակարան»:

սույն գեղեցիկ ներբողյանը տպագրվել է Կ. Պոլսում 1734 թվականին, դարձյալ Գրիգոր դպիր Մարգվանեցու հայտնի տպարանում «ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի աստուածանարտար Աբրահամու Մշեցի սրբազան կաթողիկոսին ամենայն հայոց և ի պատրիարգութեան սրբոյ Երուսաղեմի աստուածազարդ քաղաքի Գրիգորի հրեշտակակենցաղ սրբոյ և մեծի վարդապետի ամփոփեցոյ, և ի պատրիարգութեան Կ. Պոլսոյ տեառն Ոհաննու քաջիմաստ և աստուածաբան վարդապետի քաղիշեցոյ, ՌՃՀԳ թուին (1734 թ.), մլ. (130) էջ»[19]:

Ներբողյանը բացվում է ս. Գրիգոր Լուսավորչի հայկական եկեղեցական ոճի հայրապետական լրիվ զգեստավորված նկարով, խաչազարդ հովվապետական գավազանը ի ձեռին: Նկարի ներքևում տպագրվել է «զմարգարէութիւն Եսայեայ ի վերա սրբոյն Գրիգորի. ո՞ լուաւ, ո՞ ետես այսպիսի՞ ինչ, եթէ երկնեաց երկիր ի միում աւուր... եւ ծնաւ ազգ մի ողջոյն զմիանգամայն»:

Այնուհետև հաջորդ 126 էջերի վրա Ոսկեբերանը երախտագիտությամբ, մեծ հիացումով շարադրել է սբանչելի վարքը «սրբոյն Գրիգորի հայոց Մեծաց Հայրապետին, ի Կոկիսոն Հայոց, մինչ յաքսորն էր, ի խնդրոյ հայագին ուրեմն եպիսկոպոսի համազգոյ նորին Դեռսկորոս անուն կոչեցելոյ, այլևս յոգնախումբ բազմութեանն»:

Ս. Հովհան Ոսկեբերանը Լուսավորչի վարքը շարադրելիս օգտվել է հայոց հայրապետի խորվիրապյան 13 տարիների չարչարանքների, առաքելական քարոզության, Հայաստան աշխարհի բրիստոնեության դարձին, նրա ճգնության ու մահվան նվիրված վարքագրական (հավանաբար հունարեն աղբյուրներից), ինչպես նաև «Փոքր Հայքի Կոկիսոն քաղաքում» Լուսավորչի կյանքի և գործունեության «և անվան շուրջ հյուսված հայկական ավանդություններից»[20]:

Ոսկեբերան հայրապետը Լուսավորչի սույն ներբող-ճառը արտասանել է Կոկիսոն քաղաքում, «յոգնախումբ բազմութեանն» առաջ, «որք ժողովեալք էին յաւուր տօնի յիշատակի մեծաճոչակ նորին սուրբ Լուսաւորչին արեւելեան աշխարհին»:

Լուսավորչին նվիրված ներբողյանը բնկրվում է այսպես. «Հրաշալի մեզ տօնս այսօր և պայծառագոյն քան զսովորական շարադրութիւնս», որովհետև «զսուրբ հայրապետն, ճգնազգեաց նահատակն և աստուածազգեաստ մարտիրոսն, երկրորդ Մովսէս... լինէր ի մէջ հօտից իրրև զհովիւ քաջ և առատապէս սերմանէր զԲանն կենաց ի քաղաքի և յանապատի և հանապազորդ աղօթիւք արձակէր աղբիւրս արտասուաց և վտակս վարդապետութեան և ողողանէր զբոյս անդոյն զի մի խորշակահար լիցի ցորենն ի ջերմութենէ սատանայի...

Երանելի՞ քեզ, անապատ Հայաստանեայց որ ժողովեցեր զարեգակնդ բազմանառագայթ ի ծոց քո և լուսաւորեցեր արփիափայլ ճշուլիւք դորա» (էջ 110—115):

Ներբողյանի 117—126 էջերում հրատարակիչ Մաթեոս Գրիգորը ամփոփ կերպով ներկայացնում է ըստ Ագաթանգեղոսի «Հայոց պատմութեան» Լուսավորչի կյանքի, գործունեության և վարքագրության համառոտ պատկերը, Լուսավորչի հոր՝ Անակ պարթև իշխանի արքայասպան ծանոթ արարքից մինչև Լուսավորչի կաթողիկոս ընտրությունը:

Տպագրված ներբողյանն ավարտվում է 127—130 էջերում հրատարակչի «Յիշատակարան»-ով: Նրա ազնիվ ցանկությունն է եղել ս. Գրիգոր Լուսավորչի մասին Ոսկեբերանի ներբողյանը հրատարակելով ցույց տալ «լուսավորչաձին երամոցդ», որ «ազգն մեր սիրելի, կարող լինիցի ճանաչել թէ որպիսի՞ առն սրբոյ երանելւոյ իցեն աշակերտեալք և մի՛ ի դերեւս հանիցեն զբախտիս սրբազանի հօր իւրեանց, հետեւելով ի ճգամբք նորին կատուցեալ եկեղեցւոյ սրբոյ»:

Ներբողյանի «տպեցման յիշատակարանում» (էջ 127) հրատարակիչը խնդրում է հիշել «զԿամրկապցի Նազարի որդի Մաթեսի Մակարն, զեղբայր իւր մաթեսի Առաքելն, զհանգուցեալ եղբայրը իւր մաթեսի Մարտիրոսն, որք ջերմեռանդ սիրով ետուն զգին թղթոց տպեցեալ գրգոյս... զտպող գրգոյս մաթեսի Գրիգորս, հանդերձ ծնողովքս ամէն» (էջ 130):

Մեզ հասել է Գրիգոր Վկայասեր հայոց կաթողիկոսի (1066—1105) թարգմանությամբ ս. Հովհաննես Ոսկեբերանի վարքը, որը թեև Ոսկեբերանի վաստակի մեջ չի մտնում, բայց կարևոր են նրա հայերեն թարգմանությունն և ապա տպագրությունը 1752 թվականին Վենետիկում:

Ոսկեբերանի սույն վարքը կոչվում է **«Պատմութիւն վարուց** (սբանչելեաց և դիպուածոց սրբոյն) **Յովհաննու Ոսկեբերանի** (հայրապետին Կ. Պոլսոյ, Տիեզերաց Լուսաւորչի ծննդեան և գեղեցիկ քաղաքավարութեան) **թարգմանեցեալ ի յու-**

---

[19] Հայ հնատիպ գրքի մատենագրական ցուցակ, 1512—1800, Երևան, 1963, էջ 102:

[20] Կենիք հատատոյ, նույնը, էջ L:

նականէ ի հայս ի Գրիգորէ կաթողիկոսի Վկայասէր կոչեցելոյ»[61]:

Ոսկեբերանի սույն վարքը հրատարակվել է Վենետիկում, 1752-ին, Սարգիս արքեպիսկոպոս Կոստանդնուպոլսեցիի նախաձեռնությամբ: Գիրքը բաղկանում է 318 էջերից և 32 գլուխներից:

Ոսկեբերանի մատենագրական վաստակի հայերենի թարգմանված և տպագրված գործերի մեջ կարևոր տեղ է գրավում նաև նրա Մատթեոսի Ավետարանի մեկնությունը: Սույն մեկնության ընդհանուր վերնագիրն է.

Յովհաննու Ոսկեբերանի Կոստանդնուպոլսի եպիսկոպոսապետի Յաւետարանագիրն Մատթէոս, գիրք կրկին. (Ա և Բ գիրք), Վենետիկ, ս. Ղազար, 1826, 763 էջ[62]:

Առաջին գիրքը սկսվում է 11 էջից և ավարտվում է 400 էջում: Երկրորդ գիրքն սկսվում է 401 էջից և ավարտվում է 763 էջով:

Ոսկեբերանի Մատթեոս Ավետարանի մեկնությունը ունի նաև **«Գիրք երրորդ թերի, և ի թուղթսն Պաւղոսի հատուածք»** տպագրված Վենետիկում, 1826-ին, 448 էջից բաղկացած[63]:

Մեկնության Ա և Բ գիրքը բաղկանում է 53 ճառերից, որոնք արտասանված են Անտիոքում, 390—398 թվականներին:

Ե դարում մեր թարգմանիչ վարդապետներն են այն բաժանել երեք գրքերի:

Ա. գիրքը, որը բաղկանում է 25 ճառերից, կոչվում է **Ծննդոց գիրք,** որովհետև սկսվում է Քրիստոսի ծննդաբանությամբ[64], այսինքն պատմում է «զծնունդս նահապետացն և զՏեառն սկիզբն ունելոյ»:

Բ գիրքը, որը բաղկանում է 28 ճառերից, կոչվում է **Կափառնաում,** «զի սկիզբն առնէ ի բանէ և Յիսուս մտեալ ի Կափառնաում»[65]:

Գ գիրքը, որը բաղկանում է 38 ճառերից, կոչվում է **Կեսարացոց** կամ **Փարիսեցոց գիրք,** 1—142 էջ, «վասն անտի սկսանելոյ թէ՝ Յիսուս եկեալ ի կողմանս Փիլիպպեայ Կեսարեայն հարցանէր զաշակերտսն»[66]:

[61] Հայ հնատիպ գրքի մատենագրական ցուցակ, նույնը, էջ 129:

[62] Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 131:

[63] Նույնը:

[64] Նոր Կտակարան, Մայր Աթոռ, 1975, էջ 3—4:

[65] Նույնը, էջ 21:

[66] Նույնը, էջ 31—32:

Սույն հրատարակության մեջ Ոսկեբերանի Մատթեոսի Ավետարանի երեք գրքերի մեկնությունը գրավում է 1—142 էջերը:

Մատթեոսի Ավետարանի մեկնության երրորդ գրքում կան նաև հատվածներ Ոսկեբերանի, **Պողոս Առաքյալի, առ Եփեսացիս, առ Եբրայեցիս, առ Տիմթ. Ա և Բ, առ Տիտոս, առ Կողոսացիս, առ Թեսաղոնիկեցիս Ա** և **առ Փիլիպպեցիս** թղթերի մեկնություններից, 52 ճառեր, էջ 143—447: Սույն 52 ճառերի մեջ հիշվում են. «Յաղագս թէ ոչ ի հարկէ մեղք լինիցի այլ ի չար կամաց», «Յաղագս արժանաւորութեամբ մերձենալ ի սուրբ խորհուրդսն», «Յաղագս սիրոյն Քրիստոսի», «Յաղագս գուսանական խեղկատակութեան», «Յաղագս ագահութեան որ է կռապաշտութիւն», «Յաղագս առն և կնոջ սիրել զմիմեանս» և այլն:

1862 թվականին Վենետիկում առանձին հատորով լույս է տեսնում ամբողջական ձևով **«Յովհաննու Ոսկեբերանի Կ. Պոլսի եպիսկոպոսապետի մեկնութիւն թղթոցն Պաւղոսի առաջին հատոր, մեկնութիւն Տիմոթէոսի, Տիտոսի, Կողոսացոց, Փիլիպպեցոց, Եփեսացոց»,** 942 էջ, հոյակապ աշխատությունը:

Սույն մեկնությունը համարվում է «Հրաշալոյն ի գրուածս, Մատթէոսեան մեկնութեանն համապատիւ և ճոխագոյնս հարս եկեղեցւոյ» (Յառաջաբան): Այնուհետև Ոսկեբերանի մասին վկայվում է. «Չեկաց ոք ի նախնի Հարց առաւելեալ քան զսա, ի գիւտ անակնկալ իմաստից և ախորժալուր բեմբասացութիւն ժողովրդեան և ոչ իբրև զսա պարզ և ընդելական ի բանս» (Յառաջաբան):

Ոսկեբերանի Պողոսյան թղթերի մեկնության հայերեն թարգմանության անգերազանցելի արժեքն ու հոգևոր նշանակությունը գնահատվում է այսպես. «Մեք երախտագէտ սրտիւ զաջ աստուածարեալ մերոյ հայ թարգմանչին համբուրեմք, որ զխոնարհ ոճ շարագրածոյ յունականին գեր ի վերոյ ամբարձ ի հայումս յոճ սքանչելի, պերճ, վսեմ ու քաղցրալուր» (Յառաջաբան):

Ոսկեբերանի Պողոսյան թղթերի հայերեն թարգմանության և տպագրության առաջին հատորը ունի հետևյալ բովանդակությունը. Տիմթ. Ա 18 ճառ և Հորդորակ, Տիմթ. Բ 10 ճառ և Հորդորակ, Տիտոս 6 ճառ և Հորդորակ, Փիլպ. 15 ճառ և Հորդորակ, Կողս. 12 ճառ և Հորդորակ, Եփես. 24 ճառ և Հորդորակ (էջ 1—942):

Բ հատորը ունի հետևյալ բովանդակությունը. Հռովմ. թուղթ 32 ճառ և Հորդորակ:

Հատվածներ Ա և Բ Կորնթ., Գաղտ. Ա և Բ, Թեսաղ., Երր. թղթերի, Գործք առաքելոցի (425—578 էջ): Հատված «ի Յովհաննու մեկնութենէ, մնացորդք» (էջ 579—609), «ի հին թարգմանութենէ»:

Բ հատորում տեղ են գրավել նաև հետևյալ աշխատությունները.

1. Ճառ յորժամ ձեռնադրեցաւ քահանայ, յանձն իւր, և յեպիսկոպոսն և ի բազմութիւն անդր ժողովրդոյն, գրված 386-ին:

2. Բազումք ներբողեանք յամենայն սուրբս, որք վկայեցին յընդհանուր տիեզերս (Պեղագիա կոյս, Իգնատիոս հայրապետ, Մակաբայեցւոցն և ի մայրն նոցա, Բաբելաս վկա և հայրապետ, Ղուկիանոս վկա և այլն):

3. Յանդրիականացն, ճառ Ա, Բ, Դ, Ե, Զ, Ժ, ԺԵ, ԻԱ, գրված Անտիոքում, մեծրն Թեոդոս կայսրի արձանի կործանման առիթով, «զկնի մեծ խռովութեան ժողովրդեանն»:

4. Ճառ ընդդէմ որոց թողեալ զեկեղեցի, դիմեցին ի ձիրնթացս և ի թատերս:

Սույն ճառը արտասանվել է 399 թվականին Կ. Պոլսում, Ոսկեբերանի պատրիարքության առաջին շրջանում, ս. Առաքելոց Մայր տաճարում, Ավագ շորեքշաբթի օրը, երբ տեղատարափ մի անձրև մեծ վնաս հասցրեց մայրաքաղաքին և բնակչությանը: Ոսկեբերանի գլխավորությամբ եկեղեցիներում «պաղատանք և թափօրք յաճախեցին», անձրևը դադարեց Ավագ ուրբաթ օրը, երկինքը պայծառացավ, խաղաղվեց կատաղած բնության տարերքը, իսկ մահից փրկված ժողովուրդը, մոռացած ամեն ինչ, դիմեց մայրաքաղաքի «ձիրնթացս», այսինքն ձիարշավների դաշտ, արհամարհելով մեծ օրվա սրբությունը, և հաջորդ օրն էլ, Ավագ շաբաթ, «փութացան նոքա թատրիական խաղս խէնէշս»: Ոսկեբերան հայրապետը ընդվզեց ժողովրդի այս անվայել ընթացքի դեմ, Մայր տաճարում խոսեց այս ճառը, «ճշգրտութեամբ» նկարագրելով ձիարշավների դաշտում և թատրոնների մեջ կատարված աշխարհիկ խնեշ հանդեսները, և կշտամբեց «դառնապէս» ժողովրդին և ապա «նզովս կարդայ ի վերայ նոցա»:

5. Ճառ Յեւտրոպիոս ներբինի, պատրիկ և հիւպատոս, այր հզօր և մեծափառ...

Ոսկեբերանը սույն պատրիկի «ձեռնարկութեամբ ածաւ յԱնտիոքայ յԱթոռն Կ. Պոլսի»: Հետագայում, Ոսկեբերանի պատրիարքության օրով, պատրիկը շնորհազրկվում է, իսկ Ոսկեբերանը մարդասիրաբար պաշտպանում և հովանավորում է նրան:

6. Ճառ ի փոխադրութիւն նշխարացն և յԵւդոքսիա դշխոյն:

Ոսկեբերանը սույն ճառը արտասանել է Կ. Պոլսում, սրբերի մասունքների փոխադրության օրը, «աշխարհաժողով հանդիսի» ժամանակ, Եվդոքսիա կայսրուհու ներկայությամբ:

7. Ճառ նախքան զաքսորն՝ արտասանված 403-ին, Կ. Պոլսում, իր աքսորից առաջ: Սույն ճառի մեջ երևում է Ոսկեբերանի «հրաշալի օրինակաւ անսասանելի արիութիւն աստուածային ոգւոյ»: Ոսկեբերանը ճառի մեջ իր պատկերավոր խոսքը ուղղելով իր ազդեցիկ հակառակորդների դեմ, Եվդոքսիա կայսրուհու գլխավորությամբ, համբուրելի համարձակությամբ ասում է. **«Բազմակոծակք են ալիք, և զայրացեալ՝ մրրիկն, այլ սակայն բնաւ և զանգիտեմք իսկ ոչ, եթէ երբեք անդնդասոյզք լինիցիմք, քանզի ի վերա վիմի հաստատեալ եմք: Թող վայրենասցի՝ ծովն, վիմին ոտնանել ո՛չ զօրէ: Ասդէ՝ ամբարձցի՝ զալիսն, զՅիսուսի նաւն սուզանել ո՛չ ունի»:**

8. Ճառք Ա և Բ. յորժամ դարձաւ յառաջին յաքսորանացս:

9. Բան եթէ՝ որ անձին իւրում չվնասէ, զնա ոչ որ կարէ վնասել:

Սույն ճառը խոսվել է «ի Կոկիսոն Կիլիկիոյ, յորժամ ինքն էր յաքսորս»: Վերոհիշյալ ճառը գնահատվում է որպես «զքրիստոնէական իմաստասիրութեան բովանդակութիւն գեղեցկապէս յինքն բերեալ»:

Պողոս առաքյալի թղթերի մեկնությանը նվիրված սույն երկրորդ հատորում կան նաև տպագրված բազում հոյակապ ճառեր, որոնցից հիշենք. **«դարձեալ Հերովդիաս մոլեգնեալ, յանդգնի, դարձեալ կաքաւէ, դարձեալ միսանգամ խնդրէ զգլուխն Յովհաննու: ի Հերովդէ անօրէնութեամբ կրտրեալ»**, կինն մեղադրեր, ի գալուստն Քրիստոսի, յաղագս հաւատոյ, ի ձկնորսութիւն Պետրոսի, ի սուրբ Ստեփանոսն, մարմինք ձեր անդամք Քրիստոսի և այլն:

Սույն հատորում տեղ են գտել նաև Ոսկեբերանի «անբնագիրք» և ոչ հարազատ ճառերը (էջ 792—797):

Ոսկեբերանի հայերեն հրատարակված գործերի մեջ մեծ տեղ են գրավում նաև նրա **«Հատընտիր գիրք և ճառք և ներբողեանք», «թարգմանեալ ի յոյն բնագրէ երկասիրութեամբ տեառն հ. Եղիայ վ. Թովմաճեանի** ս. Ղազար, 1818, Ա և Բ հատորները մեկ կազմում»[67]:

Սույն հրատարակության նշանավոր ճառերից են «Առ Թէոդորոս անկեալ», Ա և Բ

[67] Հայ գիրքը..., նույնը, էջ 81—82:

գիրք: Թեոդորոսը Ոսկեբերանի դասընկերն է եղել «ի ճեմարանի Լիբանոսի սոփեստէսին»: Նա ապա լքել է ճեմարանը և «դարձաւ յաշխարհ», որովհետև սիրում էր «զՀերմիոն ոմն կոյս»: Ոսկեբերանն աշխատել է նրան համոզել և վերադարձնել նորից վանք: Այս առթիվ նա գրել է երկու գիրք Թեոդորոսին հասցեագրված:

Ապա «յաղագս կուսութեան» (Բարեօք է մարդոյ ի կին մարդ զմերձենալ), «յաղագս քահանայութեան» վեց գիրք, «ընդդէմ յերանելին Բաբելաս և ընդդէմ Յուլիանոսի և հելլենացոցն»:

Բաբելասը Ոսկեբերանի ամենամոտ բարեկամն էր և հայտնի եպիսկոպոս Անտիոքում: Ոսկեբերանը սույն ճառում խստորեն քննադատում է նաև «հրապարակագոյժ նշանակութիւնն հելլենացոցն և ամբարիշտ գնացիցն Յուլիանոսի», և «ի բարձր գլուխ պանծացուցանել» Բաբելասին:

1861 թվականին Վենետիկում տպագրվել է նաև **«Յովհաննու Ոսկեբերանի Կ. Պոլսի եպիսկոպոսապետի ճառք»**, 916 էջ:

Սույն հրատարակության առաջին բաժնում տեղ են գրավել Ոսկեբերանի «հարազատ և աներկբայելի» ճառեր, իսկ երկրորդ մասում «երկբայականներ» և միայն հայերեն թարգմանությամբ մեզ հասած ճառեր, շուրջ 76 ճառեր, որոնցից մի կարևոր մասը հրատարակվել է ոսկեբերանյան նախորդ տպագրությունների մեջ:

1849 թվականին Վիեննայի Մխիթարյանների տպարանում հրատարակվել է **«Քաղուածոյք ի թարգմանութեանց նախնեաց հանդերձ, յոյն բնագրաւ ի Վիէննա»**, 493 էջ[68]:

Հրատարակությանն մեջ առնված են Հովհ. Ոսկեբերանի մեկնություն Մատթեի՝ ճառք Ա—Ը, ԺԲ—ԺԵ և ԺԹ, ապա Սեբերիանոսի ճառ Է և Եվսեբիա Կեսարացվո Քրոնիկոն (քաղվածաբար) հունարեն բնագիրն ու հայերեն հին թարգմանությունը դեմ առ դեմ զետեղված: Հառաջաբանը «կիսոսի ոսկեդարյան մատենագրության դասական նկարագրին վրա»[69]:

1855 թվականին Վիեննայում հրատարակվել է Ոսկեբերանի **«Ճառ»՝ վասն աղօթելոյ, թարգմանութեամբ Գաթրճեան Հ. Հ. (Գրաբար)**, 16 էջ:

1880 թվականին Վենետիկում հրատարակվել է Ոսկեբերանի **«Եսայեայ մեկնութեան հատուածը...»**: Գիրքը բաղկանում է 472 էջերից, և ավարտվում է 63-րդ գլխով: Այս մասին տրվում է հետևյալ ծանոթագրությունը. «Մինչև ցայս վայր օրինակս մեր (գլ. կդ 10—12): Մնացեալքն պակասին այն է մեկնութիւն երկուց վերջին գլխոց Մարգարէութեանն Եսայեայ»:

Առաջին էջում նշվում է, որ «յօրինակին պակասի մեկնութիւն Ա գլխոյն և 1 համարոյ Բ.ին:

102-րդ էջում դարձյալ նշվում է. «Մինչեւ ցայս վայր գտաք իւրով ձեռովք գրեալ երանելոյն Յոհաննու յունարէն»... «դարձեալ, որպէս յամենայն մեկնութիւնս ս. Գրոց, սոյնպէս և ի մեկնութիւնն սատ Եսայեայ, զմիջինն ունի շաւիղ Ոսկեբերան ի մէջ երկուց հակառակ դպրոցաց Աղեքսանդրեայ և Անտիոքայ, յորոց առաջինն ներշնչումն աստուածային դնէ ոչ յիմաստս միայն, այլև յամենայն բառս սուրբ գրոց. իսկ Ոսկեբերան հակառակ աղեքսանդրեացցն՝ ոչ եթէ զբառս սուրբ Գրոց, այլ զբարոյական և զաստուածաբանական իմաստս սուրբ Գրոց, այլ միայն զգոյշ գալ պատուիրէ մի՛ կարի յաճախել և ընդլայնել զնոսին, զորս և ի կարևորս իսկ չհամարի ի մեկնութեան ս. Գրոց»:

Սույն մեկնությունը հրատարակվել է «յիշատակ Մաղաքեան տոհմին»:

Ոսկեբերանի «Եսայեայ մեկնութեան» թարգմանությունը գործն է «Հաւանաբար Եզնկայ և իր ընկերակցաց և դասակցաց»...:

«Ոսկեբերանի ճառերից շատերը թարգմանվել են հայերենի գրերի գյուտից անմիջապես հետո... Որչափ ընդարձակ տեղ է բռնում այդ ճառերի ցուցակը Զարպհանալյանի հայկական թարգմանության գրքում (էջ 581—616): Այնուամենայնիվ, Էջմիածնի մատենադարանի ձեռագրերում կան բազմաթիվ այնպիսիները, որ նա չի հիշել: Հարկավ դոցա մեջ քիչ չեն անհարազատներ՝ միտումով կամ թյուրիմացությամբ նորան վերագրված, կամ այնպիսիներ, որ վերցվել են նորա ընդարձակ մեկնաբանական գործերից: Բայց եթե բազմակողմանի հետազոտությամբ մի նոր քննական հրատարակություն լինի, միայն Ոսկեբերանի ճառերը թերևս մի ամբողջ հատոր ավելացնեն Մխիթարյանց հրատարակությունների վրա»[70]:

«Կնիք հաւատոյ» ժողովածուում տեղ են գտել Ոսկեբերանի մատենագրական վաստակից հետևյալ հատվածները.

Ի սուրբ Երրորդութիւնն (էջ 40—51), Մեկնութիւն որ ըստ Մատթէոսի Աւետարան (էջ 167—169), որ ի չարչարանս (էջ 248), ի Փարիսեցւոց գրոյն (էջ 278), ի

[68] Հայ գիրքը..., նույնը, էջ 81—82:

[69] Նույնը, էջ 375—376: Եվ «Ընդհանուր գրացուցակ Մխիթարյան գրավաճառանոցի», 1972, Վիեննա, էջ 42:

[70] Կնիք հաւատոյ, նույնը, էջ L:

մեկնութենէ Եսայեայ (էջ 318—319), նորին ի սաղմոսաց մեկնութենէ (319—323), ի մեկնութենէ Երրայեցւոց թղթոյն (էջ 323), յԱւետարանն Յովհաննու (էջ 353—354), նորին առ Կորնթ. յԱռաջին գլխոյն (էջ 354), նորին ի ներբողական խաչին (էջ 355):

Ոսկեբերանյան ճառերի հատվածական հրատարակության մասին տես նաև Հակաճառութիւն Տիմոթէոսի (էջ 26—28, 77)[71]:

Ոսկեբերան հայրապետի «աստվածահրատ լեզուն և աստվածախոս բերանը, որ երիտասարդ հասակեն զարմացուցեր էր զԼիբանիոս իր ուսուցիչն և ճարտարախոսության վեհագույն վարժապետը, բահանայական և հայրապետության նվիրական ավագության բարձրանալեն ետքը՝ հիացուցեր էր զԱնտիոք և զԲյուզանդիոն, պերճախոս խոսքովն և կորովի լեզվով՝ ոխերիմ և անհաշտ թշնամի մը երևնալով ախտից և մոլության, ջաղխելով՝ փշրելով զանոնք, թեպետև արքունյաց ծիրանյոք ներկայանային իրեն, թեպետև եկեղեցական պատմությանի տակ ի սրբավայրի և անկե դուրս, հարուստին կամ աղքատին հարկի տակ, ի թատերս և ի տեսլարանս, ամեն տեղ և ամեն առթի չխնայելով, և երբեք ուժի կամ բռնության առջև չտկարանալով այլ միայն իր աստիճանին և պարտուց անհալով: Մեռավ նա, ինչպես ի կյանս, այնպես մահվանն ետքն ալ ճշմարտության անվրեպի բարոզ թողլով ի գանձարանս եկեղեցվո իր բազմաթիվ երկասիրությունքը»[72]:

Հարուստ է նաև հայ եկեղեցու և հայ նշակույթի գանձարանը ոսկեբերանյան գործերի հայերեն թարգմանությամբ և տպագրությամբ:

Ոսկեբերանն իր մատենագրական վաստակի մեջ այնքան հանգամանորեն չի զբաղվել «քրիստոնեական վարդապետությամբ, որքան խորապես զբաղված է քրիստոնեական բարոյականով...: Այս է պատճառը որ Գրիգոր աստվածաբան խրթնություն մըն է՝ անհաղորդ ժողովրդի կյանքին, մինչ Ոսկեբերան պարզություն մըն է կապված ժողովրդի կյանքի հետ: Այնքան նուրբ դիտող մըն է Ոսկեբերան և այնքան ճշտադատ մը՝ որ իր սկզբունքներն ու վճիռները ճշմարտություններ են ամեն դարու և ամեն ժամանակի, մանավանդ քրիստոնյա մարդոց համար»[73]:

Այս է պատճառը, որ Ոսկեբերանը «ընդհանուր եկեղեցվո պատմության ամենապատկառելի և ամենահամակրելի դեմքերից մեկն է և եկեղեցական բոլոր հայրերից ավելի ընդարձակ տեղ է բռնում մեր նախնի գրականության մեջ»[74]:

Ոսկեբերան հայրապետը իր սրբակրոն վարքով և մատենագրական հարուստ վաստակով բնութագրվում է հարազատորեն «վասն մեր ամենից աստուածապաշտական վարուց օրինակ, բահանայական կացության նպատակ, վարդապետական իմաստից խողովակ, եպիսկոպոսական հեղինակութեան աղիւսակ, պատրիարքական ճոխութեան եղանակ, կղերիկոսական պաշտամանց աշտանակ, ս. Գրոց մեկնութեան մատուվակ, հաւատոյ պաշտպանութեան աշտարակ, ի կարգս ռաբունապետաց արուեսակ, և յերամս հայրապետաց՝ լուսնթագ»[75]:

[71] Տիմոթէոսի եպիսկոպոսապետի Ալեքսանդրեայ Հակաճառութիւն..., ս. Էջմիածին, 1908: Ոսկեբերանի ճառերի հայերեն հատվածական հրատարակությունների ուսումնասիրությունների մասին տես նաև **«Արարատ»** ամսագիր, 1868—1919, 1900, էջ 621—623, 1917, էջ 110—111, 1917, էջ 193—198, **«Էջմիածին»** ամսագիր, 1961, էջ 52—63:

[72] Մատենադարան, նույնը, էջ 581:

[73] «Լոյս» շաբաթաթերթ, 1905, էջ 1045—1046:

[74] Կնիք հաւատոյ, նույնը, էջ L: Տես նաև **Մարգարիտ արբեպ. Օրմանյան,** Ազգապատում, II հատոր, մասն Գ, Բեյրութ, 1959, էջ 1282—1283:

[75] Պատմութիւն վարուց, Վենետիկ, 1752, էջ IX:





ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

Ագաթանգեղոսի Հայոց պատմության մասը կազմող Վարդապետությունը աշխարհաբար է թարգմանվում առաջին անգամ: Ագաթանգեղոսը թարգմանելիս թե՛ միջին դարերում (հունարենի և այլ լեզուների), թե՛ նոր ժամանակներում (եվրոպական լեզուների) Վարդապետությունը դուրս է մնացել:

Իր բովանդակությամբ Ագաթանգեղոսի Պատմության այս հատվածը բավական ինքնուրույն է: Վարդապետությունը առաջին անգամ թարգմանվել է անգլերենի, առանձին գրքով, Ռ. Թոմսոնի կողմից (The Teaching of St Gregory, An Early Armenian Catechism, trans. by R. W. Thomson, Cambridge, Mass., 1977).

Վարդապետությունը թեև Ագաթանգեղոսի Պատմության բնագրի անբաժանելի մասն է և նրա կազմում եղել է հենց Ե դարից, այսուհանդերձ Ագաթանգեղոսի՝ մեր կողմից կատարված աշխարհաբար թարգմանության մեջ (Ագաթանգեղոս, Պատմություն Հայոց, Երևան, 1977) բաց էին թողնվել, այն հետագայում հրատարակելու նպատակով: Այժմ Վեհափառ Հայրապետի ցանկությամբ այն հրատարակում ենք «Էջմիածին» ամսագրում:

Քառակուսի փակագծերի մեջ բերել ենք այն ենթավերնագրերը, որ Գալուստ Տեր-Մկրտչյանը և Ստեփան Կանայանցը 1909 թ. հրատարակության մեջ մտցրել էին բովանդակության ցանկում:

*
* *

[Միասնական Սուրբ Երրորդության ինքնագո աստվածությունը, երկնքի ու երկրի ստեղծումը]

259. Տեր Աստված միակն է իր էությամբ և ոչ մեկը չի եղել նրանից առաջ: Չկա այլ Արարիչ այն ամեն ինչի, որը երևելի և աներևույթ է, բացի Հորից ծնված միածին Որդուց և նրա Հոգուց, որ նույն էությունից է, որով ի սկզբանե եղավ աշխարհը, ստեղծվեց ամենազոր կամքի միակ զորությամբ, միասնական Երրորդության մեկ մտածողությամբ, կամքով և բնությամբ: Նրանով էր ստեղծված ամենայն ինչ՝ երկինքն ու երկիրը: Նա ստեղծեց երկինքը ամրածածկ, գմբեթաձև և երկիրը՝ թանձրահատակ, պարփակյալ ու պինդ: Երկինքը ոչ մի բանից չի կախված [դատարկության մեջ], իսկ երկիրը ոչնչի վրա է կանգնեցված, նրա (դատարկության) մեջ կան համատարած անդունդներ՝ խավարամած, աներևույթ, անկազմ, անկերպարանք, անհարդար, անպատրաստ, ստվերամած:

260. Ապա իր արարչական խոսքով դիմեց արարչակից Որդուն և համագործ Հոգուն, որը շրջում էր ջրերի վրա: Հայրը հրամայեց, որ ջրերի տակ գոյանան արարածների կարգավորված հորինվածքները: Հայրն ասաց իր խորհրդակիցներին, խոր-

հրդեհատարներին, գործակիցներին՝ թող լինի լույս և անա եղավ հատատիպուս լույսը խավարը փարատող և օրաբեր: Դրա-ից հետո [ստեղծվեց] ջրածածկ, սառնեղեն, ծովը պատռող, ջրաբաժան [ամուր] հաստատությունը, որով երևաց ամենածին ծաղկաբուխ և տնկաբեր ցամաքը: Հետո միասնական Երրորդության զորությունն ասաց՝ թող լինեն ջրերի մեջ լուսավորներ, երկնքի խորանանման հաստատության մեջ հառագայթաձիգներ, լուսավոր գնդեր, նշանացույցներ, ժամանակաչափ [լուսատուներ]: Ապա [ստեղծեց] շնչավոր թրռչունների ցեղը, գեռունները և ջրածին ձրկները:

261. Հետո երկրից բխեցին ելան չորքոտանի ցեղի բոլոր տեսակները, յուրաքանչյուրն ըստ իր կարգի, հիանալիորեն հաստատված աստվածային կամքի նախապատրաստված բարյացակամությամբ ի պատիվ մարդու, որը պետք է կատարեր այն, ինչ հաճելի է Արարչին: Նա իր սեփական կամքով ցուցաբերեց իր բարերարությունը, ստեղծելով բանավոր, իմաստուն, խոսուն արարածին, անխոս, անբան, անմիտ արարածների միջև, որպեսզի իմաստունը ճանաչի Արարչի պատիվը և հասկանալով Նրա փառքի սքանչելի շնորհքը, գիտակցի, որ պետք է իր կողմից փառավորի Նրան և որ Նրանով ու Նրա միջոցով ամենայն արարածները [իրենց] տեսանելի գործերը որպես փառավորություն Նրան մատուցեն:

[Հրեշտակների և առաջին մարդու ստեղծումը: Մարդու աստվածակերպ նմանությունը և անձնիշխան պատիվը]

262. Իսկ աներևույթ [արարածների] մեջ ստեղծեց աներևույթ փառավորիչներին՝ հրեշտակների հոգեղեն, հրեղեն զորքերը, արքունների բազմությունը: Սրանք վերին օդում են բնակվում, ջրածածկ հաստատության վրա, իսկ մեզ՝ մարդկանցս տեղ է տրված ներքևում այս երկրի հողեղեն բնակավայրում: Քանզի բարերարն Աստված ստեղծել է ամեն ինչ, հաստատելով [արարածների] լինելության կարգը: Սակայն չարը անձնիշխան կամք ունենալով, կործանում է ամեն մի առանձին անհատի: Միևնույն Արարիչը ամեն ինչ բարի էր ստեղծել:

263. Ստեղծելով մարդուն, Նա սքանչելագույն կարգով իշխան դարձրեց նրան և անա այստեղ կարելի է տեսնել հրաշալի, զարմանալի և անհասանելի հրեշտակային կերպարանքը: «Ստեղծենք, ասում է Նա, մարդուն, ըստ մեր պատկերի և նմանության»[1], իսկ արդյոք ո՞ւմ պատկերը Նա նկատի ունի և կամ ո՞ւմ նմանությամբ ստեղծելու էր մարդուն: Քանզի իսկական աստվածությունը հայտնի է որպես անեղծ, անստեղծ, աննյութական: Արդյոք ինչպե՞ս ստեղծվելիքը կարող էր նման լինել իսկական գոյություն ունեցողին կամ սակավիկ հողը՝ Աստուծո բնական զորությանը: Նա տարածությամբ չի սահմանափակված և անչափելի է, անսկիզբ լիություն ունի, բոլորին անմատչելի է, մշտնջենապես նույնը, պարզ և միանգամայն անշարժ:

264. Արդ, ինչպե՞ս կարող էր ինքն իրեն դնել որպես պատկեր ստեղծվողի համար, կամ կավին կերպարանք տալով, Աստուծո պատկերով ձևել: Ինչպես ասված է «ըստ Աստուծո պատկերի ստեղծեց նրան»[2]: Նախ ասաց այս խոսքերը նախատեսելով հանդերձյալի պատմությունը, ապա անցավ ներկային և ակնարկեց լինելիքին: Իսկ ինչ որ մոտալուտ [գալիք] է, անմիջապես հայտնի ցույց տվեց: Քանզի տերը ըստ Աստուծո պատկերի ստեղծեց նրան: Մի կողմից՝ հանուն նրա (մարդու) իմաստության, բանականության, խելամտության, կենդանության, հոգևոր շնչի, որն առատորեն շնորհեց, որպեսզի նա գիտենա, ճանաչի, տեղյակ լինի և իմանա ամենայն շնորհների աստվածատուր իմաստությունը, բանականությունը, աստվածածանոթությունը, տիրությունը, իշխելը ամենայն երկրաբուխ, երկրածին արարածների վրա ու կանխատեսելու գիտությունը և նրան դարձրեց ամենայնի տերը: Ասաց Աստված, թե «երկրի բոլոր բաղդրարուխ սերմերը ձեզ լինեն որպես կերակուր»[3]: Ապա բոլոր գազաններին, անասուններին ու թռչուններին Նա բերեց մարդու առջև և հնազանդեցրեց: Ապա աստվածային իմաստությամբ [մարդը] խելամուտ եղավ ըստ յուրաքանչյուրի առանձին կերպարանքի ճանաչել և ցույց տալ անունը: Քանզի Տերը գիտություն ներշնչեց և նրա գիտությամբ [մարդը] ճանաչեց Նրան արարածներին և Նրան նման համարվեց:

265. Մյուս կողմից նա ասում է. «նման» նրա անձնիշխան կամքի հզորության համար: Քանզի Աստուծո ամենակարողության և ամենաստեղծ գործունեության շնորհիվ երկու պատվական և հարգի արարածներ հաստատվեցին բարերարի կողմից՝ մարդիկ և հրեշտակները: Արդ, մարդուն թողեց իր անձնիշխան կամքին, որպեսզի իր անձնական ազատ կամքով ի

[1] Ծննդ., Ա, 26:
[2] Ծննդ., Ա, 27:
[3] Ծննդ., Ա, 29:

վիճակի լինի բարի գործերի փոխարեն արժանանալ բարերար Տիրոջ և Արարչի շնորհին: Նա դրեց նրա առջև աստվածահաճո պատվիրանների գիտությունը, որպեսզի գիտակցի, որ պետք է չարից խույս տալ և բարին ընտրել իր կամքի ուղղամտությամբ, անձնական զորությամբ, իր անձնիշխան կամքով և ստանալով Արարչից իր վաստակի փոխհատուցումը, պատվի Նրան:

266. Իսկ նմանությունը այսպես պետք է հասկանալ. ամենայն արարածները հարկադրված են ծառայական հնազանդության, որպեսզի չլինի թե համարձակվեն ավելին գործել, քան նրանց հրամայված չափը, յուրաքանչյուրը հարկադրված լինելով հրամանները գործադրել: Բայց Աստված մարդուն հատկապես բազմապատիկ փառավորեց, մտքով հարստացրեց, դարձնելով հոգեպես հրեշտակներին խոնարհագույն ընկերակից:

267. Տես արեգակը, լուսինը և աստղերը ինչքան մեծ են մարդուց, սակայն նրանք նրա կամքին ենթակա են, հարկադրվելով պատվիրանադրի հրամաններին: Ոչ արեգակը դանդաղում է իր ընթացքից, ոչ լուսինը դադարում է նվազելուց և լիանալուց, ոչ էլ աստղերը իրենց կարգից առաջ են անցնում: Ոչ լեռները տեղափոխվում են, ոչ քամիներն են փչելուց դադարում, ոչ էլ ծովը անդնդային սահմանքների ծփանքներով իր խռովյալ սաստկությամբ հուզյալ և անդադար կուտակվող մոլեգին ալիքներով, դրված սահմանները կարող է անցնել և ապականել երկիրը և ոչ էլ երկիրը ամեն ինչը բառնալ կրելուց դադարում է: Նրա հրամանով է հորինված ամեն ինչ և Նրա սուրբ և երկնավոր հրեշտակները անդադար փառաբանում են նրան: Նա է, որ հաստատեց երկնքի բարձրությունը, աստղերի թիվը, ծովի ջրերը, երկրի ավազը և լեռների հավասարակշռությունը: Նա է, որ ամպեր է բարձրացնում, արգելում է հողմերը, կրկին երեկո է բերում, դալարություն է տալիս գոսացյալ չոր խոտին և հավաքում է անձրևաջիթերը: Նրա մասին մարգարեության ոգին պատմում է, թե «ո՞վ է չափել իր ափով բոլոր ջրերը, իր թիզով՝ երկինքը և իր քիլով[4] ամենայն երկիրը: Ո՞վ դրեց լեռները կշեռքի վրա և դաշտերը հաշվեց չափիչով»[5]: Ո՞րն է այն տեղը, որ վեր է պահում Նրան, որի խոսքով բոլոր արարածները կախված են մնում: Նա գիտե երկնավոր գնդերի ընթացքը, որոնք օդի մեջ շրջում են և չեն շեղվում, տարածվում են, սակայն զարտուղի չեն ընկնում: Նրանք գալիս են և մնում որպես տարեկան վարձկաններ, հայտնվում են և վառվում ցերեկից մինչև գիշեր, գիշերից ցերեկ հաջորդելով միմյանց են փոխարինում, առանց խանգարելու անարգել վերադառնալով իրենց ժամանակների չափին և փոխվելով տարվա չորս եղանակների, ինչպես Աստված է կարգավորել:

268. Ինչպե՞ս են ընթանում երկնքի հաստատության աստղերի զորությունները, իրենց անդադար ընթացքի հավասարակշռությունը պահպանելով և առանց չափն անցնելու: Կամ որտեղի՞ց են ելնում սաստիկ հողմերի օդաշունչ այուքերը և ուր են գնում դադարում: Ի՞նչ են ամեն մեկին բնորոշ [եղանակները]: Մեկը քաղցրաշունչ է, սնուցում է բույսերը, մյուսը սաստիկ է, պտուկներն է բացում, մեկ ուրիշը զգեստներ է հյուսում, գույնզգույն ծաղիկներով զարդարում երկիրը տարբեր երանգներով, մերկ ծառերն է հագցնում, վարսավոր գագաթներն է զարդարում:

269. Որտեղի՞ց են ծնվում ամպաբեր քամիները, որոնք սպառվում են հողմի փայլատակումից, իսկ անձրևները ծնվում են որոտման ձայնից: Ուր տերը հրամայում է երթալ, գնում են, իջնում, ոռոգում երկիրը, սնում են բույսերը, գիրացնում են մարմնապարար պտուղները: Ո՞ւմ որովայնից են ելնում գետերը իրենց աղբյուրներով, չեն դադարում ելնելով և ոչ էլ հորդում լցվելով:

270. Երկինքն ու երկիրը, արեգակն ու լուսինը և աստղերի բազմությունը, ծովերը, գետերը, գազանն ու անասունը, սողունն ու թռչունը, լողակն ձկները, եղաջները և լինելիքները՝ ամեն մեկը իր կարգով և յուրաքանչյուրը ենթարկվեցին հրամաններին: Բայց միայն մարդու կամքն է, որ անձնիշխան է թողնված, անելու ինչ կամենա: Ավելի ոչինչ նրանից չպահանջվեց, քան այն, որից զգուշացված էր՝ չճաշակել այդ ծառից, քանզի այսպիսով, Նա արժանի կը դարձներ նրան փոքրի փոխարեն մեծամեծ [բաներ] ընդունել և այն բանի համար, որ իր վաստակների դիմաց շնորհ էր վայելում, նա Արարչից կստանար փոքր [արարքների] փոխարեն մեծամեծ շնորհներ: Ահա սրա համար էլ Նա հրամայեց նրան ունենալ անկախ կամքի ազատ իշխանություն:

271. Կամ ինչպե՞ս հողածին մարդը կարող էր Արարչի օրինակով աշխարհ գալ և թեպետ դեռ նորաստեղծ, իր էությամբ նմանություն ունենալ անմատույց էակին: Քանզի իր անսահման, անբովանդակելի ինքնուրույն զորությամբ արդյո՞ք

[4] Բթամատի և ցուցամատի բացվածքի չափը:
[5] Ես., խ, 12:

միայն աստվածային անվամբ մեծարեց նրան ասելով «ըստ պատկերի»: Սա բոլորովին այդպես չէ: Քանզի Ս. Գիրքն ասում է, թե «ըստ Աստուծո պատկերի ստեղծեց նրան»[6] և այլուր ասվում է, թե «Աստված հաստատեց մարդուն անեղծության մեջ և ըստ իր բարերար պատկերի ստեղծեց նրան»: Մի ուրիշ աստվածաբանոր իմաստություն ևս ասաց, թե «մարդը Աստուծո պատկերն է»[7]: Սկզբում Աստված մարդուն աստվածային կերպարանքին մերձավոր և ծանոթ դարձրեց, քանզի նա ջանում էր ոչ միայն հաստատել նրան, այլև առավել ծանոթ դարձնել: Աստված մարդու նմանություն ունեցավ ստեղծելով մարդուն երկրի նյութից[8]: Նրա երեսին կենդանի շունչ փչեց և մարդը դարձավ կենդանի ոգի: Իր ձեռքով ստեղծելով մարդուն, նրա մեջ կենդանություն դրեց, փչելով իր բերնով իմաստնության, բանականության կենդանի շունչը, որպեսզի արարածը աչքը բացելով ճանաչի Արարչին և ապա Աստուծո բարերարության, արարչագործության ծանոթ ու մերձավոր, գիտակ ու վկա լինի:

272. Կամ ինչպե՞ս ամենայն արարածներին հրամայված էր գոյություն առնել անյութականից, աղքատիկ անկերպարան նյութից և [նյութական] կերպարանքին ու հրամանների ձայնին արդեն սովոր լինելով, առանց հապաղելու բոլոր արարածները հրամանները կատարեցին: Սակայն իսկական աստվածությունը ծածուկ (անտեսանելի) կերպով առանց նյութական նմանությունների կամ բարձրաձայն ազդարարելու իր անհատականության մեջ ունի իր սեփական էությունը: Սակայն տեսանելի արարածների սիրուն նա նմանություն (ձև) առավ, որպեսզի իրեն խոնարհեցնելով, ուժեղացնի արարածներին: Քանզի եթե այնպես չաներ, ոչ որ չպիտի կարողանար Նրա բնությունը տեսնել, կամ Նրա ձայնը [լսել], այլ որպեսզի կարողանային նրան տեսնել, դրա համար տեսանելի նմանություն ստացավ և ձայնով խոսեց:

273. Արդ, մարդը ստեղծվել է ըստ Աստուծո պատկերի և շնորհիվ արարչության գործունեության օժտված է ազատությամբ, իմաստությամբ, բանականությամբ և անկախ պատվով, սակայն ոչ աստվածահատուկ զորությամբ, որը միայն Միածինն ունի, որպես Հոր Էության նկարագիրը: Ապա Աստված իր ստեղծած ամենայն արարածներին տարավ Ադամի մոտ տեսնելու, թե նա ինչ անուններով է կոչելու նրանց: Թեև պարզ է, թե Ադամը ամենից առաջ Արարչի անունը գիտեր, քանզի նախ և առաջ այդ էր կարևորը: Աստուծո միածին որդին այսպես էր ասել Հորը «այս է իմ կամքը, որ միայն քեզ ճանաչեն որպես ճշմարիտ Աստված»[10]: Այսպիսով, Ադամը, իմարկե նախ Արարչի անունը տվեց, քանզի ում երեսից որ կենդանություն էր ընդունել, նախ և առաջ նրան տեսավ: Արարածներն էլ ստեղծվել էին նրան Արարիչը ծանոթ դարձնելու համար:

274. Արդ, նա Արարչի ներկայությամբ տվեց անունները իր առջև դրված [կենդանիների] և ծանոթացավ նրանց իրար ետևից, որոնց և նա առհասարակ տիրում էր ոչ միայն անունները տալով, այլև իմաստությամբ և զորությամբ: Նա դեռ միայն առաջինն էր [մարդկանցից], ինչպես նաև վերջինը: Բոլոր արարածների մեջ նա միայնակ էր ինքն իր հետ և ոչ որ չկար նրան զորավիգ կամ ընկեր և ոչ որ նման էր նրան:

275. Արդ, Արարիչ Հայրը խորհուրդ արեց արարչակից Որդու և արարչակից Հոգու հետ, առաջին նախաստեղծ մարդու համար եղած նախորդ խորհրդի նման, ինչպես այն ժամանակ ասել էր՝ «եկեք մարդ ստեղծենք մեր կերպարանքի պատկերի նման»[11], ապա ստեղծեց Ադամին և չգոյությունից նրան հաստատեց կենդանության մեջ: Նույն ձևով և այստեղ Հայրը ասաց Որդուն և Հոգուն՝ «եկեք Ադամին նրա նման օգնական ստեղծենք, իր պատկերի նմանությամբ և իր կերպարանքի նրման»[12]: Ապա զարմանալի քուն տվեց նրան և մի ոսկոր հանելով նրա կողից, այն ձևեց կնոջ պատկերով և կանգնեցրեց նրա առջև: Իսկ Ադամը կռահեց աստվածատուր իմաստությամբ, թե «այս ոսկորը իմ ոսկորներից է և մարմինը իմ մարմնից է, սա կոչվելու է կին, քանզի իր ամուսնուց առնվեց». «Այդ պատճառով այրը պետք է թողնի իր հորն ու մորը և հարի իր կնոջը և երկուսը մի մարմին կլինեն»[13]:

276. Չէ՞ որ Աստուծո դիմաց է նա ասել այս բանը այնտեղ, ուր հոգեղենների բոլոր զորքերը Տիրոջ փառքն էին բարձրացնում և մարդն էլ ներկա էր հանդեսին: Այս խոսքերը ասելով, նա ամենայն գիտությամբ մարգարեացավ բացահայտ դարձնելով

[6] Ծննդ., Ա, 27:
[7] Իմաստ., Բ, 23:
[8] Ա Գրքնք., ԺԱ, 7:
[9] Ծննդ., Բ, 7:
[10] Յովհ., ԺԷ, 3:
[11] Ծննդ., Ա, 26:
[12] Ծննդ., Բ, 18:
[13] Ծննդ., Բ, 23—24, Մատթ., ԺԹ, 5, Մարկ., Ժ, 7:

հավերժ արթունի կատարած գործը, երբ ինքը քնած էր: Նա, որ տղամարդուց առնվեց, գիտեր, և նա ևս գիտեր, որ մարդը երկրից (հողից) է և երկիրը ոչնչից և միայն Աստված գոյություն ունի: Ասելով, թե «թողնելով հորն ու մորը, հարում է իր կնոջը և երկուսը լինեն մեկ մարմին», նա գիտեցավ աշխարհիս բոլոր կարգերը և ամեն ինչի վախճանը:

[Ադամի զրկվելը դրախտից դևի պատրանքով]

277. Դրանից հետո Աստված առավ մարդուն և դրեց Ադենի (Եդեմի) հաճելի դրախտի մեջ: Նրան ցույց տվեց երկու ծառ՝ մինը կենաց [ծառը], մյուսը՝ բարիի և չարի գիտության: Նա մահվան սպառնալիքով պատվիրեց նրան չճաշակել այն ծառից, քանզի Աստուծո պատվիրանը պահելով, նախանձելի աստվածատուր իմաստությունը պահպանելով և պատվիրանապահությամբ նա վայելելու էր աստվածային իշխանությունը [ինքնագո] էակի անձեռնմխելի փառքով: Ինչպես վերևում ասացինք, թե հրեշտակներին և մարդկանց թույլ տալով անձնիշխան լինել [միաժամանակ] յուրաքանչյուրին պատվեր տվեց, որպեսզի ամեն մեկը իր հոժար կամքով Արարչի հրամաններին հնազանդ լինի, որի համար առավել փառքի արժանի կդառնա: Արդ, մարդուն փոքր պատվեր տվեց՝ ծառից չճաշակել, քանզի այսպիսով մեծ պատիվ ձեռք կբերեր, ինչպես վերևում ասացինք: Իսկ հրեշտակների զորքի բազմությանը պատվեր տվեց՝ իրենց Արարչին անդադար փառաբանել, որը նրանց մեծ պատվի և փառքի մեջ էր պահել, վերին երկնավոր մշտնջենավոր լույսի աներևույթ մեծության մեջ:

278. Արդ մեկը հրեշտակների վերին զորքի դասերից, երբ տեսավ Արարչի բարերարության լավ խոստումները մարդուն և որ մարդը մնում էր Արարչի խոսքին, զգուշությամբ պահելով պատվիրանը, ապա իր չար կամքով չարացավ, չար անվանվեց, ուստի և ետ երթալու[14], հակառակասեր և սատանա անունները ժառանգեց: Ապա չարը նախանձելով մարդուն, պատրանքներով այդ փառքից դեպի մահ նետեց, քանզի իմաստունն ասում է, թե «բանսարկուի նախանձով մահը մտավ աշխարհ»[15] խաբեությամբ ապականելով:

279. Արդ, մարդու թշնամին պատրանքի խաբեությունը հնարեց: Տես, թե ինչ է ասում՝ «ինչո՞ւ, ասում է, Աստված ձեզ պատվիրեց ծառից չճաշակել»[16]: Սակայն հայտնի է, որ Ադամը ուներ ազատություն, անձնիշխան կամք և աստվածատուր իմաստություն, ճանաչելով Աստծուն իբրև պատվիրանատու և Ադամին՝ պատվիրյալ: Թերևս իսկապես դա ենթադրությամբ հայտնված էր նրան նախքան պատվիրանը, սակայն դա ամենագետից ծածուկ չէր մնա, քանզի նա սրտի և երիկամանց (սրտի գաղտնիքների) քննիչն է[17]:

280. Ապա տես, թե ինչ է ասում՝ «եթե ճաշակեք, ասում է, աստվածներ կդառնաք»[18]: Նրանց հաղորդեց արդարացումը, իսկ ներքևից ինքը ջանում էր նրանց իր իշխանության տակ վերցնել, որպեսզի նրան վրիպեցնելով ու խոստումից հանելով, թերևս իրեն հնար լինի նրա տեղը ժառանգել: Ինչպես Աստուծո առաքյալը, որը հումուտ և տեղյակ էր աստվածային խորհրդին, ասում էր, թե «անօրեն իշխանը, երբ կամեցավ աստվածանալ, ձեռքը գցեց և ամենայն մարդկանց մեղքով կապեց»[19], որպեսզի նրանց հեռացնելով այդ բարիքներից, նրան հնարավոր լինի խոստացվածը ձեռք բերել: Իսկ նրանք նրա հնարած պատճառաբանություններից խաբվելով, ճաշակեցին և պատվիրանները զանց առնելով, աստվածային փառքից մերկացան:

281. Սակայն պատժի արժանի որդիներին հայրաբար գթալով, նա բարիք է գործում, ինչպես Ս. Գիրքն է ասում՝ «լսեցին Տեր Աստուծո ձայնը, որն օրվա երեկոյան ելել և քայլում էր դրախտում»[20]: Նրանք փախչելով թաքնվեցին ծառերի մեջ և տերևապատ դարձան, սակայն ամենագետի հայացքից փախչելն անհնար էր: Այս պատճառով նա ասում է, թե «որպես Տեր Աստված, ես մերձավոր եմ, ասում է Տերը, և ոչ հեռավոր Աստված. միթե հնարավո՞ր է մարդուն փախչել ինձանից, իր ծածկույթի տակ թաքնվել, որպեսզի ես չտեսնեմ նրան: Չէ՞ որ ինձանով լի են երկինքն ու երկիրը»[21]: Սուրբ մարգարեներից մեկ ուրիշը, որը ճանաչում է մեծությունը, ասում է, թե «ո՞ւր երթամ ես քո հոգուց, կամ ուր փախչեմ քո երեսից. եթե ելնեմ երկինք, դու այնտեղ ես, թե իջնեմ դժոխք, այնտեղ ես մոտս ես»[22]: Այս բոլորը գիտենալով հանդերձ, նրանք թաքնվել փորձեցին:

[14] Ցետ երթալոյ, տես՝ Երթ յետս իմ սատանայ, Մատթ., Դ, 10, Teaching, p. 49.

[15] Իմաստ., Բ, 24:

[16] Ծննդ., Գ, 1:

[17] Սաղմ. Է, 10:

[18] Ծննդ., Գ, 5:

[19] Երրորդ Կորնթ., Բ, 16:

[20] Ծննդ., Գ, 8:

[21] Երեմ., ԻԳ, 23—25:

[22] Սաղմ. ՃԼԸ, 7—8:

282. Սակայն բարերարը ձայն տվեց, թե «ո՞ւր ես, Ադամ» և նա ասաց՝ «Լսեցի քո ձայնը և երկնչեցի, քանզի գնում էիր այստեղ դրախտում, իսկ ես մերկ էի և թաքնվեցի»[23]: Տեսնում ես, թե որչափ մերձավոր և ծանոթ էին Աստուծո, որ մինչև անգամ ոտնաձայնին անտեղյակ չէին: Այսպիսով բարերարը նախ ոտնաձայն էր հանում զղջումի առիթ տալով տգետին, որպեսզի մարդը հասնելով բավություն բերող ոտքերին, անձամբ պատմի իր հանցանքները և փրկություն գտնի:

283. Իսկ այն տեղի չունեցավ. սակայն Նա չկամեցավ ամբաստանող լինել և անարգելով հարձակվել, այլ խաղաղարար ձևով զիջեց ասելով, թե «ո՞վ ասաց քեզ, թե մերկ ես»[24], քանզի կամենում էր ներելով իրեն բաշել, որպեսզի Աստուծո բաղդությունը նրանց ապաշխարության բերի: Իսկ երբ սրանով էլ չզգաստացան, այլ ապաշնորհ դարձան միմյանց արդարացնելով, ապա Նա դատապարտեց նրանց, մինչև հաստատեց, որ հատուցեն ու հող դառնան, քանզի Աստուծո դատաստանը ճշմարիտ է բոլոր նրանց հանդեպ, որոնք չար գործեր են կատարում:

284. Դրանից հետո [Ադամի] ըմբռնությունը մեջ բերելով ասում է, թե «ահա Ադամը դարձավ մեզանից մեկը, ճանաչելով բարին և չարը: Հեռացնենք նրան կենաց ծառից, որպեսզի չլինի թե ուտելով ապրի հավիտյան»[25]: Բայց «Իբրև մեզանից մեկը» ոչ թե [նշանակում է] Աստված դարձավ, քանզի իրական էակը չէր նա, այլ ենթադրյալ գոյությունը: Օրինակ, մարդկանց ենթադրած սուտ աստվածները, որոնք հնարվել են մարդկանց անմտության, հիմարության և պղծության հետևանքով, ինչպես և ձեզ[26] մոտ էլ տեսա բարապաշտության, փայտապաշտության մոլորությունները, որոնք տգիտությամբ ձեր կողմից պատկերվել են: Նրանք չեն լսում, չեն խոսում, չեն հասկանում, չեն շարժվում և շունչ չկա նրանց բերանում: Թողնելով կենդանի Աստծուն, երկնքի ու երկրի Արարչին, անշունչ, անմտունչ բարերին եք պաշտամունք մատուցում, որոնք ոչինչ են:

285. Այդ պատճառով աստվածատես սուրբ մարգարեները իրրև իմաստուն բժիշկներ հոգացել են դարմանելու դեղը, ըստ հիվանդի ցավի պատրաստել, որպեսզի վերացնեն, ջնջեն գայթակղությունը և բոլորովին մեջտեղից հանեն: Ինչպես նրանցից մեկը աստվածային Հոգու զորությամբ լցված գոչել է ասելով, թե «աստվածները, որոնք երկինքն ու երկիրը չեն ստեղծել, երկնքի տակ կորչելու են երկրից. այլ Տերը ստեղծեց երկիրը իր զորությամբ և երկինքը ձգեց իր սքանչելի խորհրդով, պատրաստեց տիեզերքը իր ամբողջ իմաստությամբ: Երբ որոտում է իր ձայնով, բազում ջրերով լցվում է երկինքը, ամպեր է հանում երկրի ծայրերից, Նա իր նայծակները դրեց անձրևների համար և հանեց հողմերն իր շտեմարաններից»[27]:

286. Բոլոր մարդիկ գիտությունից են հիմարացել, իրենց անձերին թշվառություն բերելով, ապա իրենք անձամբ իրենց երեսները ամոթալի են դարձնում, երբ իրենց անձերը ենթարկում են Աստուծո մեծ բարկությանը: Այժմ այսքանը բավական է հանդիմանելու ձեր մոլորությունը, քանզի այն պատշաճ է իր տեղում: Արդ այն, որ շարքով սկսեցինք ձեզ պատմել, յուրաքանչյուրը ըստ կարգի պատմելու ենք:

287. Այնուհետև մարդուն հանելով հիշատակի հանգստյան դրախտից, դրանից դուրս բնակեցրեց և փակեց նրա համար կենաց ծառի ճանապարհը, որպեսզի այլևս ակամատես անգամ չլինի դրախտի վայելչությանը: Ապա անեծք իջավ երկրի վրա՝ փուշ և տատասկ, ցավերի հաց և մահկանացու Ադամի մահը: Սակայն սա մարդասիրության նշան է, ինչպես ասել է Աստված մարգարեի բերանով՝ «քո ըմբռնությունը քեզ իրատելու է և քո չար գործերը կշտամբելու են քեզ: Ապա դու կգիտենաս, թե չար և դառն է քեզ համար ինձ թողնելը, ասում է քո տեր Աստվածը»[28]: Մի ուրիշը Աստուծո կողմից ասում է, թե «երբ դու դարձի գաս և հնծեծես, այն ժամանակ կապրես և կգիտենաս, թե որ ես»[29]: Քանզի երբ ճաշակի դառնությունը և մահվան անորոշությամբ պաշարված լինի, անզգալիորեն նրա միտքն է գալու կենաց ծառի հիշատակը և հնծեծելով խնդրելու է դրախտի վայելքներին մոտենալ: Հենց նրա դրախտի դեմ հանդիմանն բնակվելը այս ասածներիս վկայությունն է:

[Ադամի որդիների և առաջին նահապետների ծնունդը]

288. Իսկ բարերարը ոչ միայն դրախտում, այլև դրանից դուրս չէր հեռանում

[23] Ծննդ. Գ, 10:
[24] Ծննդ., Գ, 11:
[25] Ծննդ., Գ, 22:
[26] Բոլոր դեպքերում, երբ հեղինակը հոգնակի երկրորդ դեմքով է խոսում, դիմում է Տրդատ թագավորին, նախարարներին և հավաքված բազմությանը (Ագաթանգեղոս, պարբ. 246, 252, 258):

[27] Երեմ., Ժ, 11—14:
[28] Երեմ., Բ, 19:
[29] Նա., Լ, 15:

նրանցից, երբ բնակեցրեց դրախտին դեմ հանդիմանելու: Իր բարերարության պատճառով հրամայեց երկրում բազմանալ, ուր և նրանք Արարչի ակնարկած հրամանով երկրում ծնունդներ տվեցին և սկսեցին բազմանալ, ինչպես ասված է՝ «աճեցեք ու բազմացեք և լցրեք երկիրը»[30]:

289. Ադամի որդիներից անդրանիկը կոչվում էր ԿաՀել (Կայեն) և մյուսը Հաբել: Ապա նրանք ի հայտ բերեցին տվողի իմաստությունը, նրա իմաստությամբ նույնին ճանաչելու որպես Արարիչ: Արդ, ԿաՀելը՝ երեց որդին, վերցրեց որպես նվիրելու ընծա՝ արմտիք, ցորենի կապոց կազմեց և Նրան պատարագ (զոհ) մատուցեց: Երբ Հաբելը այս տեսավ, իր գառների հոտից նոր ծնունդը ընծայեց և իր խաշինքի [ոչխարներից] մատուցեց: Իսկ Աստված իր մարդասիրությամբ խոնարհվեց Ադամի որդիների ընծաներին մերձավոր դառնալով: Ապա ընտրություն կատարեց, մեկին անկեղծ գտնելով ընդունեց նրա զոհը, իսկ մյուսին՝ իր եղբոր նկատմամբ չարակամ գտնելով, դատապարտեց և ետ դարձրեց չարաանենգության պատճառով: Իսկ նա դրա համար մահ նյութեց և սպանեց եղբորը: Ապա երկիրը նրա պատճառով նզովվեց և ինքն էլ անիծվեց զավակով հանդերձ:

290. Արդ, Ադամը Աստծուց ուրիշ որդի ստացավ, սպանված Հաբելի փոխարեն, որի անունն էր Սեթ: Իսկ այն սպանվածը իր արդարության համար կենդանի է Աստուծո մոտ, քանզի Նա, որ նրան ոչնչից ստեղծեց, ինքն էլ կկենդանացնի նրան երբ որ կամենա, ինչպես շատ դյուրին է ձեզ պատմել: Երբ մենք ձեզ տեսնում ենք հավատի մեջ ջերմեռանդ, հիշում ենք Նրան, որի արդարությունը կա և կմնա հավիտյանս հավիտենից: Արդ, նենգավոր մարդասպան ԿաՀելը նզովվեց ու անիծվեց և այդ պատճառով Աստուծո հրամանով անջատվեց: Քանզի Աստված օրհնեց Սեթին և նրան պատվեր տվեց, որ իր օրհնյալ զավակը չխառնվի մարդասպան ԿաՀելի անիծյալ զավակին: Ապա մարդիկ երկրի վրա բազմացան առ հասարակ երկու ցեղից:

291. Սեթյան ցեղն ունեցավ նահապետներ, որոնք արդար մարդիկ էին մինչև ութերորդ սերունդը: Աստուծո բարերարությունը նրանց մոտիկ էր և Նա միշտ ամենքին մերձավոր էր, եթե չմոռանային Նրա հարազատությունը: Դրա համար Նա հայրերին երկարակյաց դարձրեց և երկարակյաց զավակներ շնորհեց, որպեսզի գոնե որդիներ ցանկանալով, Աստուծո փնտրեն: Մանավանդ որ շատ կարևոր էր զավակ վաստակելը երկրածինների կյանքում:

292. Նահապետները կարգով հետևյալն են՝ առաջինը Ադամն աստվածաստեղծ, այսինքն Ադամը, ապա Սեթը և նրանից Ենովսը և նրանից Կայնանը և նրանից Մաղաղիելը և նրանից Հարեդը (Յարեդ) և նրանից Ենովքը: Ենովքը ապրեց հարյուր վաթսուն և հինգ տարի ու ծնավ Մաթուսաղային և Ենովքը հաճո եղավ Աստուծո:

293. Նա բոլոր նահապետներից երկարակյաց եղավ: Քանի որ նրանք Աստուծո բարերարությամբ սերյալ բազմացան, ապա իրենց ծնունդից հետո էլ երկարակյաց եղան, որպեսզի ովքեր Աստուծով էին ստեղծված, իբրև հայրեր [ամեն ինչ] պատմեն իրենց որդիներին: Քանզի պատվիրանները զգուշացուցիչ էին Աստծուն ճանաչելու համար, ինչպես և ասված է, թե «հարցրու քո հայրերին և նրանք քեզ կպատմեն և քո ծերերին և նրանք քեզ կասեն»[31]: Այսպիսով, պարզ է, թե այս պատճառով է, որ նրանք երկարակյացներ եղան և ոչ թե բազմաթիվ ծնունդներ ունենալու համար:

294. Քանզի թեպետ Աստված ասաց Ադամին, թե «աճեցեք ու բազմացեք և լցրեք երկիրը»[32], սկզբից գիտենալով այն նյութական բարիքների մասին, որոնք լինելու էին, սակայն Աստված ոչ միայն բազմանալուն [ակնարկեց], այլև այն բանին, թե կամենում էր, որ նրանք մշտնջենական անմահության անցնեն: Ինչպես տեսնում ենք, Ենովքը երկրային կյանք վարելուց, ամուսնանալուց և ուղիղ վարքով որդիներ ծնելուց հետո, կենդանի վերացավ անմահության վիճակին: Այդ բանը միայն մեկ մարդու համար չէր, այլ նրա դուրս գալը պետք է այլոց ճանապարհ բացեր: Նա բռնությամբ չկապվեց կյանքին, այլ հաճելի կյանքի պարտքը [արդեն] հատուցել էր: Նույն օրինակով Աստված կամեցավ ամենքին անմահության փոխել, այստեղ [կյանքը] վայելելուց հետո:

295. Ութերորդ սերնդի (դար) բոլոր մարդիկ մահվան ենթարկվեցին, [քանզի] մեղքերին ծառայելով մոռացան Արարչին, աստվածային կյանքից հուսակորույս լինելով և ապականելով իրենց ուղիղ ճանապարհը: Աստված նրանց իրենց կամքին թողեց, նրանցից վերցնելով իր մարդասիրական շնորհների ոգին և նրանց ստեղ-

[30] Ծննդ., Ա, 28, Թ, 1, 7:

[31] Բ Օր., ԼԲ, 7:

[32] Ծննդ., Ա, 28:

ծած լինելուն զղջաց: Աստուծո զղջալը[33] նրա անագին հոգատարության նշանն է, որ թերևս այսպիսով կարողանա մոռացողներին հիշեցնել արարչական զորությունը: Նրանք խառնվել էին Կայենի անիծյալ սերնդի հետ, պոռնկության այլանդակ վարքի և մեռելոտի ուտելու մեջ: Երկիրը միանգամայն զազրելի և գարշելի դարձավ մարդկանց վարքի պատճառով, ինչպես ասում է [Ս. Գիրքը], թե «ամենքը միանգամայն գլորվեցին ամբարշտության մեջ և ամեն մարդ պղծեց իր ճանապարհը երկրի վրա»[34]:

[Նոյի տապանի շինությունը և ջրհեղեղի տիեզերքը ջնջելը: Բաբելոնի աշտարակի շինությունը և լեզուների բաժանումը]

296. Արդ այդ ժամանակ գտնվեց մի արդար մարդ արդարացյալ տոհմից, որին Նոյ էին կոչում: Սա Աստուծո հաճո լինելով սիրվեց նրանից: Հրաման ստացավ Աստծուց փայտե արկղի պես տապան պատրաստել, բազում տարիների աշխատանքով. բանզի Նա [կամենում էր] պատժել թշվառ ցեղը: Այնուհետև Նա խոստացավ Նոյին հանդերձ ընտանյոք և բոլոր շնչավորներին վերցնել տապանի մեջ և ամենապահ ձեռքով փակել տապանը: Ապա ավազապատ [ծովի] անդունդները բշելով ցամաքի վրա, երկնքից արձակված հեղեղի հոսանքով հանդերձ, հեղեղասաստ, ծովապատիժ բարկությամբ, ջնջեց երկրնքից ներքև եղած [ամեն ինչ] և առհասարակ ողողելով սրբեց: Պատուհասի անցնելուց հետո, Նա արդար մարդուն հավիտենադիր ուխտով կարգեց հայր աշխարհի և տեր երկնի: Նրան երկարակյաց դարձրեց, որ պատմի գալիք սերունդներին իր բարկության տիեզերական պայմանը:

297. Սակայն միատոհմ, միալեզու ազգը բազմացավ և խորհուրդ արեց կլոր երկնամերձ աշտարակ շինել, մշտնջենավոր լինելու սահմանված, փոխանակ հավիտենական Աստուծո, որի անունը հիշվելու է հավիտյանս հավիտենից և հիշատակը ազգից ազգ: Իսկ Նա բարձրագույն ներգործությամբ ցույց տվեց աստվածային գիտությունը՝ խառնակելով, շփոթելով և տոհմակից ազգը բազում, այլալեզու, օտարաձայն միմյանց անծանոթ ազգերի բաժանելով, երկրի երեսին սփռեց, որպեսզի այլևս իրենց համար կամայական սահմանները չորոշեն, այլ հնազանդ ընթանան Աստուծո հավիտենադիր սահմաններում: Ազգերը բաժանելով, լեզուները խառնակելով և Ադամի որդիներին ցիրուցան անելով, Նա բոլոր ազգերին սահմաններ կարգեց ըստ Աստուծո հրեշտակների թվի:

[Աբրահամի հավատի կոչը: Աստուծո երևալը և այարգևական զավակի խոստումը: Հակոբի Տիրոջ տեսնելը և սովի պատճառով նրա երթալը Եգիպտոս իր Հովսեփ որդու մոտ]

298. Եվ քանի որ ցրված ազգերը աստվածամոռաց գիտությամբ յուրաքանչյուրը տարվել էր նյութական արարածների պաշտամունքով, մոլորության անդունդը խոտորեցին: Ապա մի մարդ աստվածային ազդեցությամբ ելավ, ըստ ամենայնի երանելի, որի անունն էր Աբրահամ: Ուղեկից լինելով ճշմարիտ Աստուծո, նրա հրամաններին հետևելով հնազանդվեց: Նրան խոսքն ուղղեց Աստված, թե պետք է ելնի իր հայրենիքից: Քանզի Աստված պատրաստակամ է իրենից խնդրողների նկատմամբ:

299. Արդ, ելավ Աբրահամը իր հայրենի երկրից հետևելով աստվածային հրամաններին և հավատով քայլեց: Նա արժանի եղավ ընդունելու մեծ ավետիսը և իր Արարչի կամքը կատարեց: Գնալով օտար հեթանոս ազգերի մեջ, պանդխտեց և ըստ աստվածապաշտ սովորությունների, բազում տարիներ իր անձի վրա համբերությամբ [նեղություն] կրեց:

300. Երբ նրա իննսունինն տարին լրացավ, Աստված երևաց Աբրահամին, ուխտ դրեց նրա հետ և խոսեց ու վերացավ: Եվ դարձյալ Մամբրեի մոտից եկած հրեշտակների միջոցով պարգևական զավակը խոստացավ, թե նրա որդին գալու էր մարմնով, մարմին էր առնելու Աբրահամի սերունդից և լինելու էր Աբրահամի որդի և բոլոր հավատացյալների համար արդարության հայր և արդարների նահապետ էր կարգվելու:

301. Նա ստացավ նաև անթիվ բազմությամբ սերունդ ունենալու մարմնավոր խոստումը: Նույն ձևով նաև Նա խրատեց Սոդոմացոց չարագործ երկիրը կուրացվածների [օրինակով]. ապա երբ նրանք չհամոզվեցին, կրակաբեր անձրևներ իջեցրեց և աստվածահաստատ բարկությամբ վճիռ դատեց:

302. Դրանից հետո կատարեց նրան զավակի խոստումը, քանզի տվեց նրան որդի՝ Իսահակը: Դարձյալ երևաց Աստված Աբրահամին և փորձելու համար պահանջեց, որ Իսահակին որպես զոհ մատուցի, որով նա հանդերձյալ [կյանքի] ավետիսն ստա

[33] Ծննդ., 2, 6:
[34] Ծննդ., 2, 12:

ցավ: Նույն ձևով Աստված երևաց նաև Աբրահամի որդի Իսահակին, հիշեցնելով նրան հայրենի երկիրը:

303. Իսկ Տերը ծանոթ դարձավ և երևաց նաև Իսահակի որդի Հակոբին սքանչելագույն տեսիլքով՝ դա մի սանդուղք էր, որը հասնում էր երկինք ամենայն հրեշտակների հետ մեկտեղ: Իսկ երբեմն Նա երևում էր իբրև սովորական մարդ և գիշերային մենակռիվ էր մղում: Բայց մարգարեն ասում է, որ հրեշտակն էր [մենամարտում]: Նա նրան կաղացրեց, նրան աստվածատես անվանեց և սա մշտական հիշեցումն էր Տիրոջ երևալու մասին, որը փայլեցնելու էր Հակոբի սերունդը:

304. Այսպես սովորական և մերձավոր դարձավ Նրա երևումը, նույնիսկ հեթանոս թագավորներին տեսիլքով երևաց, որպեսզի պահպանի իրեն ճանաչողներին: Սրանց մասին [Ս. Գիրքը] պատմում է, թե «ընդրանց սիրուն կշտամբեց թագավորներին, որպեսզի չմերձենան Տիրոջ օծյալներին»[35], հայտնի դարձնելով, թե «արդարև Հակոբը Տիրոջ բաժինն է և Իսրայելը նրա ժառանգության վիճակը»[36]:

305. Նա ամեն ժամանակ հետևում էր նրանց, օգնելով, օրհնելով, որ աճեն և սերունդը բազմանա պանդխտության մեջ: Նա սովի պատճառով բերեց նրանց Եգիպտացոց երկիրը բերանի հացի համար: Այնտեղ նրանք մնացին հինգ նահապետների [ժամանակ] աբրահամյան դարաշրջանից [հաշված] մոտավորապես չորս հարյուր երեսուն տարի: Այնտեղ կարելի էր տեսնել մարդասեր Աստուծո շնորհների բարձրագույն առավելությունը Եգիպտացոց երկրում. քանզի մի մարդու, որ բանտարկված էր որպես կալանավոր, Նա հանեց, բարձրացրեց ու հայտնի դարձրեց մարգարեական արվեստով և Եգիպտացոց տեր դարձրեց:

[Հակոբի որդիների չարաչար տանջանքը Եգիպտոսում և Մովսեսի ձեռքով նրանց դուրս գալը անապատ]

306. Դրանից հետո Նա բազմացրեց իր ժողովուրդը Եգիպտացոց երկրում և տեսավ, որ նեղված են նրանցից: Արդ, Տերը եկավ-երևաց Եբրայեցոց ժողովրդից մի մարդու, որին շատ էր հավանել, արժանի գտել աստվածային խորհուրդներին և որի անունն էր Մովսես: Երևաց նրան Քորեբ լեռան վրա, որպես մորենու մեջ բորբոքված բոց: Նա Մովսեսին պատմեց նրա հայրենի երկրի մասին, նրան ցույց տվեց իր Էական անունը և ուղարկեց Եգիպտոս: Ընդ որում Նա տեսակ-տեսակ հարվածներով տանջեց եգիպտացիներին, որպես խրատ:

307. Իսրայելացիներին դուրս հանեց ամպով և այունաձև լույսով ու բոցաղեզ կրակի սպառնալիքով հովանավորեց: Ճեղքեց ծովախոր անդունդները, ջրասույզ անելով եգիպտացիներին և անցկացնելով ժողովրդին անապատ հանեց, որը հրաշալի ձևով նկարագրված է: Տարավ Քորեբ, հանեց (Սինէ) լեռը և այնտեղ Սինայի (Սինէական) լեռան վրա աստվածային ամպից խորան դրեց, որի մեջ կար ճառագայթաձիգ այունաձև գունդ և մեգն ու մառախուղը վարագույրի նման լեռան շուրջը պատել էին: Այնտեղ կար բյուրավոր հրեշտակների բանակ:

308. Այնուհետև կանչեց Մովսեսին աստվածակերպ տեսիլքը ցույց տալու: Սա հրաստակագույն ձևով նկատեց ոտքի պատվանդանը՝ կապտագույն գոհարանման շափյուղա աղյուս, զուտ ջինջ երկնագույն, հիշեցնելու համար կավի[37] և ջրի (ծովի) գործը և սանձարձակ ժողովրդի լրբենի սիրտը, իսկ փառքի աթոռից և նրա շուրջը ահավոր փայլ երևաց, իբրև բորբոքյալ հուր:

309. Աստված, որն ամբողջովին լույս է, ամբողջովին համբավ, ամբողջովին տեսիլք, ամբողջովին խոսք, ամբողջովին զորություն, ամբողջովին իմաստություն, կենդանի հոգի, վառող հուր, անփոփոխ լույս, անպատում փառք, անքննին տեսիլք, անբավ մեծություն, երևաց նրանց որչափ որ նրանք կարող էին դիմանալ Նրա տեսիլքի մեծությանը: Դրանից հետո Նա անձամբ երևաց քահանաներին ծերերով հանդերձ և ամբողջ ժողովրդին եկավ-երևաց, բորբոքյալ կրակի տեսիլքով և մի ձայն շեփորի նման պատվիրանների պատգամներ դրեց նրանց՝ Աստուծո ձեռքը գրել էր քարեղեն տախտակների վրա, որ նրանք հարգեն նրա արդարությունը և պահեն նրա պատվիրանները: Ասաց նրան (Մովսեսին), թե «գալիս եմ ամպերի մեջ հանդիպելու իսրայելացիներին, որ խոսեմ քեզ հետ, որպեսզի հավատան քեզ»[38]: Նա երեվաց կառքով, քերովբեներով, ամպի այունով և միգախառն հրով:

310. Երբ երկրորդ անգամ եկավ կանգնելու Տիրոջ առջև, ասաց՝ «եթե ես քեզանից գթություն գտա, քեզ ցույց տուր ինձ,

[35] Սաղմ., ԺԴ, 14—15:

[36] Բ Օր., ԼԲ, 9:

[37] Ակնարկ է եգիպտացոց վատ արարքներին, Ելից, Ա, 14: Teaching, p. 58.

[38] Ելից, ԺԹ, 9:

ոչ գիտենամ քո անունը, քանզի ես ողորմություն գտա քեզանից»[39]: Տերն ասաց նրան, թե «չես կարող իմ երեսը տեսնել, քանզի մարդ չի կարող ինձ տեսնել ու ապրել, բայց ահա քեզ կդնեմ ժայռի խոռոչի մեջ և իմ փառքը քո կողքով կանցկացնեմ»[40]: Նա ցույց տվեց նրան, որ գթած ու ողորմած է և երևաց նրան խոնարհությամբ, որպեսզի նա չմեռնի, փրկվի ու ապրի: Նա ամբողջ ժողովրդի դիմաց եկավ-երևաց և նրա ձայնը բոլորը լսում էին, երբ նա Մովսեսի հետ էր խոսում:

311. Այսպես բազում օրեր լեռան վրա հանգիստ կատարելով, ականատես լինելով և հոգով ներշնչված օրենքների գիրքը լեռան վրա առանալով, ուսուցանում էր Իսրայելի որդիներին, որոնց [Աստված] իր դրած պատվիրանները շնորհեց և աշխարհի արարչագործության պատումը տվեց Մովսեսին: Ցույց տվեց նաև նմանողությամբ մի աննյութական խորան: Երբ Մովսես Իսրայելի որդիներով հանդերձ տեսավ, ըստ ցուցադրված օրինակի, նյութական խորան պատրաստեց, որպեսզի Աստված նրա մեջ բնակվի: Նա հանախ խոսում էր Մովսեսի հետ և պատմում էր կարգած օրենքների բյուրապատիկ օրինակներ: Նա անընդհատ նրանց հետ էր անապատի օթևաններում և անվավոր հրաշքներով տարավ-հասցրեց խոստացյալ [երկիրը]:

312. Նա նրանց հետ էր անապատում և այնտեղ նրանց շրջեցրեց բառասուն տարի, որպեսզի մոռացվի նրանց դիցապաշտ բառապաշտության սովորությունը, որ թերևս կարողանան իրենցից մի քիչ փարատել հեթանոսական սնոտի ուսմունքները, որոնք նրանց թակարդել էին անմտության պատճառով: Քանզի նա այսպես մտածեց՝ թե չար սովորություններով հանելով նրանց եգիպտացոց երկրից, գուցե այնտեղ, ուր տարվեն, նրանք տեսնեն, որ ժողովուրդ էլ ավելի չար է և իրենք ևս չարիքի մեջ առավել բորբոքվեն, ինչպես օրինակ, օդը, որ տեսնելով հուրը, ավելի է հրդեհ բորբոքում: Նա ուզեց նախ թերել նրանցից հնացյալ աղտը և նրանց առաջնորդելով Քանանացոց պիղծ ազգերի դեմ, բանիել, արմատախիլ անել նրանց և [իսրայելացիներին] այնտեղ բնակեցնել:

313. Այս բանի համար նա շրջեցրեց նրանց անապատի մեջ, ուր Նա անձամբ լեռան վրա երևաց: Նա Մովսեսի գործած տեսակ-տեսակ նշաններով ու հրաշքներով հրահանգեց Աբրահամի զավակներին: Քաղցր մանանայի երկնավոր հացով կերակրեց նրանց, վնասից ջուր բխեցրեց, վտակներ հոսեցրեց ծարավների համար և բանակատեղու վրա լորամարգի տեղացրեց նրանց փափագը գոհացնելու համար:

314. Այնտեղ ևս նրանք Արարչին դառնացրին, բարկացրին իրենց սովորական չար վարմունքով: Բարերար Աստուծո փոխարեն հորթ կանգնեցրին, նրա անունը Աստված դրեցին և փրկիչ կոչեցին: Այդ պատճառով Աստուծո բարկությունը նրանց վրա եկավ և ժողովրդի անթիվ բազմություն կոտորվեց, որի համար էլ հրաման եղավ խոստացյալ երկիրը չմտնել: Ապա անապատում կորան, կոտորվեցին ամենքն առհասարակ՝ Իսրայելի որդիների անօրեն, [Աստծուն] դառնացնող ազգը:

315. Եվ մեծ մարգարեն Մովսես Աստուծո հրամանով ելավ լեռը և այնտեղ մեռավ ու մինչև օրս ոչ ոք չի կարողացել գտնել նրա գերեզմանը: Իսկ նրանք սերելով բազմացան անապատում և ամենևին չգիտեին, որևէ մեղք կամ չարի ներգործություն:

[Հակոբի որդիների Ավետյաց երկիրը մուտքը: Դատավորների իշխանությունը և Դավթի թագավորությունը]

316. Արդ, Մովսեսի ձեռքով և Աստուծո հրամանով նրանց վրա մի ընտիր այր գորավար և առաջնորդ էր կարգվել, որի անունն էր Հեշով (Յեշով, Յեսու): Սա անապատից վերցնելով աբրահամյան սերունդը՝ Իսրայելի որդիներին, շարժվեց-գնաց Խոստացյալ երկիրը: Նա արմատախիլ արեց, կործանեց ամբարիշտ յոթը ազգերին, և նրանց (իսրայելացիներին) բերելով բնակեցրեց: Այստեղ նա տեղ ցույց տվեց և նախ հանուն Տիրոջ տաճար շինեցին: Աստուծո հրամանից հայտնի էր, որ միայն Նրան իրավունք ունեն սատարագի ողջակեզը մատուցել, ուր Աստված բնակված էր մարդկանց մեջ: Ապա նրանց դատավորներ տվեց, որոնք ըստ Աստուծո կամքի դատում էին նրանց և լի էին մարգարեական հոգով: Սակայն երբ դատավորները մեռնում էին, նրանց տարիների միջև ընկած ժամանակ դարձյալ Աստուծո նկատմամբ ամբարիշտ դառնալով, աստվածներին պաշտամունք էին մատուցում և պատկերներին երկրպագում: Դրա համար նրանց կրկին մատնեց օտար ազգերի ձեռքը և հեթանոս թագավորների միջոցով խրատում էր նրանց:

317. Դրանից հետո իրենք Աստծուց թագավորներ խնդրեցին և Նա տվեց նրանց: Սրանց միջից բարձրացրեց Դավթին, որ լի էր սուրբ հոգով և նրա մասին վկայեց՝ սկսած, թե «գտա Դավթին՝ Հեսսեի (Յեսսէ)

[39] Ելից. ԼԳ, 13:
[40] Ելից. ԼԳ, 20–23:

որդուն, իմ սրտի համեմատ մարդուն, որն անելու և կատարելու է իմ բոլոր ցանկությունները[41]: Նա կանգնեցրեց նաև նրա աթոռը և նրա զավակի աթոռը:

[Աստուծո երևումը մարգարեներին գյուղական տեսիլքներում և հրեշտակներին մարդկանց պահապան կարգելը]

318. Ապա դարձյալ կարելի էր տեսնել այնտեղ պարգևական երկրում գունդ-գունդ մարգարեների, որոնք նաև տեսնողներ էին կոչվում, իրենց [երևացած] աստվածային հայտնությունների համար: Նրանք բարձրաձայն պատմում էին Իսրայելի տոհմերին, ըստ յուրաքանչյուրի կարգի, ինչպես Դավիթ արքան երգեց համաշխարհային տերությունը, թե «Տեր, Տեր իմ, ինչ սքանչելի է քո անունը ամբողջ երկրի վրա»[42]:

319. Քանզի մեկին երևաց կառքով, իբրև պայծառագույն զորավար, և մեկ ուրիշը տեսավ Հինավուրցին (Աստուծո), դատավորի նման դատական աթոռին նստած կամ մարդու Որդու նման, որը երկնքի ամպերի վրա էր գալիս. մեկ ուրիշն էլ [տեսավ Նրան] իբրև մի մարդու, որը սեղանի (խորանի) վրա է, ինչպես ասում են՝ «տեսա Տիրոջը, որը սեղանի վրա էր»[43]: Տեսնում ես, որ թեպետ իբրև մարդ երևաց, ճանաչված է դրպես Տեր:

320. Իսկ մեկ ուրիշն էլ տեսավ դեռ ավելի սքանչելակերպը. «Տեսա Տիրոջը աթոռին բարձրացած և վեցթևյան սերովբեների գունդը Տիրոջ շուրջը»[44]: Ուստի այս ամենը աստվածային ձևով պետք է հասկանալ և Աստված էլ Աբրահամին ու բոլոր սերունդներին անհամար և հաճախագույն տեսիլքներ ցույց տվեց: Ինչպես մարգարեն էլ ասում է Տիրոջ կողմից, թե «Ես տեսիլքները հաճախակի դարձրի և մարգարեների ձեռքով նմանություններ գործեցի»[45]:

321. Նա ազգերի բաժանման, լեզուների խառնակության և Ադամի որդիների ցիրուցան անելու ժամանակ սահմաններ կարգեր ըստ Աստուծո հրեշտակների թվի: Ինչպես իրենք հրեշտակներն էլ պատմել են ցանկալի Դանիելին, յուրաքանչյուրի սահմանների մասին և որոնց բարերարն Աստված պատժեց, սակայն բարկության մեջ հիշեց իր ողորմությունը: Որպեսզի աստվածակարգ անուշահոտ հոգիները ոգիների պիղծ գնդից, ռազմաշունչ դևերից մարդկային ազգը աներկյուղ պահպանեն և պատրաստեն աստվածամերձ գիտությանը: Ինչպես երանելի Դավիթը քննելով պատմում է, թե «Տիրոջ հրեշտակների բանակները շրջապատում են իրենից երկյուղածներին և Նա պահպանում է նրանց»[46]: Մեծն Հակոբը (ասում է), թե «հրեշտակը, որ ինձ պահում էր իմ մանկությունից»[47]: Իսկ Ամենատերը, թե «իմ հրեշտակը (դեսպանը) առջևից է գնալու քո ճանապարհները պատրաստելու համար»[48]: Նրա պահպանությունը այն բանի համար է, որ միասնական [բնությամբ], բայց բաժանբաժան եղած ազգերին, որոնք Աստուծո երեսից ընկած են, աստվածամերձ գիտությանը ծանոթացնի, որպեսզի թերևս նրա երևելի արարածների միջոցով նրանք ծանոթացան աներևույթ Աստծուն:

322. Քանզի «մեկ արյունից ստեղծեց մարդկության բոլոր ազգերը, որ բնակվեն երկրի երեսին, հաստատեց որոշված ժամանակները (եղանակները) և նրանց բնակության սահմանները, որպեսզի փնտրեն Աստծուն և թերևս զննեն ու գտնեն»[49]: «Նրա աներևույթ [արարածները] ի ընկզբանե աշխարհի, ծանոթ և տեսանելի են եղել ստեղծվածների միջոցով»[50]. քանզի Տերը իր արժանավորներին մերձավոր է: Նույնպես և Տիրոջից են ամենայն պահպանությունները, քանզի, ուր Տերն է, այնտեղ են նաև հրեղենների (հրեշտակների) բոլոր բանակները: Ինչպես Հակոբ հայրապետը, ըստ նրան եղած հայտնությունների, միանգամայն հրեշտակների բանակի մեջ էր գտնվում, քանզի հրեշտակները ըստ իրենց նմանությունների, կարգված էին մարդասեր Աստծու կամքով պատգամաբեր լինելու մարդկության համար, որը հասկանալի է վեցթևյան սերովբեների օրինակով:

323. Քանզի թեև նրանք մարմնեղեն թևավորներ չեն, այլ նմանությամբ թևավորներ, այսուհանդերձ հրեշտակները սոսկական մարդու կերպարանքով երևում են: Նրանք Աբրահամին և Ղովտին մարդկային արտաքինով հայտնվեցին. նրանցից մեկը Դանիելին երևաց որպես մարդ. նույնպես և ծանր տեսիլքով հայտնվեց Գեդեոնին: Զաքարիան լեռներում հեծյալ գնալիս, տեսավ [հրեշտակին], իսկ Հեսուն

[41] Գործք, ԺԳ, 22:
[42] Սաղմ., Ը, 2:
[43] Ամովս, Թ, 1:
[44] Ես., Զ, 1—2:
[45] Ովս., ԺԲ, 10:
[46] Սաղմ., ԼԳ, 8:
[47] Ծննդ., ԽԸ, 15—16:
[48] Մատթ., ԺԱ, 10, Մարկ., Ա, 2, Ղուկ., Է, 27, Մաղաք., Գ, 1:
[49] Գործք, ԺԷ, 26—27:
[50] Հռովմ. Ա, 20:

հանկարծակի տեսավ հենց մարդու կերպարանքով և աներկյուղ հարցրեց նրան՝ «մեզանի՞ց ես, թե մեր թշնամիներից»[51] և ապա տեղեկանալով, թե Աստուծո զորքերի զորավար է, գետին ընկավ, երկրպագեց: Նույնը կատարվեց նաև բոլոր հրեշտակատեսներին:

324. Այսուհետև ճշմարիտ համարենք, որ հոգևոր ցեղի ամեն տեսակ մարդկային կերպարանքով ի հայտ գալը մարդկանց, եղել է Աստուծո հրամաններին հնազանդվելու և տարբեր ժամանակներում ծառայություն մատուցելու համար տրված [զգուշացում]: Եվ նրանք ոչ միայն նույն կերպարանքն են պահպանում. նրանց աննյութական աչքերի մասին մարգարեն իսկ գուշակում է, թե «Նա իր հրեշտակներին հոգիներ է դարձրել և պաշտոնյաներին՝ կրակի բոց»[52], քանզի «նրանք ծառայող հոգիներ են, որոնք առաքվում են սպասավորելու փրկության ժառանգորդներին»[53]:

325. Այս մասին Մովսեսը ոչինչ չի պատմել, որպեսզի չլինի թե մտավոր և բանավոր հոգիները անզգա արարածներ համարվեն, այլ նրանք ծառայական սպասավորությամբ իրենք վերցրած կրերեն Աստուծո փառքի մեծության հրամանները: Բայց ինչ վերաբերում է նրանց բնության ի վերուստ ստեղծված լինելուն, մարգարեները բարձրաձայն հայտնում են, թե «Նա իր հրեշտակները հոգիներ դարձրեց»[54], իսկ մյուսը, թե «ես եմ Տեր Աստվածը, որ հաստատեց երկինքն ու երկիրը, որի ձեռքերը հաստատեցին երկնքի բոլոր զորքերը»[55]: Բայց եթե նրանք նյութական լինեին, ապա տեսանելի պիտի լինեին, ոչ աներևույթ և առհասարակ ոչ որի [հատուկ] չպիտի հայտնվեին: Իսկ եթե այսպես է ստեղծվածների համար, որչափ ևս առավել Աստուծո էության աներևույթ բնույթը պիտի համարվի անստեղծ և անմատչելի:

326. Բոլոր աստվածատես կատարյալներին Նա միատեսակ մարդկային նմանությամբ երևում է ըստ տարբեր ժամանակների և ճանաչվում է իր ձայնից և հրամաններից, եթե մարդակերպ է երևում, քանզի մարդկանց հետ է խոսում, հրավիրելով խոստացյալ բարիքների տեսիլքին և միշտ չէ, որ Նա նույն կերպարանքը իր վրա է վերցնում: Նա ի վիճակի է ցույց տալ ճշմարտությունը նմանությամբ, որի մեջ բոլոր դժվարությունները դյուրին են և անհնարինները՝ հնարավոր: Նա կարող է ամեն ինչ անել և ոչինչ անկարելի չէ Նրա համար: Նրան տեսնողները նրա մասին բարձրաձայն գոչում էին, թե չափավոր հայտնություններից նրանք ճանաչեցին անչափելին, աներևույթը և վայրկենական տեսիլքով իմացան էական զորությունը ըստ իրենց կարողության:

327. Աբրահամ հայրապետն էլ Նրան ամբողջ երկրի տեր և դատավոր կոչեց, իսկ մեծն Մովսեսը՝ ինքնագո Աստված և ամեն ինչի Արարիչ: Նա ցանկանում էր տեսնել Նրա փառքը, քանզի բոլոր մարգարեներն էլ տեսնողներ են: Մեկն ասել է, թե «Տերը, Տերն առաքեց ինձ և նրա Հոգին»[56] և թե «Տիրոջ բերանը խոսեց այս»[57]: Իսկապես ով որ բերանից է լսում, նրա կերպարանքին էլ ականատես է լինում: Մեկ ուրիշը պաղատանք մատուցելով ասում է՝ «Տեր, Տեր, անավասիկ խոսել իսկ չգիտեմ, քանզի մանուկ եմ»[58]: Տեսնում ես, «անավասիկը» ցույց է տալիս նրա ներկայությունը: Բոլոր հրամանաբերները իրրև Տիրոջ կողմից եկածներ, միահամուռ բարձրաբարբառ աղաղակեցին. մեկն ասաց, թե «խոսեց զորությունների Տերը»[59] և մեկ ուրիշը՝ «ամենակալ Տերը հրամայեց»[60]: Իսկ Ամովսի լեզվով Նա միանգամայն ճանաչվում է նրա այն խոսքերից, թե «Աստված ոչինչ չի անի առանց իր խորհուրդները հայտնելու իր ծառաներին՝ մարգարեներին»[61]:

[Աստված երևում է զանազան նմ…նությամբ՝ մարդկանց ընտելացնելու համար]

328. Արդ, հայտնի է այսուհետև մեր ասածներից, թե սկզբում նախաստեղծ մարդուն էլ նույն նմանությամբ երևաց, ինչպես և հետագայում բոլոր աստվածատես կատարյալներին նույնը արեց, որ չլինի թե օտար կամ անծանոթ կերպարանքով տեսնողներին խրտնեցնի: Մանավանդ թե ավելի լավ է, որ որդին աստվածատես հորից տեղեկանալով դյուրությամբ նախապատրաստված լինի, որպես ընտանի [երևույթի] և լսածը ականջով ու աչքով նկատի:

Ինչպես և երանելի Հոբը, Աստուծո սիրելին, արդարը ասել է Աստծուն, թե «իմ ականջների լսողությամբ ես առաջինը քեզ

[51] Ցես., Ե, 13:
[52] Սաղմ., ՃԳ, 4:
[53] Եբր., Ա, 14:
[54] Սաղմ., ՃԳ, 4:
[55] Ես., ԺԳ, 4:
[56] Ես., ԽԸ, 17:
[57] Ես., Ա, 20, ԾԸ, 14:
[58] Երեմ., Ա, 6:
[59] Ես., ԽԵ, 13. Երեմ., Ը, 3:
[60] Զաք., Գ, 9. Մաղ., Ա, 9:
[61] Ամովս., Գ, 7:

լսեցի, բայց հիմա իմ աչքն էլ քեզ տեսավ»[62], որին և ասել է Աստված՝ «պնդացրու քո մեջքը տղամարդու նման և մի համարիր, թե որևէ օտարոտի բան երևաց քեզ»[63]:

329. Քանզի սկզբում էլ Աստված երևաց ըստ ազգարարության, ինչպես [Սուրբ Գիրքն] ասում է, թե «ըստ Աստուծո պատկերի ստեղծեց մարդուն»[64]: Ուստի ամբողջ հավերժության մեջ նույն նմանությամբ փառքի Աստվածը երևում է, ինչպես Ստեփաննոս Վկան ասել է, թե «Փառքի Աստվածը երևաց մեր հոր Աբրահամին»[65]: Եվ նրանք բոլորն էլ Նրան կոչեցին Տեր Սաբաովթ (Աստված) և ամենակալ Աստված:

330. Արդ, Աստուծո երևալը մարդու նմանությամբ տեսնողների տկարության պատճառով էր և ոչ թե այն, որ Աստուծո անչափելի բնությունը սահմանափակ և կողմնափակ է և ոչ էլ այն, որ Նա, որով լցված է ամենայն ինչ, երբեմն երևում է իր սահմանները փոխարինելով ուրիշ սահմաններով: Այլ Նա զիջելով և հնարամտությամբ ընտելացնում է նրանց նմանություններով, որպեսզի ճշմարիտ կերպարանքին մերձավոր, Աստուծո [էությանը] խորամուխ և հայտնապես տեսնող դարձնի, քանզի անկասկած ճշմարտությունը պետք է փնտրել նմանության մեջ:

331. Նրան ցանկացավ տեսնել նաև մեծը Մովսեսը: Քանզի թեպետ ձեռքը ձեռքին և բերանը բերանին Մովսեսը ճանաչեց ու դեմ առ դեմ խոսեց Աստուծո հետ, սակայն նա ձգտում էր հասնել ճշմարիտ գեղեցկության, ասելով Աստուծո, թե «ցույց սուր ինձ քո անձը»[66]: Բայց տես պատասխանը՝ «ոչ ոք կարող է տեսնել Աստծուն և ապրել»[67]: Ապա ավելի փոքր նշանակով նվաճում է իրեն հայցողներին, իսկ իր բնական անտեսանելիությունը պահպանում է, վասնզի անհասանելի է:

332. Տեսնում ես, որ անտեսանելի է նայողներին և քննողներին անհասանելի իր առանձնահատուկ կերպարանքով: Քանզի Նրա նմանությունները ոչ թե նյութական կերպարանքներ են, այլ անցողիկ տեսիլքներ, իսկ ճշմարտությունը՝ նրա էական բնությունն է: Մի նմանություն ցույց տվեց նաև Մովսեսին նյութական խորանի օրինակով, ըստ որի նա նյութական խորան կազմեց: Եվ մի տաճար ցույց տվեց Եզեկիելին որպես տաճարի օրինակ: Նույնպես և առաջին մարդուն Աստված ցույց տվեց մի աննյութական նմանություն մարդու կերպարանքով, որպեսզի նյութական տարրից մարդ պատրաստի ճշմարտությանը մոտիկ ձևով: Քանզի Աստված իր անզգջական բարերարությամբ առաջին մարդուն կարգադրեց, որ իրեն մերձավոր ծանոթ լինի և խորամուխ աստվածային վայելքին:

333. Նրանց վրա մեկը մյուսի ետևից Աստուծո Հոգին առատագույն թափվեց, Իսրայելի ցեղի դասադաս և գունդագունդ սուրբ մարգարեների վրա, որոնք ըստ Աստուծո կամքի իրենց ժողովրդին պատվիրեցին Աստուծո հրամանները զգուշությամբ պահել: Նրանք ընտրյալ ազգ էին և պատվեր էին ստացել չմերձենալ այլ ազգերին և չխառնակվել հեթանոսների տոհմերին, որպեսզի չսովորեն նրանց մեղքերը:

334. Իսկ նրանք խառնակվեցին և խնամությամբ ապականվեցին նրանց հետ, վերցրին, սովորեցին նրանց կռապաշտությունը, թագավորներով ու իշխաններով խառնակվեցին: Դրա համար մարգարեն տրտունջք ասելով գոչեց, թե «խառնակվեցին հեթանոսների հետ և նրանց արարքները սովորեցին, նրանց կուռքերին ծառայեցին և նրանք սրանց համար դրոգայթ եղան»[68] և թե «իրենց որդիներին ու դուստրերին զոհեցին դևերին և անբիծ արյուն թափեցին՝ իրենց որդիների ու դուստրերի արյունը, որ զոհեցին Քանանի կուռքերին»[69]:

[Իսրայելի որդիների ազատումը Եգիպտոսի ծառայությունից և նրանց Ավետյաց երկրի ազգերի կուռքերը պաշտելը]

335. Արդ, այն ժամանակ, երբ Տերը հարվածեց Եգիպտացոց երկիրը, որպեսզի նրանց (իսրայելացոց) այնտեղից հանի, եգիպտացիների բոլոր անդրանիկներին կոտորեց, իսկ նրանց այնտեղից փրկեց: Այդ պատճառով Նա ուխտ դրեց նրանց հայերի հետ՝ նվիրել իրենց անդրանիկ որդիներին Տեր Աստծուն: Բայց դրա փոխարեն նրանք իրենց որդիներին և դուստրերին հեթանոս աստվածներին զոհեցին, բագիններ շինեցին այն երկրում, որը Տեր Աստվածն իրն էր անվանել և իր ժառանգության վիճակն էր կոչվել: Իսկ նրանք Նրա փոխարեն պատկերներ կանգնեցրին և քարերին ու փայտին երկրպագեցին: Երկիրը շաղախվեց աստվածների հետ շնա-

[62] Ցովբ., ԽԲ, 5:
[63] Ցովբ., Խ, 2—3:
[64] Ծննդ., Ա, 27:
[65] Գործք, Է, 2:
[66] Ելից., ԼԳ, 18:
[67] Ելից, ԼԳ, 20:
[68] Սաղմ., ՃԵ, 35—36:
[69] Սաղմ., ՃԵ, 37—38:

նալու արյունով և նրանք շատացրին մարմնի պոռնկությունը: Այսպիսով նրանք պղծյալ էին իրենց վարքի մեջ:

336. Երբ նրանք մտան այն երկիրը, որ Նա տվել էր նրանց, հրամայեց ջնջել այդ երկրում եղած անօրեն ցեղերին: Սակայն նրանք չկոտորեցին, այլ դաշնակից դառնալով, ուխտեր հաստատեցին անօրեն ցեղերի հետ, որոնց միանալով ամբարշտություն ժառանգեցին: Քանզի Աստված երկրի բնակիչներին հանել էր երկրի բնակությունից, նրանց չար արարքների պատճառով: Իսկ նրանք նորից մտնելով նույն ձևով էրկին միաբանեցին նրանց հետ, իրենց թագավորներով, իշխաններով և բահանաներով հանդերձ:

337. Դրա հետևանքով Տեր Աստված իր առավել գթության և մարդասիրության պատճառով նրանց մոտ մարգարեներ առաքեց սպառնալի պատգամներով, որպեսզի ետ դառնան իրենց անօրեն գործերից և պաշտեն ամենայնի արարիչ Աստծուն, որն իր մարդասիրությամբ գթալով ողորմել էր նրանց չարության վրա: Նա մարգարեների միջոցով տրտնջում էր նրանցից, թե «փայտին ասացին՝ դու ես իմ հայրը և քարին, թե՝ դու ես մեզ ծնել, իսկ ինձ թիկունք դարձրին և ոչ իրենց երեսները»[70]:

338. Արդ, չար և անմիտ ազգը կուրացյալ ելավ մարգարեների դեմ, բարկացավ ու սպանեց և այնչափ կոտորեց, մինչև որ մարգարեներից մեկն աղաղակեց, թե «ես միայն մնացի»[71]: Նրանք մարգարե սուրբ անունն առնելով, գործածեցին սուտ և անարգ բրմերի համար:

339. Նույն ձևով այս ժանտաբարո ազգը չկամեցավ լսել նաև աստվածատես ճշմարիտ մարգարեներին, որոնք պատմում էին աստվածային ճշմարիտ Որդու աշխարհ գալուստը, մարմնավորությամբ հանդերձ: Ուստի նրանց առավել ևս մահվան մատնեցին և ոչ որ չմնաց, որին չսպանեին պեսպես տանջանքներով:

[Իսրայելի որդիների գերությունը Բաբելոն: Յոթանասուն տարուց հետո նրանց ազատությունը և տաճարի նորոգությունը]

340. Այս պատճառով Տեր Աստված բարկացավ այդ ժողովրդի վրա և գարշելով իր ժառանգությունից, նրանց (իսրայելացիներին) մատնեց հեթանոսների ձեռքը: Նա մատնեց նրանց այն մարդկանց ձեռքը, որոնց աստվածները պաշտել սիրեցին և նրանց հետ պոռնկացան: Սրանց որպես տանջողներ, թշնամանողներ և գերողներ հարուցեց նրանց դեմ: Ինչպես և ասում է, թե «մատնեցի նրանց իրենց հեթանոս հուսանիների ձեռքը, նրանց ատողները տիրեցին նրանց, թշնամիները նեղեցին նրանց և խոնարհեցրին իրենց ձեռքերի տակ»[72]: Քանզի թեև բազում անգամներ փրկել էր նրանց նեղիչների ձեռքից, սակայն նեղությունից փրկվելուց հետո նույնը առավել հանապազ կրկնեցին, դառնացրին Աստծուն իրենց մտածություններով և կորացան իրենց անօրենության մեջ:

341. Սակայն նայեց Աստված նրանց նեղություններին, լսելով նրանց աղոթքների ձայնը և հիշեց այն ուխտը, որ նրանց հայրերի հետ ունեցել էր: Գթաց նրանց ըստ իր սեծ ողորմության և նրանց շնորհ արեց ընդդեմ բոլոր գերողների: Տեր Աստվածը փրկեց նրանց և հեթանոսների միջից[73] հավաքեց նրանց, յոթանասուն տարի հետո վերադարձրեց գերությունից, Բաբելոնի երկրից, Ասորեստանի կողմերից: Վերստին շինեց ավերակները և նորոգեց իր անվան տաճարը, նրանց մարգարեություն տվեց, վերահաստատեց բահանայությունը և ամեն ինչ վերստին նորոգեց: Ապա իր խոսքը առաջ բերեց, որը դարաշրջաններ անցնելուց հետո Նա իրագործեց իր Միածնի միջոցով:

342. Քանզի ամենագետը ոչ թե հետո իմացավ Որդու գալ-երևալը աշխարհին և մարդկանց բարձրացնելը ավագության փառքին, այլ հենց սկզբից առաջադրված նպատակը Նա վերջում կատարեց: Այն խորհուրդը, որն Աստուծո մոտ հավիտյան ծածկված էր, այժմ հայտնվեց իր սրբերին, բանզի արդարներին ժամանակավորապես երևացող նմանություններ՝ գալիք հավիտենական ճշմարտության գուշակություններն էին:

[70] Երեմ., Բ, 20:
[71] Նա., խթ., 21:
[72] Սաղմ., ճԺ, 41—42:
[73] Հմմտ. Սաղմ., ճԺ, 43—47:



ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ
(Մայր Աթոռին առընթեր ճարտարապետական հանձնաժողովի նախագահ)

ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՄԱՅՐ ՏԱՃԱՐԻ ՀԱՐԱՎԱՅԻՆ ԶԱՆԳԱԿԱՏԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՈՒՄԸ

Մայր տաճարի երեք փոքր կաթողիկեները կանգնեցվել են հարավային, հյուսիսային ու արևելյան աբսիդների վրա 1682 թվականին, Եղիազար կաթողիկոսի գահակալության օրոք[1]: Դրանցից հարավայինը փլվել է 1921 թվականի մարտի 21-ին, վաղ առավոտյան:

Թորոս Թորամանյանի 1923 թ. դեկտեմբերի 25-ին կազմած տեղեկագրում շարադրված են Մայր տաճարի համառոտ պատմությունն ու հարավային կաթողիկեի կործանման պատճառները և այդ կապակցությամբ ձեռնարկված միջոցառումները[2]:

Մայր Աթոռում Մեսրոպ արքեպիսկոպոս Տեր-Մովսիսյանի նախագահությամբ, Խորեն ու Բագրատ արքեպիսկոպոսների անդամակցությամբ կազմվում է մի հանձնաժողով, որը դիմում է Հայաստանի Ժողկոմխորհի գլխավոր ճարտարապետ Ալեքսանդր Թամանյանին՝ խնդրելով կազմել վերականգնման նախագիծ:

Իր առաջին այցելության ժամանակ Ա. Թամանյանը անհրաժեշտ է համարում նախ և առաջ լուսանկարել Մայր տաճարի խախտված և վտանգավոր դարձած մասերը, ապա, մանրամասն չափագրելուց հետո, քանդել և խնամքով մաքրել, «...որպեսզի հնարավոր լինի լուրջ քննության ենթարկել տաճարն իր բոլոր մասերով»[3]:

Աշխատանքների ղեկավար է նշանակվում Թ. Թորամանյանը, որը գործի է անցնում 1923 թ. օգոստոսի 2-ից և այն ավարտում երկու շաբաթվա ընթացքում:

Կրկին անգամ հրավիրված Ա. Թամանյանը Թ. Թորամանյանի հետ միասին տեղում կատարած քննության հետևանքով գալիս են այն եզրակացության, որ զանգակատան փլուզումը տեղի է ունեցել աբսիդի պատերի խարխլման հետևանքով: Զանգակատան ծանրությունը հետզհետե ճնշելով աբսիդի ուժասպառ պատերին ու դրանք իրենց վրա պսակող եզրապատերի հետ միասին արտահրման ենթարկելով՝ գոյացրել է 0,04 սաժենի լայնությամբ շուրջանակի մի ճեղքվածք, ինչպես նաև վերևն վար երկու ճեղքվածքներ:

Ա. Թամանյանի կարծիքով փլուզված զանգակատունը վերականգնելուց առաջ անհրաժեշտ է խարխլված աբսիդը նկեսից ավելի քանդել և նորից շինել, որպեսզի այն հաստատուն հենարան ծառայի վերականգնվելիք զանգակատան համար: Այդ նպատակով որոշվում է աբսիդի դրսի երեսից պսակվող եզրապատի հետ միասին քանդել վերին չորս շարքերը, ապա վերաշարել, օգտագործելով նույն քարերը ու միայն պակասը լրացնել նոր քարերով[4]:

Պատմելով Ա. Թամանյանի վերոհիշյալ կարգադրության իրագործման մասին, աշ-

[1] Զաքարիա սարկաւագ, Պատմագրութիւն, վաղարշապատ, 1870, գիրք Բ, գլ. ԾԲ, էջ 107:

[2] Թորոս Թորամանյան, Նյութեր, երկրորդ ժողովածու, Երևան, 1948, էջ 61—66, «Էջմիածին», 1947, մայիս-հունիս, էջ 16—18:

[3] Թորոս Թորամանյան, նույնը, էջ 63:

[4] Նույն տեղ, էջ 64:

խաչանքների ղեկավար Թ. Թորամանյանը հայտնում է. «Բազմակուսի աբսիդի ներքնակատների քարերը պակի (եզրապատի—Վ. Հ.) շարքերով միասին, նախապես վրաները թվանշաններ դնելուց (այսինքն՝ համարակալելուց—Վ. Հ.) հետո զգուշությամբ քանդվեցին և, մաքրվելով, նույն կարգով վերստին իրենց տեղերը շարվեցին, իսկ պակասած մասերի համար նոր քարեր տաշվեցին իրրև լրացուցիչ չորս շարքերին: Պակի ոճը նույնը պահվեց, ինչպես որ կար առաջ հին շենքի մեջ: Բայց որպեսզի այս նոր շարված քարերը սերտիվ միանան նոր պատի հետ և անխախտ ձուլվեն, նակատի շարված յուրաքանչյուր քարեր երկաթյա ձողերով կապվեցին հետևի շարքերի հետ՝ ձողերի ծայրերը հալած արճիճով ամրացնելով: Աբսիդի վրան ծածկվեց կոնաձև, եզերքները ագուցիկ տաշված սալաքարերով»[5]:

Դրա հետ միասին քանդվում-հանվում են Գևորգ Դ կաթողիկոսի օրոք Մայր տաճարի արևելյան կողմից կցված թանգարանի վրայի (կանգնեցված հյուսիսային ու հարավային սենյակների կտուրներին) զույգ գմբեթները, որոնք Թ. Թորամանյանի կարծիքով տգեղ ու աննշաչակ լինելուց բացի, «պատճառ էին դառնում ձյունահալքի և անձրևի ջրերին տանիքի վրա լճանալուն և պատերի ու կամարների մեջ ծրծվելուն»:

Գմբեթների վերացման հետևանքով բաց մնացած տեղերը, ինչպես հայտնում է Թ. Թորամանյանը, «նախապես ծածկվեց երկաթե ձողերի վրա կապված բետոնով և վրան հավասարվեց ագուցիկ եզերքներով տաշված սալաքարերով՝ հավասար տանիքի մակարդակին, իսկ նույն մակարդակով, վերցված պարապետների տեղերը սալաքար շարվեցին 0,05 սաժ. պատերից դուրս առաջացնելով»[6]:

Սրանք են հարավային զանգակատան փլման կապակցությամբ Ա. Թամանյանի և Թ. Թորամանյանի կողմից իրականացված համատեղ միջոցառումները: Աշնանային ցրտերը վրա հասնելու կապակցությամբ, աշխատանքները դադարեցվում են ու հետագայում այլևս չեն շարունակվում:

Ա. Թամանյանի կարծիքով սուրբ Էջմիածնի տաճարի հնագույն ձևերը պետք էր վերականգնել՝ վերացնելով հետնագույն տգեղ հավելումները, դրանց թվում թանգարանի շենքը և հյուսիսային զանգակատունը: Այստեղից էլ հասկանալի է, թե ինչու չվերականգնվեց հարավային զանգակատունը (նկ. 1):

Նկ. 1. Վերականգնված հարավային աբսիդը (առանց զանգակատան)

Հարավային զանգակատան վերականգնման հարցը վերստին քննարկման առարկա դարձավ, երբ Վազգեն Ա կաթողիկոսի գահակալության տարիներին ծավալվեցին ս. Էջմիածնի Մայր տաճարի հիմնական վերանորոգման աշխատանքները:

Մայր Աթոռի հարտարապետական-շինարարական հանձնախումբը 1957 թ. հունիսի 27-ին անդրադառնալով դրան, կայացրեց հետևյալ որոշումը.

1. Նպատակահարմար գտնել հարավային գմբեթի վերականգնումը՝ ամբողջացնելու համար տաճարի ընդհանուր տեսքը:

2. Առաջարկի նախնական ուսումնասիրությունը, ինչպես նաև նախագծումն ու իրականացումը հանձնարարել հուշարձանների հատուկ գիտա-վերականգնման արվեստանոցին:

3. Նկատի ունենալով, որ տաճարի հյուսիսային զանգակատունը կրող աբսիդն

[5] Նույն տեղ:
[6] Նույն տեղ:
[7] Նույն տեղ, էջ 66:

ունի ճեղքվածք, անհրաժեշտ համարել նրա ամրացումը ու այդ գործը հանձնարարել նույն արվեստանոցին»:

Հիշյալ արվեստանոցում առաջարկի ուսումնասիրությունն ու նախագծի մշակումը հանձնարարվում է ճարտարապետ Հրանտ Հակոբյանին: Վերջինս այն ավարտում է հաջորդ տարվա ռուլիսին և գծագրերի, բացատրագրերի, նախահաշվի (146,4 հազար ռուբլու արժողությամբ) ու դրանց վերաբերյալ մասնագիտական եզրակացությունների հետ միասին ներկայացնում է քննության»:

Նախագիծը կազմելիս հեղինակը ելակետ է ունեցել հատուկ մասնագիտական հանձնաժողովի կողմից տեղում կատարված ուսումնասիրության հիման վրա ընդունած հետևյալ եզրակացությունը.

ա) Քանի որ հարավային աբսիդը 1923 թ. կատարած վերանորոգումից հետո զգալի կերպով ամրացել է, ապա զանգակատունը կարելի է կանգնեցնել նրա վրա առանց ամրացման լրացուցիչ աշխատանքների:

բ) Ելնելով նրանից, որ զանգակատունը ժամանակին քանդվել է ոչ թե աբսիդի խարխլման, այլ սեփական կամարի արտահրման ուժերի ազդեցությամբ, ուստի նախագծում նախատեսել այդ ուժերը չեզոքացնող երկաթբետոնե գոտիներ:

Նկատի ունենալով, որ ուսումնասիրությունների նյութերով (հին լուսանկարներ, չափագրություններ, Ա. Թամանյանի և Թ. Թորամանյանի եզրահանգումները) հարավային զանգակատունը իր չափերով ու ճարտարապետական տարրերով եղել է համանման հյուսիսային զանգակատանը և տարբերվում է միայն հիմքի աբսիդի արտաքին բազմանկյան չափերով, ուստի նախագծի հեղինակը, հարավային զանգակատան վերականգնման աշխատանքային գծագրերը կազմելիս, ամբողջովին հիմք է ընդունել հյուսիսային զանգակատունը, օգտվելով ճարտարապետ Շ. Ազատյանի չափագրությունից ու ստուգելով այն տեղում: Այսպիսով, ըստ նախագծի, հարավային զանգակատունը պիտի ունենար հյուսիսայինի ձևերը, հանդիսանար վերջինիս պատճենը:

Նախագծի հեղինակակից ինժեներ-կոնստրուկտոր Ռոբերտ Մանուկյանը ներմուծել է կառուցվածքում թաքնված ու դրսից անտեսանելի երկաթ-բետոնյա չորս գոտիներ (մեկը հենարանների ստորին մասում, երկուսը՝ սյունաշարի հիմքում, և մեկը՝ գրմբեթի շուրջը), դրանք կապելով միմյանց ուղղաձիգ ուղղությամբ երկաթ-բետոնե կանգնակների ու սյուների մեջ անցկացրած երկաթյա ձողերի միջոցով: Երկաթբետոնե միջուկներ են դրված նաև չորս հիմնական կամարներում (նկ. 2):



Նկ. 2. Հարավային զանգակատան վերականգնման կոնստրուկտիվ գծագիրը

Նախագծի վերաբերյալ մասնագիտական եզրակացություններ են գրել ճարտարապետական գիտությունների թեկնածու Ալեքսանդր Սահինյանը և ինժեներ-կոնստրուկտոր Կոնստանդին Ալթունյանը: Առաջինը դրանցից, հիմնականում հավանություն տալով նախագծին, առաջարկել է լրացուցիչ ուսումնասիրության միջոցով պարզել՝ ա) համապատասխանո՞ւմ են արդյոք կամարների ձևերը նախորդ զանգակատան կամարների ձևին (քանի որ չափագրության մեջ դրանք ցույց են տրված երկկենտրոն), բ) զանգակատունը կրող հարավային աբսիդի տարողունակությունը: Կ. Ալթունյանը գտնելով, որ զանգակատան վերականգնումը կոնստրուկտիվ տեսակետից միանգամայն հնարավոր է ու

[8] ՃՇՀ-ի արձ., թ. 6:

[9] Տես Հուշարձ. պահպանության վարչության արխիվում պահպանված «Հին նյութերի կապոց», 29:

նախագծում նախատեսված միջոցառումները լիովին ապահովում են վերականգնվող զանգակատան կայունությունը, առանց որևէ առարկության առաջարկում է իրականացման համար հաստատել նախագիծը:

Մայր Աթոռի ճարտարապետական-շինարարական հանձնախումբը 1958 թ. նոյեմբերի 10-ին քննության է առել նախագիծը: Նրա հաստատումը թողնելով համապատասխան պետական մարմնին կից գործող գիտական խորհրդին, առաջարկ է մուտցրել ձմեռվա ամիսների ընթացքում կատարել նախապատրաստական աշխատանքներ (շինանյութի կուտակում, քարերի տաշում և այլն), իսկ տեղում իրականացումը սկսել հաջորդ տարվա ամռան ամիսներին, որպեսզի բացված կտուրից անձրևաջրերը ներս չթափանցեն ու չփչացնեն ծեփն ու որմնանկարները[10]:

Հուշարձանների հատուկ գիտա-վերանորոգման արվեստանոցը ստանձնելով զանգակատան վերականգնման նախագծի իրականացումը, աշխատանքների ղեկավար է նշանակում տեխնիկ-վերանորոգող Հարություն Գասպարյանին, իսկ կատարումը հանձնարարում քարտաշ-վարպետ Ցոլակ Սարգսյանի խմբին, որի մեջ մտնում էին Մկրտիչ Պողոսյանը, Հուսիկ Եկարյանը, Իշխան Գալստյանը, Ռաֆիկ Աստորյանը և Խաչիկ Հակոբյանը (նկ. 3):



Նկ. 3. Հարավային աբսիդը փայտամածների մեջ

1959 թ. ձմռան ամիսներին կատարված նախապատրաստական աշխատանքներից հետո (քարերի կուտակում, մշակում, փայտամածների կանգնեցում և այլն) գարունը բացվելուն պես ծավալվում են վերականգնման աշխատանքները: Դրանց ընթացքում Հ. Գասպարյանը, ղեկավարվելով հյուսիսային զանգակատան բնական չափերով ու ձևերով, որոշ ճշտումներ է մտցնում նախագծում, ինչպես նաև հաղթահարվում են դժվարություններ՝ կապված այուների մեջ երկաթյա ձողերի համար տարանցիկ անցքեր բացելու հետ և այլն:

Նկ. 4. Հարավային աբսիդի վրա վերականգնված զանգակատունը

Կազմակերպված, արագ և բարեխիղճ կատարված աշխատանքներն ավարտվեցին նույն տարվա աշնանը՝ կազմելով սուրբ Էջմիածնի Մայր Աթոռի վերաշինական բեղմնավոր գործունեության լավագույն էջերից մեկը և ընդունվեցին բարձր գնահատականով մասնագիտական հանձնաժողովի կողմից[11] (նկ. 4):

[10] ՃՇՀ-ի 'արձ., թ. 18:

[11] «Եկայք շինեսցուք սուրբ զխորանն յուսոյ» խմբագրականում ի թիվս Մայր Աթոռի շինարարական այլնայլ աշխատանքների հիշատակված է նաև հարավային զանգակատան վերականգնումը: «Էջմիածին», 1959, նոյեմբեր, էջ 3—5:



Ս. ԷՋՄԻԱԾԻՆԸ ՌՈՒՍ ՄԱՍՍԱԿԱՆՑ ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴԱԿԱՆ ՆՈԹԵՐՈՒՄ ՈՒ ՀՈՒՇԵՐՈՒՄ

(Արևելյան Հայաստանը Ռուսաստանի կազմի մեջ մտնելու 150-ամյակի առթիվ)

Ս. Էջմիածինը վաղուց ի վեր գրավել է ռուս մարդկանց հատուկ ուշադրությունը: Նա, ինչպես նաև Արարատ լեռը, ծառայել է նրանց որպես Հայաստանի խորհրդանիշը:

Դեռ 18-րդ դարի վերջերին Հայաստանում եղավ ռուս անվանի նկարիչ Միխայիլ Իվանովը, որի վրձնին են պատկանում երկու յուղաներկ կտավներ՝ «Եկեղեցիների տեսարանը Արարատի ստորոտում» և «Երևան քաղաքի տեսարանը»: Նրանցից առաջինը գտնվում է Լենինգրադի Ռուսական թանգարանում, երկրորդը՝ կորել է: Իվանովը թողել է բազմաթիվ գծանկարներ ու ջրաներկ նկարներ, որոնց թվում՝ «Էջմիածնի Մայր տաճարը», «Արարատյան երեք եկեղեցիները», «Մեծ Հայաստանում», «Ամրոցի ավերակները Լոռվա ձորում» և ուրիշներ:

Երկրորդ ռուս նկարիչը, որ այցելել է Հայաստան, Գավրիլ Սերգեևն է, որը, ինչպես նաև նրա նախորդը, եղել է ռազմական նկարիչ: Նրա կովկասյան նկարների ընդօրինակումները պահպանվել են «Հարություն Արարատյանի կյանքը» գրքում, որը լույս է տեսել Պետերբուրգում ռուսերեն, երկու հատորով, 1813 թվականին: Այդ նկարների թվում են՝ «Մայր Աթոռ ս. Էջմիածնի տաճարի տեսարանը Արարատ լեռան մոտ իր շրջակայքով», «Երևան քաղաքի տեսարանը Արարատ լեռան մոտ, Զանգու գետի վրա»:

Ինչպես Մ. Իվանովի, այնպես էլ Գ. Սերգեևի նկարները ներկայացնելով պատմական հետաքրքրություն, զուրկ չեն և գեղարվեստական արժանիքներից: Այնտեղ պատկերված է Հայաստանը 18-րդ դարի վերջին երկու տասնամյակներին, երկրի լեռնային բնության տեսարանները, պատմական հուշարձանները:

19-րդ դարի սկզբներին Ռուսաստանում աճում է հետաքրքրությունը հայերի և Հայաստանի նկատմամբ: Այդ հետաքրքրությունը պայմանավորված էր այդ դարաշրջանի քաղաքական կյանքի իրադարձություններով:

1801 թվականին, հունվարին, Վրաստանը մտավ Ռուսաստանի կազմի մեջ: 1813 թվականին, Գյուլիստանի պայմանագրի համաձայն, Ռուսաստանին միացվեցին անդրկովկասյան խանությունները, ուր բնակչության զգալի մասը կազմում էին հայերը:

1826 թվականի աշնանը սկսվեց ռուս-պարսկական պատերազմը: Հաջորդ տարվա սեպտեմբերի 19-ին ռուս զորքերը մտան Սարդարապատ, իսկ մի քանի օրից հետո պաշարեցին ու գրավեցին Երևանը: Հայ ժողովուրդը մեծ խանդավառությամբ ընդունեց իր ազատարարներին: Այդ պատմական օրերի իրադարձությունները գտել են իրենց վառ պատկերումը ինչպես հայ, այնպես էլ ռուս գրականության էջերում:

Պուշկինը իր ճանապարհորդական նոթերում գրում է, թե ինչպես Էրզրումը գրավելուց հետո «թուրքերը իրենց տափակ տանիքներից մոայլորեն նայում էին» ռուս զինվորներին, իսկ հայերը բուռն ոգևորությամբ «խռնվել էին նեղ փողոցներում», և ինչպես նրանց երեխաները «վազվզում էին ձիերի առջև, խաչակնքելով ու կրկնելով՝ քրիստոնյա, քրիստոնյա...»:

Գ. Գազարիճ.—Էջմիածնի արտաքին տեսքը (1841 թ.)

Ձեւ Հայոց վանուց սրբոյ Աթոռոյն Էջմիածնի, յամի Տեառն 1805.

Դժվար չէ պատկերացնել հալածված, բազմատանջ ժողովրդի ցնծությունը: Շնորհիվ ռուս բանակի հաղթանակի նա ազատվում էր բռնակալության դարավոր լծից, մի բռնակալություն, որի, ինչպես բնութագրել է Հովհ. Թումանյանը, «վայրագությունը ոչ մի սահման ու չափ չէր ճանաչում, ո՛չ օրենք, ո՛չ իրավունք, ո՛չ խնդիր, ո՛չ աղաչանք, ո՛չ սրբություն, ո՛չ կայք, ո՛չ կյանք, ո՛չ կին, ո՛չ պատիվ, ո՛չ ամոթ, ո՛չ խղճմտանք...»:

Նույնն է վկայել այդ դարաշրջանի իրադարձությունների ականատեսը՝ Խաչատուր Աբովյանը, որի «Վերք Հայաստանի» անմահ վեպում պատկերված է ոչ միայն թալանված, ավերված հայրենի հողը ու հայ ժողովրդի ողբերգական վիճակը, այլև նրա լավագույն զավակների անձնազոհ հերոսական պայքարը՝ հանուն հայրենիքի ու ազատության:

Շահերի ու սուլթանների լծի տակ տառապող հայությունը, սկսած Պետրոս Մեծի ժամանակներից, իր հույսն ու երազը կապել էր Ռուսաստանի հետ: «Այդ երազը իրականացնելու համար,—գրել է Ավետիք Իսահակյանը,—Կովկասի հայերը ամբողջ մի դար պայքարեցին զենքը ձեռքերին, արյուն թափեցին ռուս զինվորի հետ և միասին հաղթանակեցին»:

Այդ պատմական օրերին ս. Էջմիածինը դիմավորել է ռուս զորքերին զանգերի հանդիսավոր զողանջով: Սերգեյ Գլինկան իր «Հայ ժողովրդի պատմության տեսություն» աշխատության մեջ վկայում է այն մասին, թե այդ պատերազմական տարիներին ռուս մարդիկ ինչպիսի՞ ջերմ ընդունելություն են վայելել Էջմիածնում, ինչպես «հյուրասեր վանքը», նրա շենքերը վերածվել են հիվանդանոցի, ուր վանականները սիրով խնամել են ռուս վիրավոր զինվորներին: Ս. Գլինկան, Ներսես Աշտարակեցուն անվանելով «հայ ժողովրդի արժանի և իմաստուն հոգևոր առաջնորդ», հատկապես նշում է նրա ծառայությունները ռուս բանակին:

1827—1828 թվականներին Էջմիածնում եղան բավականին մեծ թվով ռուս մարդիկ՝ զինվորականներ, պետական պաշտոնյաներ, մտավորականներ: Հատուկ հիշատակության արժանի է Ալեքսանդր Գրիբոյեդովի այցը Էջմիածին: 1827 թվականի հունիսի 8-ին նա ներկա եղավ հանդիսավոր ծիսակատարությանը Մայր Աթոռում՝ ի նշանավորումն ռուս բանակի հաղթանակի Ի Արևելյան Հայաստանի ազատագրման թուրք-պարսկական լծից: Այդ Գրիբոյեդովի երկրորդ այցն էր: Առաջին անգամ նա եղել է Էջմիածնում 1820 թվականի սկզբներին: Նա ծանոթացել է կաթողիկոսի հետ, զրուցել, հավանել նրա պատկերավոր արտահայտությունը* ու նշել ճանապարհորդական օրագրում՝ «Էջմիածինը՝ ինչպես վարդը փշերի մեջ»: Ռուս գրողի երկրորդ այցը ևս Էջմիածին հետաքր է թողել նրա օրագրում, ուր կան տողեր՝ «Բանաստեղծական երեկոն Էջմիածնի սրահում. պատուհանից լուսավորում է լուսինը, ստվերի նման շրջում է վանահայրը»:

Մեծ է Գրիբոյեդովի ծառայությունը Հայաստանին: Նա ռուս մտավորականներից առաջինն էր, որ, մոտիկից ծանոթանալով հայ իրականության ու հայ ժողովրդի կյանքի հետ, ջերմ համակրանքով գրեց հայերի մասին:

Պատերազմական տարիներին ռուս զինվորականներից շատերը եղան Էջմիածնում, որոնց թվում 1812 թվականի հայրենական պատերազմի մասնակից, ականավոր ռազմական գործիչ, գեներալ Նիկոլայ Մուրավյով-Կարսկին*: Նա իր ճանապարհորդական նոթերում համառոտակի նկարագրում է Էջմիածնի ծանր, բայբայված վիճակը, իր հանդիպումը այնտեղ Հարությունն Արարատյանի հետ, տալիս նրա անձնավորության բնութագիրը:

Նույն ժամանակաշրջանում Էջմիածին է այցելել Նիկոլայ Մուրավյով-Կարսկու եղբայրը՝ ռուս գրող, սրբավայրերին նվիրված գրքերի հեղինակ Անդրեյ Մուրավյովը: Նա 1848 թվականին Պետերբուրգում հրատարակեց մի ընդարձակ աշխատություն՝ «Վրաստան և Հայաստան» վերնագրով, որի բովանդակությունն են կազմում հեղինակի ճանապարհորդական տպավորությունները և դատողությունները կրոնական հարցերի շուրջ: Երկրորդ հատորում, որը ամբողջովին նվիրված է Հայաստանին, Էջմիածնից տպավորությունները կազմում են հատուկ գլուխ, ուր տրված է վանքերի ընդհանուր նկարագիրը: Ուշադրության արժանի են նաև Անիի ավերակներին նվիրված էջերը:

Եթե Անդրեյ Մուրավյովին հետաքրքրել են Հայաստանի անցյալը, պատմական հուշարձանները, ապա ռուս ազնվական Ալեքսեյ Սալտիկովին հիշատակության ավելի արժանի են թվացել իրեն անծանոթ տեղական կերակուրները: Նա նկարա-

* Հետագայում Կովկասի փոխարքան: Կարսկի, այսինքն Ղարսեցի, միացրել են Մուրավյով ազգանունին ի նշան նրա ռազմական վաստակի Ղարսի պաշարման ու գրոհի ժամանակ (1854 թվականին):

Գ. Սերգեև.—Երևան (1796 թ.) «Զև քաղաքին Երևանա մերձ ի լեառն Արարատու որ առ Զանկու գետովն»

գրում է ճաշկերույթը կաթողիկոսի մոտ, գրում այն մասին, թե ինչպես հյուրասիրել են իրեն վանքում «այծի պանիրով, գոմեշի սերով, տիկի գինիով և այլ համեղ ուտելիքներով»:

1847 թվականին Հայաստանում եղավ բարձրաստիճան ռուս պետական պաշտոնյա Անդրեյ Ֆադեևը, որն իր հուշերում փորձում է տալ երկրի այն ժամանակվա նկարագիրը: Հետաքրքրական որոշ տեղեկություններ կան նաև ս. Էջմիածնի մասին, մասնավորապես վանքի թանկագին իրերի, եկեղեցական սպասների, ինչպես նաև հարուստ գրադարանի և ձեռագրերի մասին:

Հարություն Արարատյանի՝ վերևում հիշատակված գրքում պատկերված են Էջմիածինը և շրջակա գյուղերը 18-րդ դարում: Հեղինակի պատմածից կարելի է եզրակացնել, որ այն ժամանակ այդ շրջանները եղել են շատ ջրառատ, և մեծ տարածություններ զբաղված են եղել բամբակի և բրնձի արտերով:

Նույնն է նշում Ֆադեևը, որն այցելել է այդ վայրեր՝ Արարատյանից մի դար հետո: «Էջմիածինը,—գրում է Ֆադեևը,—հարուստ է ջրով»: Ճանապարհին Էջմիածնից Երևան «պատահում են գյուղեր, թաղված նանաչ այգիների ու ծառերի մեջ. ամենուր ջուրը առատ է»:

Ավելի երկարատև, բան ուրիշները, Հայաստանում է եղել նաև պետական պաշտոնյա Ն. Նեֆեդևը, որը 1839 թվականին հանդես եկավ ռուս մամուլում առանձին գրքույկով, որի մեջ կային գերազանցապես փաստական տեղեկություններ Արևելյան Հայաստանի մասին: Այստեղ կան նաև առանձին էջեր՝ նվիրված ս. Էջմիածնին. «Խոր ակնածանքով մտա Էջմիածնի տաճար,—գրում է Նեֆեդևը,—ներսը բավականին ընդարձակ է և ունի սքանչելի գմբեթ: Ադոտ լույսը թափանցելով գունավոր ապակիներով ծածկված նեղ պատուհանների, հաղորդում է առարկաներին սրբազան խորհրդավորություն: Ամենուրեք կախված արծաթյա ջահերը, նման լուսավոր աստղերի երկնի մութ հորիզոնում, փայլում են կիսախավարում, տաճարի կամարների տակ: Պատերի պատկերները, փորագրումները սադափից ու կրիայի ոսկորներից կազմում են հմտատ, բայց պատշաճ զարդարանքը»:

Մայր տաճարի ներքին նկարազարդումների մասին տեղեկություններ կան նաև մի ուրիշ ակնհայտ ռուս հեղինակի (հավանաբար՝ զինվորական) Երևանից գրած թղթակցություններում: Նա գրում է. «Տաճարի ներքին տեսքը կամարների տակ սուայլ է և շատ նման՝ Կիևի ս. Սոֆիայի տաճարի ներքին տեսքին, միայն այստեղ չկան իկոնոստաս և սրբապատկերներ... Տաճարի պատերը ներսից նկարազարդված են որմնանկարների տիպի պատկերներով, վերցված սրբազան պատմությունից... Սրբապատկերներում բոլորի դեմքերը թուխ են, բայց՝ հայկական: Պատերը և կամարները նկարազարդված են ծաղիկներով և այլ պատկերներով, սրբերի դիմանկարներով, որոնք թանձրացնում են ներսի խավարը:

Բյուրեղապակյա ջահերը, կախված շատ տեղերում և «գեղատեսիլ ճրագները ուրվագծվում են մթության մեջ:

Գմբեթը ներսից զարդարված է երփնեռանգ նախշերով, պարսկական գորգերի նման: Պատուհանները հատուկ վարպետությամբ պատած են գույնզգույն ապակիներով... Տաճարի ներքին ընդհանուր տեսքը վկայում է նրա խոր հնության մասին»:

Ռուս գրողների, զինվորականների, պաշտոնյաների ու ճանապարհորդների օրագրերում ու հուշերում առանձնահատուկ տեղ է գրավում ս. Էջմիածինը, որպես քրիստոնեական հնագույն երկրի արժանահիշատակ ու գեղեցկագույն վայրերից մեկը:

Ռուս տպագիր աղբյուրների տեղեկությունները Էջմիածնի մասին լրացնում են Գրիգորի Գագարինի նկարները, որոնք գտնվում են Լենինգրադի Ռուսական թանգարանում:

*
* *

Անցավ 150 տարի այն պատմական իրադարձություններից, երբ ռուս բանակի հաղթական արշավի շնորհիվ Արևելյան Հայաստանը ազատագրվեց թուրք-պարսկական դարավոր լծից և մտավ Ռուսական կազմի մեջ:

Անգնահատելի է այդ պատմական շրջադարձի նշանակությունը. կովկասյան Հայաստանը, ինչպես Ավետիք Իսահակյանն է ասել, «չնայած ցարիզմի հալածանքներին, վայելեց կյանքի ու գույքի ապահովություն: Կրեց ռուս մեծ մշակույթի և գրականության կենսատողջ ազդեցությունը: Ամրացավ հայ ժողովրդի կապը և բարեկամությունը ռուս մեծ ժողովրդի հետ»:

ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ



ՑՈՒՑԱԿ
ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ՆՈՐ ՍՏԱՑՎԱԾ ՁԵՌԱԳՐԵՐԻ*

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

ՅԻ (մեծ ծաղկագրեր—Ն. Մ.) Քրիստոսի ծառայ Տէր Եփրեմ Կաթողիկոս (15 մմ. երկարությամբ մեծ երկաթագրեր, ապա ամբողջ տեքստը մանր նոտրագրով—Ն. Մ.) ամենայն Հայոց, և Ծայրագոյն Պատրիարգ Աստուածայնոյ և Առաքելական Եկեղեցւոյ Քրիստոսի, նաև լուսակերտ և երկնանման մեծի Աթոռոյս սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի: Քահանայապետական բազմապատիկ օրհնութեամբ և առատագոյն սիրով ամենասուրբ Հոգւոյն Աստուծոյ մատուցանեմք զկենդանարար սուրբ ողջոյն Քրիստոսական ամենաբարեպաշտ նախածանօթ սիրելեացդ մերոց և յատուկ երախտաւոր և բարերար հարազատ որդւոցդ սրբոյ Լուսաւորչին և մայր Աթոռոյ նորա, որք կայք պանդխտացեալ ի զանազան քաղաքս և ի գաւառս Հնդկաստանու արժանապատիւ մաքրագործ Քահանայից Աւագաց և Երկրորդաց, և բոլոր հոգևորական դասուց, պայծառափայլ ազգասէր և բարեսէր: Իշխանաց, պատուելի Հոգաբարձուաց, հաւատարիմ Գանձապետաց և Երիցփոխաց, հանճարեղ ..... վայելչագործ ..... բարեպաշտու ..... և ազնուա..... Տիկնաց և Տանտիկնաց ..... օրհնեալ Ժողովրդուոց մեծաց և փոքունց, արանց և կանանց, ծերոց և տղայոց և ամենայն չափու և հասակի խնդալ ի Տէր մեր Յիսուս Քրիստոս յոյսն ամենայն հաւատացելոց:

Շնորհք, սէր, ողորմութիւն, խաղաղութիւն և ամենաքաղցր մարդասիրութիւն սրբոյ Երրորդութեանն՝ հանդերձ մայրական շնորհօք միածնաէջ սրբոյ Աթոռոյս և փրկագործ զօրութեամբ քրիստոսամուխ կենսահիրաշ սրբոյ Գեղարդեանն և շնորհաբաշխ Աջոյ սրբոյ Լուսաւորչին, և շնորհատու դամբարանաց սրբոց Հռիփսիմեանց և Գայիանեանց կուսանացն, և ամենայն սքանչելաբուղխ Մասանց և Սրբութեանց՝ որք աստանօր, բազմազեղ առատութեամբ ծաւալեսցի ի վերայ հոգւոց և մարմնոց ձեր ամենեցուն, և ընդ ձեզ բնակեսցի յաւիտեան, և շնորհազարդ փայլմամբ փայլեցուսցէ զձեզ ամենայն յաջողութեամբ բարեաց, ամէն:

Որոց և գիտութիւն լիցի, զի բազմադիմի երախտիք ձեր և երանելի նախնեաց ձերոց՝ որ յաղագս պայծառազարդութեան հաւատոյ մօրն ձեր լուսոյ երկնանման տաճարին Աստուծոյ սրբոյ Կաթուղիկէ Էջմիածնի՝ իրաւի, յորդորեն զմեզ հանապազ բոլոր միաբանութեամբ յիշել յաղօթս մեր զյատուկ երախտաւորսդ և զբարերարսդ հանդերձ անդադար օրհնութեամբ, որպէս և գրեալ իսկ է՝ յիշատակն արդարոց օրհնութեամբ եղիցի: Ապաքէն և յայսմ նեղութեան ժամանակի մերում վերստին զձեզ միայն յոյս ունելով յետ Աստուծոյ, հրաւիրեմք յօգնականութիւն մեզ յաղագս նորոգութեան Աստուածակերտ սրբոյ Գահիս Քրիստոսի, և երից հրաշակերտ վանացն սրբոյն Հռիփսիմեայ և Գայիանեայ և Շողակաթին. քանզի ի ժամանակս պատերազմական խռովութեանցն հիւսիսայնոցն ընդ պարսից՝ յիշեալ երեք սուրբ վանքն և մանաւանդ Գլուխն և Մայրն սոցա և համայն Եկեղեցեաց և Վանորէից Հայաստանեայց՝ սրբոյ Կաթուղիկէն Էջմիածնին՝ թէ յորպիսի աւերութիւն և յանշքութիւն հասին յամենայն դիմաց, արդարև չեմք բաւական ընդ գրով արկանել. ուստի օամենայն ի բաց թողեալ, զաղէտս զայս միայն յայտնել ձեզ սակաւուք ի դէպ վարկանիմք, զի տանիքն սրբոյ Աթոռոյս՝ որք ամ ընդ ամէ անխափան ձիթեալ լինէին, և յամս քանիս ընդ որում ի պատճառս պատերազմական խռովութեանն, անխընամ էին մնացեալ և չէին ձիթեալ, և մանաւանդ բազմութիւնք զօրաց ևս ելեալ ի տանիսն, ի ձմերային եղանակին վասն սաստիկ ցրտութեանն յաւուրս քանիս հուր էին վառեալ ի տեղիս տեղիս, վասն որոյ թէ ի պատճառս այնպէս ամս քանիս անխնամ մնալոյն, և թէ զօրացն հուր վառելոյն, և

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1964 թվականի № № Ը—Թ-ից, ԺԲ-ից, 1965 թվականի № № Ը—Ժ-ից, 1968 թվականի № Է-ից, 1970 թվականի № № Դ—Ե-ից, Ժ-ից, ԺԲ-ից, 1971 թվականի № № Ե—Ը-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1972 թվականի № № Ա—Բ-ից, Դ-ից, 1973 թվականի № № Ա—Գ-ից, Ը-ից, 1974 թվականի № № Գ-ից, Է—Ը-ից, 1975 թվականի № № Ա-ից, Գ-ից, ԺԱ—ԺԲ-ից, 1976 թվականի № № Բ—Ե-ից, Է—Թ-ից, ԺԲ-ից, 1977 թվականի № № Գ—Ժ-ից և 1978 թվականի № Ա-ից:

թէ բարինքն փութիր գոլոյն՝ գրեալ երեսք տանեացն յանձին էին դաբձեալ։ Իսկ ի գալն մեր ի սուրբ Աթոռս, թէպէտ մինչև ցայսոր կարաձիրով և այլ ինարիւր կարողացար անցուցանել, բայց ջերմութիւն արեգականն և ցրտութիւն եղանակի ձմեռանն հետզհետէ անպիտան արարին և զայն ամենայն ինարս. վասն այսորիկ այժմ ապրքան խախտեալ է տանիցն սրբոյ Գահին, մինչև առատօրէն անցանել անձրեւաց ի ներքո Տաճարին, և խանգարել զոսկեկնար գեղեցիկ ծաղկանցն և պատկերացն զվայելչութիւն և զպայծառութիւն, որովք թէպէտ ի յառաջնումն ևս զարդարեալ էր, բայց յետոյ հոգեկոչ Սրբազնակատար Ղուկաս Կաթուղիկոսն ի վերուստ մինչև ի խոնարհ յոյժ վայելչապէս զարդարեալ ևս ոսկենկար գեղեցիկ ծաղկօք և խորհրդական պատկերօք ի պայծառութիւն երկնահաճոյէս մայր սուրբ Աթոռոյն, և ի յիշատակ պարծանս համօրէն ազգի հայոց. իսկ այժմ յաղագս յիշեալ պատճառացն խանգարեալ են ամենայն ծաղկունք և պատկերք վայելչութեան սորա, և հետզհետէ մերձ են ջնջիլ և անհետ լինիլ իսպառ, մինչև ճմլել արդարև զսիրտս ամենայն բարեպաշտ տեսողաց և լսողաց։

Վասն որոյ ի խոհուրդ մտեալ, զրաւմակերպ պակասութիւնս, մեր ի բաց թողաք, և յաւիտենական յիշատակ մնալի նորոգութեանն սրբոյ Տաճարին Աստուծոյ միայն ուշ եդեալ, զյատկացեալ և զլուսաւոր պատուական օրինեալ ազգդ ջուղայեցւոց առ այն ապատան և ապաւէն մեզ կալաք։ Իրաւի, գիտեմք թէպէտ ..... զի որպէս ամենայն Ազգ մեր մանաւանդ եղեալքն ի տէրութիւնս Հագարացւոցն ուշորմելի են լեալ զանազան նեղութեանամբ, նոյնպէս և դուք սիրելիքդ մեր ևս չէք առանց նեղութեան ի վշտաբեր ժամանակիս յայսմիկ, բայց վերստին զլոյս մեր առ ձեզ ձգելով յետ Աստուծոյ, օգնութիւն ի ձէնջ միայն խնդրել արժան համարեցաք։

Որոյ վասն ահա յատկապէս իմստասիանի կարգեալ զարգելի Վրթանէս Արքեպիսկոպոս նախածանօք սիրելին ձեր և հոգեմին հարազատ որդեակն մեր առաքեցաք այսու օրինամատոյց կոնդակաւ առ յատուկ երախտաւորսդ և բարեբարդ մեր։ Ապաքէն ուրեմն աղաչեմք զամենեսեանն զձեզ գթովն Քրիստոսի, զի իրաքանչիւրդ ի ձէնջ, արբ և կանայք, մեծք և փոքունք, առ հասարակ ըստ չափու կարողութեան ձերում վառեալ Աստուածամանոյ բարեասչտութեամբ և ճշմարիտ ծնողասիրութեամբ ժամանեսջիք մեզ յօգնութիւն վասն այնպիսի բազմաձախ գործառնութեանց իւրոց, որոց ամենից ծախսն՝ թէ նորոգութեան տաճարացն, թէ ծաղկել տալոյն, թէ խնկեղալ կապելոյն և թէ այլն՝ ըստ նկատողութեան հնուտ ճարտարապետացն՝ լինելոց է աւելի քան հարիւր հազար ռուփի. թողում ասել և զծախսն՝ որք յաղագս նորոգութեան յիշեալ երից սուրբ վանացն։ Նման որպէս բոլոր աշխարհի, նոյնպէս և ձեզ յայտնի և լաւապէսն, թէ սուրբ Աթոռս ի բազում ժամանակս որքան ճախորդութիւնս կրեաց, և յոր աստիճան աւերութեան և պակասութեան եհաս յաստենայն դիմաց թէ ըստ հոգևորին և թէ շատ մարմնաւորին, այժմ ըստ հոգևորին վայելչացեալ է թէպէտ և օր քան զօր ունի վայելչանալ շնորհօքն Աստուծոյ գեր քան զառաջինն, բայց ըստ մարմնաւորին իսպառ դադարկացեալ գոլով, անշքացեալ է յամենայն կուսէ, մինչ զի և ամենայն կառավարութեանց զհոգսն և զպիտոյսն պարտաւք հոգամք և կառավարեմք, որպէս յաւ ևս կարէ պատմել ձեզ ի բերան յիշեալ Վրթանէս Արքեպիսկոպոս սիրելին մեր, ուստի նկատելով ի հարկն փութապէս նորոգելոյ սրբոյ Տանս, յայսպիսի պակասաւոր ժամանակի մերում հարկադրեալ լինիմք, զի ի սկզբան ապրեանս ներկայ ամի՝ վերստին բարական պարտս մեր առնոյ և սկիզբն առնել շինութեան և նորոգութեան սրբոյ Տաճարին մինչև հասցէ ով առ մեզ ձեր օգնականութեան նուէրքն, որովք կարող լիցուք հատուցանել ով զնոյն պարտս։ Եւ այս սակս վաղվաղեմք սկիզբն առնելոյ, զի եթէ աւելի յետաձգութիւն լիցի, գրեթէ իսպառ ունի քակտիլ և խանգարիլ, և յայնժամ մի ծախսն լինելոց է կրկնապատիկ և եռապատիկ, իսկ օր յառաջ նորոգելովն՝ համարեա թէ նոր ի նորոյ ունի կանգնիլ սուրբ Տաճարն ի յաւիտենական յիշատակ ձեզ և որդւոց ձերոց հաստատուն արձանագրութեամբ պանծալի անուանց իւրաքանչիւր նուիրողաց զնուէրս օգնականութեան։

Զայսոսիկ գիտելով ձեր փոքր ի շատէ, մի յաւաղեսջիք ուրեմն սիրելիք օգնական լինիլ մեզ առ նոյն ջերմեռանդ նուիրօք ձեռով, զորս և յանձնեսջիք միամտութեամբ ի ձեռս Վրթանէս Արքեպիսկոպոս հարազատ որդեկին մերոյ, որ անկորուստ երանակաւ ունի հասուցանել մեզ ով ոչ անագան։

Իսկ մեք աղօթս առնեմք բոլոր միաբանութեամբ, զի ամենարարին Աստուած գրեսցէ զբարի անուանս ձեր ի դպրութեան կենաց և զյիշատակութիւն ձեր և որդւոց ձերոց և ամենայն ազգի և ազգատոհմի ձերոյ պահեսցէ հաստատուն մինչև ցկատարած աշխարհի ի պարծանս սրբոյ Լուսաւորչին և մայր Աթոռոյ նորա և մեր և ամենայն ազգի և եկեղեցւոյ Հայաստանեայց, և զհոգիս երանելի նախնեաց ձերոց և ամենայն հին և նոր ննջեցելոցն լուսացարդեալ պահեսցէ յերանաւէտ կեանս յաւիտենից ընդ սուրբս և ընդ սիրելիս անուան իւրոյ։ Ողջ լերուք և շնորհք Տեառն Աստուծոյ եղիցի ընդ ձեզ և ընդ ամենայն ձերայինսն միշտ, ամէն։

Վասն ձեր Աղօթարար
Եփրեմ Կաթուղիկոս

(Այս վերջին հինգ բառերը գրված են կոնդակի պատվիրատու Եփրեմ կաթողիկոսի ձեռքով)։
Ճամի Տեառն 1815, օգոստոսի 30։ Ի սուրբ Կաթուղիկէն Էջմիածին։

ՀԻՇԱՏԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

(Կոնդակի վերևի մասում կա ձվաձև փոքրիկ մի կնիք, 3×1.5 սմ. չափերով, որի վրա հազիվ ընթերցվում են հետևյալ բառերը)
«..... գրական թանգարան»։

(Շարունակելի)

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ... ԳՐԱԴԱՐԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ կոնդակը Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի կազմավորման 80-ամյակի առթիվ 3
Վեհափառ Հայրապետի խոսքը Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի տարեկան թեմական պատգամավորական ժողովին 5
Վեհափառ Հայրապետի խոսքը Հյուսիսային Ամերիկայի հայոց արևելյան թեմի հոգևորականաց համագումարին 7
Հաղորդագրություն 9
Ապրիլյան եղեռնի 63-րդ տարելիցը Մայր Աթոռում 10
ԱՐՇԱԼՈՒՅՍ ՄԱՐԳԱՐՅԱՆ—Քարե պատարագ 12
Մաեերգ նահատակաց (նոտա, խոսք՝ Վահան Թեքեյանի, երաժշտություն՝ Ն. Թահմիզյանի) 13
ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 16
Ա. Հ.—Հանգիստ տեր Բաբգեն արքեպիսկոպոս Ապատյանի 19
Քահանայական ձեռնադրություն Մայր Աթոռում 23
ԱԹԱՆԱՍ ՔԱՀԱՆԱ ՄՈՎՍԻՍՅԱՆ—Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն հոգևոր ճեմարանում 26
Վարդապետական աստիճանի տվչություն 29
Ա. ՀԱՏԻՏՅԱՆ—Սուրբ Հովհան Ոսկեբերան հայրապետ Անտիոքացի . . . 31
Ագաթանգեղոսի Պատմություն հայոց. Վարդապետություն սուրբ Գրիգորի . . 39
ՎԱՐԱԶԴԱՏ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ—Սուրբ Էջմիածնի Մայր տաճարի հարավային զանգակատան վերականգնումը 53
ԿԱՄՍԱՐ ԳՐԻԳՈՐՅԱՆ—Ս. Էջմիածինը ռուս մարդկանց ճանապարհորդական նոթերում ու հուշերում 57
Ցուցակ Մայր Աթոռ ս. Էջմիածնի նոր ստացված ձեռագրերի 63

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин. Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine», Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 13.4.1978 թ.: Ստորագրված է տպագրության 19.5.1978 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84 1/8, պատվեր 294:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.

ՀԱՅԿ.ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ